



Հիմնադիր և հրատարակիչ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 91 2016

ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ
ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԴԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1997 ԹՎԱԿԱՆԻՑ

Էմիլ Բաբայան ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, Հայաստանի ամերիկյան համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ավագ դասախոս, (խորհրդի նախագահ)

Աշոտ Եսայան ՀՀ գլխավոր դատախազի օգնական, Խ.Արովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի դասախոս, դոցենտ, (գլխավոր խմբագիր)

Դավիթ Մելքոնյան ՀՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

Մհեր Հակոբյան ՀՀ գլխավոր դատախազության իրավական ապահովման և եվրաինտեգրման բաժնի դատախազ, իրավ. գիտ. թեկնածու

Գևորգ Դանիելյան ՀՀ սահմանադրական դատարանի խորհրդական, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Վահրամ Շահինյան ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ, իրավ. գիտ. թեկնածու (համաձայնությամբ)

Հովհաննես Սյրեփանյան ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Գառնիկ Սաֆարյան ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Արման Թաթոյան ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Ռուբեն Մելիքյան Արդարադատության ակադեմիայի ռեկտոր, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.)ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Խմբագրության հասցեն.
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռախոս՝ 511 530, ֆաքս՝ 585 152
Էլ. հասցե՝ orinakanutyun@prosecutor.am
www.prosecutor.am
ISSN 1829-4219

© Համակարգչային շարվածքը,
ոճը, տառաձևերը և էջադրումը՝
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ»

Հանձնված է արտադրության՝ 15.03.2016թ.
Ֆորմատ՝ 60x84 1/8
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 4,5 պայմ. մամուլ
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է «Աստղիկ Գրատուն»
հրատարակչության տպարանում
Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ», 2016թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐ	
Դասային աստիճանի շնորհում ՀՀ գլխավոր դատախազին	3
ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ	
ՀՀ գլխավոր դատախազի հրամաններ	4
ՀՀ ԴԱՏԱԽԱՏՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԳԻԱՅԻ ՆԻՍՏ	
ՀՀ Սահմանադրության փոփոխության հանրաքվե.....	5
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՄԻԱ	
Դիպլոմներ Արդարադատության ակադեմիայի 2015 թվականի շրջանավարտներին	7
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅԵՐ	
Գ. Կոստանյանն աշխատանքային այցով մեկնել է Արցախ	9
ՀՀ գլխավոր դատախազի աշխատանքային այցը Ղազախստան	9
ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ	
ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական խմբին	10
ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է ՀՀ-ում ԱՄՆ դեսպանին	11
ՀՀ գլխավոր դատախազի տեղակալն ընդունել է ԱՊՀ դիտորդական առաքելության ղեկավարին	12
ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ	
Արա Դալլաքյան Ինքնասպանության դատաբժշկական, քրեաիրավական և քրեաբանական բնութագիրը	13
ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ	
Լիլիթ Հովսեփյան Հանցավոր վարքի նախադրյալների ձևավորումը	19
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ	
Արթուր Ղամբարյան, Քնարիկ Ավոյան Սուբյեկտիվ իրավունքից հրաժարումը և իրավաչափության պայմանները	23
ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ	
Արթուր Նազարեթյան Վճռաբեկ դատարանի լիազորությունները	34
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ	
Աիդա Թաղևոսյան Քրեական վարույթի հանրային մասնակիցների մասնակցությունը բացառող հանգամանքների քրեադատավարական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում	41
ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ	
Արուս Հայրապետյան Առևտրային գաղտնիքի կապակցությամբ առաջացող հարաբերությունների սուբյեկտային կազմի յուրահատկությունները	48
ՀԱՅ ԻՐԱՎԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ	
Ռազմիկ Մարիկյան Հայ կանոնական իրավունքի օրինակարգումը (կոդիֆիկացիա)	57
ՄՈՒՆԻՑԻՊԱԼ ԻՐԱՎՈՒՆՔ	
Նաիրա Ալավերդյան Տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և դրանց պաշտոնյաների պատասխանատվությունը (մունիցիպալ պատասխանատվությունը) շրջակա միջավայրի պահպանության բնագավառում ըստ ՀՀ օրենսդրության	62
ՍԵՂՄԱԳՐԵՐ	
Սեղմագրեր / Абстракты / Abstracts	67
ՀՀ ԴԱՏԱԽԱՏՈՒԹՅԱՆ ՕՐՀՆԵՐԳԸ	
Հայաստանի դատախազներ	76



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ
Գ.Ս. ԿՈՍՏԱՆՅԱՆԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԻ
ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ
ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 16-րդ կետով և հիմք ընդունելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը՝ ո Ր ո շ ու մ Ե մ.

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Գևորգ Սուրիկի ԿՈՍՏԱՆՅԱՆԻՆ շնորհել արդարադատության երկրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՍԱՐԳՍՅԱՆ

2015թ. Դեկտեմբերի 28
Երևան
ՆՀ-862-Ա

*«Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսի խմբագրական խորհուրդն իր և դատախազության համակարգի բոլոր աշխատակիցների անունից շնորհավորում է ՀՀ գլխավոր դատախազ **Գևորգ Կոստանյանին**՝ մաղթելով նրան բեղմնավոր աշխատանք, նորանոր հաջողություններ և անսպառ եռանդ ՀՀ դատախազության ու մեր պետության առջև ծառայած խնդիրների լուծման գործում:*



ՀՀ ՉԻՏԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉԻ ՀՐԱՄԱՆՆԵՐ



Ծառայողական պարտականությունները պատշաճ կատարելու համար և ծննդյան օրվա կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազի հրամանով ՀՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ **Դ.Մելքոնյանը** պարգևատրվել է **հուշանվեր-ժամացույցով**:

*«Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսի խմբագրական խորհուրդը շնորհավորում է ՀՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ, «Օրինականություն» հանդեսի խմբագրական խորհրդի անդամ **Դ.Մելքոնյանին** ծննդյան տարեդարձի առթիվ՝ մաղթելով նրան առողջություն, երջանկություն և աշխատանքային նոր նվաճումներ:*

Օրինականության, իրավակարգի ամրապնդման, հանցավորության դեմ պայքարի գործում ներդրած ավանդի, ՀՀ դատախազության հետ սերտ համագործակցություն ապահովելու համար և ՀՀ ազգային անվտանգության մարմինների աշխատողի օրվա կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազի հրամանով ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն, գեներալ-գնդապետ **Գ.Հակոբյանը** պարգևատրվել է **հուշանվերով**, իսկ նույն ծառայության աշխատակիցներ՝ գնդապետ **Ա.Աղաբաբյանը**, մայր **Կ.Հովհաննիսյանը** և կապիտան **Ս.Ոսկանյանը** պարգևատրվել են **«Համագործակցության ամրապնդման համար»** մեդալով:

Փոխգնդապետ **Ն.Սաղյանին** և մայր **Հ.Հովհաննիսյանին** հայտարարվել է **շնորհակալություն**:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 91 2016



*«Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսի խմբագրական խորհուրդն իր և դատախազության համակարգի բոլոր աշխատակիցների անունից շնորհավորում է ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ **Արմեն Հարությունյանին** ծննդյան տարեդարձի առթիվ՝ մաղթելով նրան քաջառողջություն, աշխատանքային անսպառ եռանդ ու բազում հաջողություններ:*

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔԿԵ



ՀՀ գլխավոր դատախազությունում 2015 թվականի նոյեմբերի 23-ին տեղի է ունեցել կոլեգիայի նիստ, որը վարել է ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանը: Նիստում, ի թիվս այլ հարցերի քննարկվել են դեկտեմբերի 6-ին կայանալիք ՀՀ Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի ընթացքում դատախազական լիազորությունների իրականացմանն առնչվող հարցեր: ՀՀ գլխավոր դատախազը հատուկ ընդգծել է նախընտրական, ընտրական և հետընտրական շրջանում ՀՀ քաղաքացիների ընտրական իրավունքի իրացման՝ այդ թվում զանգվածային միջոցառումների միջոցով իրենց դիրքորոշումն արտահայտելու կարևորությունը և այդ գործընթացներին ապ-

օրինի որևէ միջամտության անթույլատրելիությունը: ՀՀ գլխավոր դատախազը հանձնարարել է, որ յուրաքանչյուր նման ահազանգով, հիմքերի առկայության դեպքում, դրանց տրվի համապատասխան քրեաիրավական գնահատական: Գ. Կոստանյանը հանձնարարել է նաև պատշաճ հսկողություն իրականացնել՝ իրավապահ մարմինների կողմից զանգվածային միջոցառումների, ինչպես նաև ողջ ընտրական գործընթացի օրինականությունն ապահովելուն ուղղված գործողությունների նկատմամբ, կազմակերպելու համար բնականոն ընտրական գործընթացի իրականացումը: ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարությամբ ստեղծվել է համապատասխան աշխատանքային խումբ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և ՀՀ գլխավոր դատախազի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ՀՀ Սահմանադրական դատարանի 17 նոյեմբերի 2015թ. ՍԳՈ - 1236 որոշումը

ՀՀ գլխավոր դատախազության կոլեգիայի ընդլայնված նիստում քննարկվել է Քր. դատ. օր.-ի 21-րդ հոդվածի 4-րդ մասի ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի դիմումի քննու-

թյան արդյունքում ՀՀ Սահմանադրական դատարանի 19.11.2015թ. կայացրած **որոշումը**¹: Իր որոշմամբ Սահմանադրական դատարանը սահմանել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասը համա-

¹ Որոշման ամբողջական տեքստի կարելի է ծանոթանալ <http://www.concourt.am/armenian/decisions/common/2015/pdf/sdv-1236.pdf> հղումով

պատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: ՍԴ որոշման եզրափակիչ մասը սահմանում է.



«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է հետևյալին.

առաջին՝ այն դեպքերում, երբ հսկող դատախազը վերացրել է քրեական գործը կարճելու, քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը և քրեական դատավարության օրենսգրքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում տվել է կոնկրետ ցուցումներ կամ հանձնարարություններ, գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին նոր որոշում հնարավոր է կայացնել միայն իրավասու դատախազի կողմից տրված ցուցումների կամ հանձնարարությունների պարտադիր կատարման պարագայում,

երկրորդ՝ մինչդատական վարույթում հետաքննության մարմնից, քննիչից պահանջված նյութերը, փաստաթղթերը, քրեական գործը

հսկողության նպատակով դատախազին տրամադրելու վերաբերյալ վերջինիս պահանջի կատարումը պետք է իրականացվի **անհապաղ, երրորդ՝** մինչդատական վարույթում դատախազական հսկողության շրջանակներում Սահմանադրությամբ և օրենքով ՀՀ գլխավոր դատախազին վերապահված լիազորությունների իրականացման արդյունքում ընդունված որոշումները պետք է դիտարկել որպես **վերջնական և որևէ պայմանավորվածության մեջ չընկնող հսկող դատախազի կողմից նման որոշում ընդունված կամ չընդունված լինելու հանգամանքի հետ:**

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից»:



ՀՀ գլխավոր դատախազը դատախազության ստորաբաժանումների ղեկավարներին և մարզերի դատախազներին վերոնշյալ որոշումից բխող համապատասխան հանձնարարականներ է տվել: Նիստին մասնակցել են նաև նախաքննական մարմինների ներկայացուցիչները:



ԴԻՊԼՈՄՆԵՐ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ



Դեկտեմբերի 25-ին Արդարադատության ակադեմիայում տեղի ունեցավ հանդիսավոր միջոցառում՝ նվիրված Ակադեմիայի 2015 թվականի ունկնդիրների մասնագիտական պատրաստման դասընթացի ավարտին: Հանդիսությանը ներկա էին ՀՀ արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանը, ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանը, ՀՀ դատական իշխանության ղեկավարներ, Ակադեմիայի դասախոսներ, հյուրեր:

Ակադեմիայի ռեկտոր Ռուբեն Մելիքյանը շնորհավորեց և դիպլոմներ հանձնեց Ակադե-

պատրաստում է անցել դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված 14 անձ, որոնցից 3-ը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից:

«Այսօր ամփոփում ենք ուսումնական հերթական շրջափուլը և մեծ լավատեսությամբ քայլում առաջ: 2015 թվականին կարողացանք որոշակիորեն ամփոփել 2014 թվականի արդյունքները, այն բացթողումները, թերությունները, որոնք ունեինք և ավելի մեծ ծավալով ուսումնասիրել մեր գործընկերների փորձը: 2015 թվականին ավելի հարթ տարի ունեցանք, ինչը մեզ համար լավատեսության առիթ է տալիս: Մենք պատրաստվում ենք շարունակական կատարելագործել մեր ուսումնական ծրագրերը, ուսումնական նյութերը և դասավանդման մեթոդաբանությունը, դրանք համապատասխանեցնել օրվա արդիական խնդիրներին և պահանջներին, կրթության ժամանակակից տեխնոլոգիաներին», -իր ելույթում նշեց ակադեմիայի ռեկտոր Ռ. Մելիքյանը, ապա ավելացրեց. «Կրթությունն այն ոլորտն է, որտեղ պարտվողներ չկան, բոլորը շահող են: Կրթությունն այն ոլորտն է, որտեղ մենք միայն բարիք ենք ստեղծում և մեր լավ աշխատանքն ընդամենը բարիքի ծավալն է մեծացնում»:

Շնորհավորելով ունկնդիր-շրջանավարտներին՝ ՀՀ արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանը հորդորեց մղումներում լինել ազնիվ, որոշումներում՝ անաչառ, դատե-



միայի երկրորդ սերնդի շրջանավարտներ՝ դատավորների և դատախազների թեկնածուներին:

Այս տարի Արդարադատության ակադեմիայում շուրջ 9.5 ամսվա մասնագիտական

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 91 2016

լուց էլ՝ արդար: Նախարարը նաև երախտիքի և գնահատանքի խոսքեր ասաց՝ ուղղված Ար-



դարադատության ակադեմիային և ռեկտորին: «Արդարադատության ակադեմիայի ռեկտոր պարոն Մելիքյանի անհատական ջանքերի և նվիրումի շնորհիվ է, որ այսօր փաստում ենք Արդարադատության ակադեմիայի կայացած լինելը», - նշեց ՀՀ արդարադատության նախարարը:

ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանի կարծիքով ևս այսօր Արդարադատության ակադեմիան ունակ է որակյալ կադրեր պատրաստել և վերապատրաստել մեր արդարա-



դատության համակարգի համար, ինչը, ըստ նրա, առաջին հերթին ակադեմիայի ռեկտոր պարոն Մելիքյանի ձեռքբերումն է:

«Կարճ ժամանակահատվածում Արդարադատության ակադեմիան կայացավ և այն այսօր դատական ու դատախազական համակարգերի համար անկասկած բարիքներ է բերում», - իր ելույթում նշեց ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Դավիթ Ավետիսյանը:

Նշենք, որ Արդարադատության ակադեմիայի ունկնդիրների՝ դատավորի և դատախազի թեկնածուների ուսուցումն իրականացվել է 2015թ. փետրվարի 23-ից դեկտեմբերի 11-ը՝



հինգ հատվածով (ներառյալ ավելի քան 4 ամիս տևողությամբ փորձաշրջանը): Ուսումնառության ժամկետի տևողությունը կազմել է 1230 ակադեմիական ժամ, որից 400 ժամը դասընթացներն էին, 40 ժամը՝ քննաշրջանը, 770 ժամը՝ փորձաշրջանը, 20 ժամը՝ հրավիրյալ մասնագետների դասախոսությունների ժամաքանակը:

Տեղեկացնենք, որ ուսուցումն ավարտած ունկնդիրների նշանակումը կատարվելու է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:



Գ. ԿՈՍՏԱՆՅԱՆՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՈՎ ՄԵԿՆԵԼ Է ԱՐՉԱԽ

ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանն աշխատանքային այցով մեկնել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն: Այցի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանը և ՀՀ զինվորական դատախազ, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Արտավազը Հարությունյանը հանդիպել են ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի հետ: Հանդիպմանը մասնակցել են նաև ԼՂՀ գլխավոր դատախազ Արթուր Մոսիյանը և պաշտպանության նախարար Լևոն Մնացականյանը: Կողմերը քննարկել են ՀՀ և ԼՂՀ դատախազությունների միջև համագործակցությանն առնչվող հարցերի լայն շրջանակ:

ՀՀ գլխավոր դատախազի հրամանով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահ **Բ.Սահակյանը** պարզևատրվել է **հուշանվերով**: ՀՀ դատախազության հետ սերտ համագործակցություն ապահովելու համար և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատախազության օրվա կապակցությամբ գլխավոր դատախազ **Ա.Մոսիյանը** պարզևատրվել է **հուշանվերով**, ԼՂՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն, սեփականության և տնտեսական

գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով բաժնի պետ **Ա.Գալստյանը**, ԼՂՀ գլխավոր դատախազության կազմա-



The Office of the NKR President

կերպա-վերահսկողական, վիճակագրության, վերլուծության, իրավական ապահովման, միջազգային կապերի և անձնակազմի հարցերով բաժնի պետ **Կ.Սաֆարյանը**, ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի դատախազի տեղակալ **Ա.Գրիգորյանը** պարզևատրվել են «Համագործակցության ամրապնդման համար» մեդալով:

ՀՀ ՂԵՄԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՈՎ ԴԱԶԱԽՍԱՆ

ՀՀ գլխավոր դատախազ Գ. Կոստանյանն աշխատանքային այցով մեկնել է Ղազախստան: Աստանայում կայացել է ՀՀ գլխավոր դատախազ Գ. Կոստանյանի և Ղազախստանի Հան-



րապետության գլխավոր դատախազ Ա. Դաուբաևի հանդիպումը: Կողմերը քննարկել են երկու երկրների դատախազությունների միջև համագործակցությանն առնչվող հարցերի լայն շրջանակ:

ՀՀ գլխավոր դատախազի հրամանով Ղազախստանի Հանրապետության գլխավոր դատախազ **Ա.Դաուբաևը** պարզևատրվել է «Հուշանվերով և հուշամեդալ համալիրով»: Աստանա քաղաքի դատախազ **Ս.Բեկբոսունովը**, Կոստանայի շրջանի դատախազ **Մ.Կախբաևովը**, Կիզիլորդայի շրջանի դատախազ **Ս.Նուրպեյիսովը** պարզևատրվել են «Հուշանվեր նկարով»: Ղազախստանի Հանրապետության գլխավոր դատախազի առաջին տեղակալ **Ի.Մերկելը** պարզևատրվել է «Հուշամեդալների համա-

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 91 2016

լիրով»: Մանգիստաուսկ շրջանի դատախազ **Դ.Սարտաևը**, Միջազգային համագործակցության դեպարտամենտի ղեկավար **Ս.Դոսպոլովը**, Կիզիլորդայի շրջանի Ակիմ **Կ.Կուշեյբաևը**, Կարմակշինսկի շրջանի Ակիմ **Ս.Մակաշովը**,

Նախագահի լիազոր ներկայացուցիչ **Ս.Կոժանիյազովը** պարգևատրվել են «**Հուշամեդալով**»: Ղազախստանի հայ համայնքի երեք ներկայացուցիչներ պարգևատրվել են «**Անմոռուկ**» հուշանվերով:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՄԲԻՆ



ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանն ընդունել է Սահմանադրական բարեփոխումների հանրաքվեի գործընթացի գնահատման համար Հայաստանում գտնվող ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության փորձագետների խմբի ղեկավար Դուգլաս Ուեյքին և իրավական հարցերով փորձագետ Վասիլ Վաչչանկային:

Հանդիպման ընթացքում քննարկվել են ընտրախախտումների վերաբերյալ ահազանգերի առնչությամբ դատախազության իրականացրած գործողություններին և համապատասխան աշխատանքային խմբի կողմից իրավապահ մարմինների գործունեության նկատմամբ պատշաճ դատախազական հսկողությանն առնչվող հարցեր:

ՀՀ գլխավոր դատախազը նշել է, որ դատախազության կողմից 10.12.2015թ-ի դրությամբ ուսումնասիրվել է 459 ահազանգ, որոնց մի մասն ուղարկվել է ոստիկանություն, մի մասն էլ քննչա-

կան մարմիններ՝ նյութեր նախապատրաստելու համար: Գործընթացը դեռ շարունակվում է:

Աշխատանքային խմբի ղեկավար ՀՀ գլխավոր դատախազության ՀԿԳ քննության վարչության պետ Վ. Մուրադյանը ներկայացրել է ստացած ահազանգերի առավել բնորոշ բնութագրումը, արդեն իսկ հարուցված քրեական գործերը և աշխատանքի կազմակերպման ընդհանուր մեխանիզմը, նշելով, որ գրավոր և փաստարկված դիմումներից բացի ՀՀ իրավապահ մարմինների կողմից ուսումնասիրվում են նաև մամուլի բոլոր հրապարակումները՝ շատ հաճախ նաև նրանք, որոնք հրապարակված են քաղաքացիների անձնական էջերում: Ատերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող ահազանգերը պարտադիր ստանում են իրավական ընթացք:

Գլխավոր դատախազը շեշտել է, որ այս բոլոր քրեական գործերը հարուցվել են հանրաքվեից անմիջապես հետո:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 91 2016

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության ղեկավարը բարձր է գնահատել հանրաքվեի հետ կապված ընտրախախտումները բացահայտելու ուղղությամբ ՀՀ դատախազու-

թյան գործունեությունը՝ միաժամանակ կարևորելով արդյունավետ քննության իրականացումը:

ՀՀ ՉԼԻՍԿՈՐ ԴԱՏԱԽԱԶՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀՀ-ՈՒՄ ԱՄՆ ԴԵՄՊՍԻՆ



ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանն ընդունել է ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Միլսին:

Հանդիպման ընթացքում քննարկվել են ընտրախախտումների վերաբերյալ ահազանգերի առնչությամբ դատախազության իրականացրած գործողություններին և համապատասխան աշխատանքային խմբի կողմից իրավապահ մարմինների գործունեության նկատմամբ պատշաճ դատախազական հսկողությանն առնչվող հարցեր:

Գլխավոր դատախազը շեշտել է, որ հրապարակումների քանակն իրապես մեծաձավալ է, բայց դրանցից որևէ մեկն անուշադրության չի մատնվում:

ԱՄՆ դեսպանը նշել է, որ իրենք նույնպես հետևել են ընտրությունների ողջ ընթացքին և իրավապահ համակարգի իրականացրած գործողություններին: «Ես ողջունում եմ Գլխավոր դատախազության մտադրությունը վերջերս տե-

ղի ունեցած սահմանադրական հանրաքվեի հետ կապված խախտումների վերաբերյալ արժանահավատ հաղորդումները քննության առնելու և, որտեղ անհրաժեշտ է, համապատասխան իրավական միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ», - նշել է ՀՀ-ում ԱՄՆ դեսպանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարին վերաբերող հարցեր, ՀՀ գլխավոր դատախազը նշել է, որ կոռուպցիայի դեմ պայքարը եղել և մնում է դատախազության գործունեության առաջնահերթություններից:

Ռիչարդ Միլսը նշել է, որ ԱՄՆ դեսպանությունը պատրաստ է գործակցել ՀՀ դատախազության հետ ինստիտուցիոնալ կոռուպցիայի դեմ պայքարի ու հակամրցակցային միջավայրի կարգավորման հարցերում, որպեսզի խաղի հավասար պայմանների ապահովմամբ խրախուսվեն օտարերկրյա ներդրումները:

ՀՀ ՉԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉԻ ՏԵՂԱԿԱԼՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԱՊՂ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԴԵԿԱՎԱՐԻՆ



ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա. Հարությունյանն ընդունել է ՀՀ սահմանադրական հանրաքվեի անցկացման դիտարկմանը մասնակցելու նպատակով Երևանում գտնվող ԱՊՀ դիտորդական առաքելության ղեկավար, ԱՊՀ Գործադիր կոմիտեի դիտորդական առաքելության ապահովման բաժնի ղեկավար Եվգենի Սլոբոդային:

Հանդիպմանը քննարկվել են ՀՀ Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի քարոզարշավին վերաբերող հարցեր:

Եվ. Սլոբոդան ներկայացրել է իրենց առաքելության կողմից մինչև հանդիպումը կատարված աշխատանքները, որի արդյունքում իրենք արձանագրել են, որ քարոզարշավն ընթանում է օրենքի շրջանակներում, ՁԼՄ-ների ներկայությամբ և կողմերի հավասար արտահայտվելու իրավունքի ապահովմամբ:

Ա. Հարությունյանը տեղեկացրել է, որ ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարականով ստեղծված աշխատանքային խումբը, հանրաքվեի անցկացման կապակցությամբ քարոզչության շրջանում քաղաքացիների ընտրական ի-

րավունքի իրականացման հետ կապված հնարավոր իրավախախտումների վերաբերյալ հաղորդումները, այդ թվում՝ ՁԼՄ-ների հրապարակումները դարձնում է քննարկման առարկա և դրանցում առերևույթ հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու դեպքում տալիս համապատասխան քրեաիրավական գնահատական, ինչի վերաբերյալ հանրությանը տեղեկատվություն է տրամադրվում ՀՀ դատախազության պաշտոնական կայքի միջոցով: ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը նշել է, որ աշխատանքային խումբը նույն սկզբունքով աշխատելու է նաև քվեարկության իրականացման և հանրաքվեին հաջորդող շրջանում:

ԱՊՀ դիտորդական առաքելության ղեկավարը բարձր է գնահատել հանրաքվեի հետ կապված հնարավոր ընտրախախտումները կանխելու ուղղությամբ ՀՀ դատախազության գործունեությունը: Եվ. Սլոբոդան ողջունել է հատուկ աշխատանքային խմբի ստեղծումը և համոզմունք հայտնել, որ այն բարձր պրոֆեսիոնալիզմով կլուծի իր առջև դրված խնդիրները:

ԱՐԱ ԴԱԼԼԱՔՅԱՆ

ՀՀ ԱՆ «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի Արագածոտնի մարզի բաժնի վարիչ, ԵՊԲՀ-ի դատական բժշկության ամբիոնի դասախոս

ԻՆՔՆԱՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԲԺՇԿԱԿԱՆ, ԲՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԲՐԵԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱՎՐԵՐԸ

Ինքնասպանությունը կամ սուիցիդը (լատիներեն՝ sui՝ ինքն իրեն, caedere՝ սպանել) կանխամտածված ինքն իրեն կյանքից զրկումն է: Առաջին անգամ «ինքնասպանություն» եզրույթը կիրառել է բժիշկ Թոմաս Բրաունը 17-րդ դարում:

Ֆրանսիացի սոցիոլոգ և փիլիսոփա Է. Դյուրկհեյմը (1912 թվական) գտնում էր, որ ինքնասպանությունն այնպիսի գործողություն է, որի հետևանքները սպասելի են, կանխատեսելի են տուժողի համար, և այդ գործողությունը գիտակցված է տուժողի կողմից: Այսինքն՝ ինքնասպանության մասին խոսելիս պետք է հասկանալ, որ այն կանխամտածված (մտածված) գործողություն է սուիցիդենտի (ինքնասպանություն գործող անձի) կողմից: Է. Դյուրկհեյմն իր աշխատություններում տվել է «ինքնասպանություն» հասկացության սահմանումը. «Ինքնասպանություն է կոչվում այն մահացու դեպքը, որը տուժողի կողմից կատարված արարքի հետևանքն է և այդ արարքի հետևանքները նախապես հայտնի են տուժողի համար¹»:

Սուիցիդոլոգ և մահաբան Է. Շնեյդմանի (1994 թվական) կարծիքով ինքնասպանությունն ինքնառչնչացման նպատակով գիտակցված գործողություն է²:

Սուիցիդոլոգ Մ. Ֆարբերը (1968 թվական) տվել է ինքնասպանության առավել պարզ և հստակ սահմանում. «Ինքնասպանությունը գիտակցված, կանխամտածված (մտածված) և արագ ինքն իրեն կյանքից զրկելն է³»:

Հարկ է նշել, որ որոշ հոգեկան հիվանդների մոտ գիտակցված մոտիվացիան (գործոններ, որոնք դրդում են մարդուն իրականացնել

նպատակաուղղված գործողություններ) սովորաբար բացակայում է, ինչից հետևում է, որ ինքն իրեն կյանքից զրկելը ոչ միշտ է, որ ինքնասպանություն կարելի է համարել: Նույնը կարելի է ասել նաև այն որոշ դեպքերի մասին, երբ տուժողը երեխա է (14 տարեկանը չլրացած որոշ անձինք):

Մեր կողմից առաջարկվում է «ինքնասպանություն» հասկացության հետևյալ սահմանումը. «Ինքնասպանությունն ինքն իրեն դիտավորյալ, գիտակցված, չպարտադրված ինքնակամ կյանքից զրկելն է»: Եթե անձն իր կյանքին վերջ տալուց առաջ չի հասկանում, չի գիտակցում, չի կանխատեսում, որ իրեն մահ է սպասվում և սպասվող հետևանքներն անդառնալի են, ապա այս գործողությունը չի կարելի ինքնասպանություն համարել, միգուցե այն պետք է կոչել դժբախտ պատահար:

Այս դեպքում ստացվում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ («Ինքնասպանության հասցնելը») և 111-րդ («Ինքնասպանության հակելը») հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշներն ի հայտ են գալիս այն դեպքում, երբ առկա է հանցավորի կողմից տուժողի մեջ սեփական կյանքին վերջ տալու ցանկություն առաջացնելը և տուժողի կողմից սեփական գործողությունների նկատմամբ դիտավորյալ, գիտակցված մոտեցումն ու չպարտադրված սեփական կամքը:

Վերոգրյալ մոտեցման պարագայում ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ և 111-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է հանդիսանում տուժողի կողմից ինքնասպանություն

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 91 2016

¹ Տե՛ս Дюркгейм Э., “Самоубийство - Социологический этюд”. - 1912, СПб., с. 541.
² Տե՛ս Shneidman E., “Suicide notes reconsidered. Suicidology: contemporary developments”. -NY, 1976. p. 253-278.
³ Տե՛ս Farber M. L., “Theory of Suicide”. - NY, 1968.

կամ ինքնասպանության փորձ կատարելը, այսինքն՝ տուժողի գիտակցված ու չպարտադրված սեփական կամքով գործողությունները պարտադիր պայման են, որպեսզի դրանք որակվեն որպես ինքնասպանություն (ինքնասպանության փորձ) և, հետևաբար, նաև հնարավոր է դառնում հանցավորի արարքը որակել որպես ինքնասպանության հասցնել կամ ինքնասպանության հակել:

Հարկ է նշել, որ որոշ երկրների քրեական օրենսգրքերում առհասարակ բացակայում է «ինքնասպանության հակելը» հոդվածը և առկա է միայն «ինքնասպանության հասցնելը» հոդվածը: Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Իտալական Հանրապետության, Հնդկաստանի Հանրապետության, Ավստրիայի Հանրապետության և այլ երկրների քրեական օրենսգրքերում առանձին նախատեսված են «ինքնասպանության հասցնելը» և «ինքնասպանության հակելը» հոդվածները: Թուրքմենստանի քրեական օրենսգրքում «ինքնասպանության հասցնելը» և «ինքնասպանության հակելը» ներկայացված են մեկ հոդվածով: Ռուսաստանի Դաշնության, Ղազախստանի Հանրապետության, Մոլդովայի Հանրապետության, Տաջիկստանի, Ուկրաինայի, Ուզբեկստանի Հանրապետության, Ադրբեջանի Հանրապետության քրեական օրենսգրքերում առկա է միայն «ինքնասպանության հասցնելը» հոդվածը և բացակայում է «ինքնասպանության հակելը» հոդվածը:

Ինքնասպանությունը լուրջ սոցիալական խնդիր է, որն ունի բազմաթիվ ասպեկտներ՝ հոգեբանական, փիլիսոփայական, էթիկական, դատաբժշկական, քրեաիրավական և այլն:

Ինքնասպանությունների դատաբժշկական և քրեաիրավական կապը հասկանալու համար իրականացրել ենք Երևան քաղաքում գրանցված մահացության կառուցվածքի ուսումնասիրություն:

Մահացության կառուցվածքն ուսումնասիրելու և համեմատելու նպատակով առանձնացրել ենք հետևյալ ցուցանիշները՝ ընդհանուր մահացություն, դատաբժշկական փորձաքննու-

թյան ենթարկված դեպքերով պայմանավորված մահացություն և ինքնասպանություններից մահացություն:

Պարզաբանենք վերոգրյալ ցուցանիշները: Ընդհանուր մահացությունը Երևանում գրանցված բոլոր մահերի թիվն է: Դատաբժշկական փորձաքննության ենթարկված դեպքերով պայմանավորված մահացությունը Երևանում գրանցված բոլոր այն մահերն են, որոնց կապակցությամբ կատարվել են դատաբժշկական փորձաքննություններ, կամ, այլ կերպ ասած, այն դեպքերն են, որոնց վերաբերյալ հետաքննության և նախաքննության մարմինները քննություն են իրականացրել (նախապատրաստվել են նյութեր և քննվել են քրեական գործեր)⁴: Ինքնասպանություններից մահացությունը Երևանում տեղի ունեցած միայն ինքնասպանություններով պայմանավորված մահերի թիվն է:

Ինքնասպանությունների և դատաբժշկական դեպքերի մահացության համեմատական բնութագիրն առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում հատկապես քրեաբանական տեսանկյունից, քանի որ նման ուսումնասիրությամբ հնարավոր կլինի պարզել, թե որքան է կազմում ինքնասպանություններով պայմանավորված մահերի տեսակարար կշիռը դատաբժշկական բոլոր դեպքերի մահացությունում: Բացի դրանից, հնարավոր կլինի նաև պարզել, թե դատաբժշկական փորձագետների կողմից իրականացվող դիակների դատաբժշկական փորձաքննությունների մեջ ինքնասպանությունների դեպքերի տեսակարար կշիռը որքան է կազմում բոլոր մահերի թվի մեջ՝ դատաբժշկական փորձաքննության ենթարկված բոլոր դիակների թվի մեջ:

Մեր կողմից ուսումնասիրվել է ընդհանուր մահացության, դատաբժշկական դեպքերի մահացության, ինքնասպանություններից մահացության ցուցանիշների համեմատական շարժընթացը Երևանում 2003-2012 թվականների ընթացքում: Դրա համար օգտագործվել են «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի «Փորձագետի եզրակացություն»-ներից, գրանցամատյաններից, ՀՀ առողջապահության նախարարության «Ակադեմիկոս

⁴ Դատաբժշկական փորձաքննության ենթարկված դեպքերով պայմանավորված մահացությունն այսուհետև անվանենք դատաբժշկական դեպքերի մահացություն:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 91 2016

Աղյուսակ 2.

Տարի	ՀՀ-ում/ Երևանում	Միջոցառումներ վարչապետության կողմից	Քրեական գործի վերաքննարկում	Վնասներ և վնասներ	Վնասներ և վնասներ	Վնասներ և վնասներ	Վնասներ և վնասներ	Իրականացված			Վնասներ և վնասներ	Վնասներ և վնասներ	Վնասներ և վնասներ	Իրականացված		
								Վնասներ և վնասներ	Վնասներ և վնասներ	Վնասներ և վնասներ				Վնասներ և վնասներ	Վնասներ և վնասներ	
2003թ.	ՀՀ-ում	172	156	16	14	2	11	1	0	0	2	0	0	0	0	0
	Երևանում	74	66	8	8	1	7	0	0	0	0	0	0	0	0	0
2004թ.	ՀՀ-ում	165	144	21	18	3	15	0	1	1	1	1	0	1	0	0
	Երևանում	80	72	8	6	2	4	0	1	1	1	0	0	0	0	0
2005թ.	ՀՀ-ում	162	127	35	29	9	20	0	3	3	0	0	0	0	0	0
	Երևանում	72	58	14	10	6	4	0	1	3	0	0	0	0	0	0
2006թ.	ՀՀ-ում	204	149	55	42	13	28	1	2	10	1	1	0	1	1	1
	Երևանում	79	56	23	17	9	7	1	0	5	1	1	0	1	1	1
2007թ.	ՀՀ-ում	179	125	54	44	21	23	0	0	9	1	1	0	1	1	0
	Երևանում	70	43	27	21	16	5	0	0	5	1	1	0	1	1	0
2008թ.	ՀՀ-ում	157	115	42	31	16	13	1	0	10	1	1	1	1	1	0
	Երևանում	51	27	24	16	9	6	1	0	7	1	1	1	1	1	0
2009թ.	ՀՀ-ում	197	153	44	33	22	10	1	0	8	3	3	0	3	0	0
	Երևանում	74	54	20	14	12	2	0	0	4	2	2	0	2	0	0
2010թ.	ՀՀ-ում	225	157	68	47	29	18	0	1	20	0	0	0	0	0	0
	Երևանում	80	43	37	27	20	7	0	1	9	0	0	0	0	0	0
2011թ.	ՀՀ-ում	195	115	80	59	37	19	2	0	18	3	3	0	3	0	0
	Երևանում	76	33	43	34	18	14	1	0	7	2	2	0	2	0	0
2012թ.	ՀՀ-ում	214	117	97	69	37	27	0	2	25	1	1	0	1	0	0
	Երևանում	73	19	54	38	22	14	0	0	16	0	0	0	0	0	0

Աղյուսակ 2-ում պատկերված է 2003-2012 թվականների ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ և 111-րդ հոդվածներով հարուցված քրեական գործերի և քրեական գործերի հարուցումը մերժված նյութերի (նախապատրաստվող նյութերի) առնչությունն ինքնասպանություններին: Այլ կերպ ասած, այս աղյուսակով պատկերացում է կազմվում այն մասին, թե հետաքննության և նախաքննության մարմիններն ինչպես են վարվել, ինչ մոտեցում են ցուցաբերել ինքնասպանությունների դեպքերին:

Աղյուսակ 2-ում արտացոլված է նաև ՀՀ-ում և Երևանում տեղի ունեցած ինքնասպանությունների բացարձակ քանակը:

Աղյուսակ 2-ում նկարագրված է հետևյալը՝

- 2003-2012 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում և Երևանում բոլոր ինքնասպանությունների քանակը,
- Քրեական գործի հարուցումը մերժված նյութերի քանակը (նախապատրաստվող նյութերի քանակը),
- Հարուցված քրեական գործերի քանակը, որոնցից՝

- Քրեական գործի վարույթը կարճվել է, հետևյալ հիմքով՝
- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով,
- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով,
- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի այլ կետով (մասով):
- Քրեական գործն ուղարկվել է դատարան,
- Տվյալ հաշվետու տարում քննությունը ընթացքում է (գործը չի ավարտվել),
- Քրեական գործը կասեցվել է, հետևյալ հիմքով՝
- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով,
- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի այլ կետով (մասով):

Աղյուսակ 2-ը նշենք նաև տոկոսային հարաբերությամբ ստորև՝ աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3.

Տարի	ՀՀ-ում/ Երևանում	Ինքնասպանությունների ընդհանուր քանակը ՀՀ-ում/Երևանում	Քրեական գործի հարուցումը մերժվել է (նախապատրաստվող նյութեր) ՀՀ-ում/Երևանում	Հարուցվել է քրեական գործ ՀՀ-ում/Երևանում	
2003թ.	ՀՀ-ում	172	90,70%	9,30%	
	Երևանում	74	89,20%	10,80%	
2004թ.	ՀՀ-ում	165	87,30%	12,70%	
	Երևանում	80	90%	10%	
2005թ.	ՀՀ-ում	162	78,40%	21,60%	
	Երևանում	72	80,50%	19,50%	
2006թ.	ՀՀ-ում	204	73%	27%	
	Երևանում	79	70,90%	29,10%	
2007թ.	ՀՀ-ում	179	69,80%	30,20%	
	Երևանում	70	61,40%	38,60%	
2008թ.	ՀՀ-ում	157	73,20%	26,80%	
	Երևանում	51	53,00%	47%	
2009թ.	ՀՀ-ում	197	77,70%	22,30%	
	Երևանում	74	73%	27%	
2010թ.	ՀՀ-ում	225	69,80%	30,20%	
	Երևանում	80	53,80%	46,20%	
2011թ.	ՀՀ-ում	195	59%	41%	
	Երևանում	76	43,40%	56,60%	
2012թ.	ՀՀ-ում	214	54,70%	45,30%	
	Երևանում	73	26%	74%	
Միջին թվաք.			73,3%	26,7%	35,9%

Աղյուսակ 3-ում պատկերված է 2003-2012 թվականների ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ և 111-րդ հոդվածներով հարուցված քրեական գործերի և նախապատրաստված նյութերի առնչությունն ինքնասպանություններին (տոկոսային հարաբերություն), ինչպես նաև, դրանց համեմատությունը Երևանում ու Հայաստանի Հանրապետությունում: Ինչպես երևում է պատկերված տոկոսներից՝ հարուցված քրեական գործերը հիմնականում քիչ տոկոս են կազմում ընդհանուր դեպքերի մեջ՝ համեմատած քրեական գործի հարուցումը մերժված նյութերի հետ: Օրինակ՝ 2003 թվականին Երևանում ընդհանուր 74 ինքնասպանության դեպքի առթիվ հարուցվել է ընդամենը 8 քրեական գործ, կամ նույնն է՝ 10,80%, և նույն տարում քրեական գործի հարուցումը մերժված նյութերը 74 դեպքից 66-ն է, կամ նույնն է՝ 89,20%, իսկ օրինակ 2012 թվականին Երևանում տեղի ունեցած 73 ինքնասպանության դեպքի առթիվ հարուցվել է 54 քրեական գործ, կամ նույնն է՝ 74%, և նույն տարում քրեական գործի հարուցումը մերժված նյութերը 73 դեպքից 19-ն է, կամ նույնն է՝ 26%: 2003-2012 թվականների շարժընթացում հարուցված քրեական գործերի քանակը հիմնականում ավելանում է (հասնելով գագաթնակետին 2012 թվա-

կանին), բացառությամբ 2009 թվականի, երբ այն նվազում է:

Բոլոր տասը տարիների համար հաշվարկելով միջին թվաքանակն արժեքը՝ ստացվում է, որ Երևանում տասը տարվա կտրվածքով ինքնասպանությունների դեպքերի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ և 111-րդ հոդվածներով հարուցվել է քրեական գործ 35,9% դեպքերում և, համապատասխանաբար, քրեական գործի հարուցումը մերժված նյութերին բաժին է ընկնում 64,1%: Հայաստանի Հանրապետությունում տասը տարվա կտրվածքով ինքնասպանությունների դեպքերի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ և 111-րդ հոդվածներով հարուցվել է քրեական գործ 26,7% դեպքերում և, համապատասխանաբար, քրեական գործի հարուցումը մերժված նյութերին բաժին է ընկնում 73,3%: Եթե համեմատենք Երևանի և Հայաստանի Հանրապետության տոկոսային արժեքները, ապա ստացվում է, որ Հայաստանի Հանրապետությունում տասը տարվա կտրվածքով ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ և 111-րդ հոդվածներով հարուցված քրեական գործերի քանակն ավելի քիչ է, քան Երևանում. Երևանում այն 35,9% է, իսկ Հայաստանի Հանրապետությունում՝ 26,7%:



ԼԻԼԻԹ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության նորմատիվ իրավական ակտերի մշակման և իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ, ԽՍ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի զարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնի ասպիրանտ

ՀԱՆՑԱՎՈՐ ՎԱՐՔԻ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Հանցավոր վարքի նախադրյալները (սուբյեկտիվ գործոնները) ունեն առաջացման, կազմավորման և դրսևորման հոգեբանական օրինաչափություններ, զարգացման յուրատիպ շարժընթաց: Վերջինիս հոգեբանա-քրեաբանական բնութագիրը հնարավորություն է տալիս հետևելու անձի հետ կատարվող հոգեբանական (բարոյա-իրավական և այլաբնույթ) փոփոխությունների ընթացքին, ինչն իր հերթին խիստ կարևոր է հանցագործությունների վաղ հոգեբանական կանխարգելման համարժեք միջոցառումներն ընտրելու համար:

Սուբյեկտիվ գործոններն ուսումնասիրելիս անհրաժեշտություն է առաջանում բացահայտել դրանց գենեզիսը (ակունքները): Մարդը չի ծնվում օրինապահ կամ հանցագործ: Այս կամ այն հանցանքը կատարելու միտումը կամ դիրքորոշումը նրա կողմից յուրացվում է իրեն շրջապատող իրականության ազդեցության տակ, կյանքի կոնկրետ պայմաններում: Նրանից, թե ինչպիսին կլինեն այդ պայմանները, ում և ինչի հետ կբախվի անհատն իր կյանքի ընթացքում, կախված է նրա՝ որպես անձնավորություն ձևավորվելուց:

Անձի ձևավորման գործընթացն ընդունված է դիտել որպես սոցիալականացում կամ սոցիալիզացիա: Անձի սոցիալիզացիայի ընթացքում յուրացվում են սոցիալական նորմեր և դերեր, դիրքորոշումներ և այլն, որոնք անհրաժեշտ են անձնավորություն դառնալու համար: Առանձնացնում են առաջնային սոցիալիզացիա կամ երեխայի սոցիալիզացիա և միջանկյալ, որը նշանակում է անցումը պատանեկությունից հասունության, այսինքն՝ 17-18 տարեկանից մինչև 23-25 տարեկանը:

Անձի ձևավորման մեջ հատկապես կարևոր դեր է խաղում առաջնային սոցիալիզացիան,

երբ երեխան դեռ անգիտակցորեն յուրացնում է վարքի ձևերը և օրինակները, մեծերի տիպիկ հակազդումները կյանքի այս կամ այն խնդիրների: Ինչպես ցույց են տալիս հանցագործների անձին և վարքին վերաբերող հոգեբանական հետազոտությունները, նույնիսկ հասուն մարդը հաճախ վերարտադրում է իր վարքում այն, ինչը տպավորվել է իր հոգեկանում մանկության ժամանակ. օրինակ՝ նա կարող է կուպիտ ուժի օգնությամբ լուծել կոնֆլիկտն այնպես, ինչպես դա արել են իր ծնողները: Կարելի է ասել, որ հանցավոր վարքը որոշակի իմաստով առաջնային սոցիալիզացիայի հետևանք է, շարունակություն է, իհարկե այլ ձևերով: Առաջնային, վաղ սոցիալիզացիայի թերություններն ընտանիքում կարող են ունենալ քրեաձին նշանակություն առաջին հերթին այն պատճառով, որ երեխան դեռ չի յուրացրել այլ դրական ազդեցություններ, նա ամբողջովին կախված է մեծերից: Այդ պատճառով անձի ձևավորման հարցերն ընտանիքում առավել ուշադրության են արժանանում: Ընտանիքն այն պատճառակալ շղթայի գլխավոր օղակն է, որը բերում է հանցավոր վարքի: Բազմաթիվ հետազոտություններ վկայում են, որ երբ մարդը վաղ տարիքում յուրացրել է անհրաժեշտ բարոյական կանոններ, նա վստահորեն անցնում է իր կենսուղու բոլոր բարդ խաչմերուկները, ժամանակին կանխազգում է և հեշտ է հաղթահարում ճիշտ ճանապարհից շեղվելու վտանգը: Եվ հակառակը՝ նա, ով մանկության ժամանակ չի ստացել անհրաժեշտ բարոյական դաստիարակության պաշար, ավելի է ենթակա սայթաքումների և սադրանքների:

Սակայն անբարենպաստ և ոչ լրիվ ընտանիքների շուրջ եղած բազմաթիվ ուսումնասիրությունների դեպքում անհասկանալի է դառ-

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 91 2016

նում, թե ինչու այդ ընտանիքներից շատ երեխաներ չեն կատարում հակաիրավական գործողություններ: Անբարենպաստ ընտանիքների թվին են դասվում նրանք, որոնցում ծնողները կատարում են հակաիրավական կամ անբարոյական գործողություններ: Օրինակ՝ հոր բացակայությունը կամ նրա անբարոյական վարքագիծը ոչ միշտ է, որ պատճառ է դառնում իրավախախտ անձնավորության ձևավորման համար: Այդ պատճառով պետք է հաշվի առնել, որ վճռորոշ դեր խաղում են ոչ թե ընտանիքի կազմը, ոչ թե հարաբերությունները ծնողների միջև, նույնիսկ ոչ նրանց հակաիրավական վարքը, այլ, ինչպես շեշտում են անվանի քրեահոգեբաններ Յու. Անտոնյանը, Վ. Կուդրյավցևը և Վ. Էմինովը, նրանց հուզա-զգացմունքային վերաբերմունքը և հարաբերությունները երեխայի նկատմամբ, նրա ընդունումը կամ մերժումը¹: Հանցագործություն կատարած անձանց նշանակալից մասն ի սկզբանե մերժված է ընտանիքի, հասարակության կողմից: Ընտանիքից, հասարակությունից օտարանալով անձը չի կարողանում յուրացնել անձի վարքը կարգավորող սոցիալական նորմերը: Նրանք այդ նորմերը չեն համարում պարտադիր կատարման ենթակա:

Չափազանց կարևոր է նշել, որ ծնողների կողմից երեխաների էմոցիոնալ մերժման կամ ծնողական քնքշանքից և հոգատարությունից զրկման արդյունքում նրա հոգեկանում անգիտակցական մակարդակի վրա ձևավորվում են տազնապայնություն, անհանգստություն, վախ իր «Ես»-ին, շրջապատում գրաված իր դիրքին սպառելու վերաբերյալ, անվստահությունը կենցաղում, շրջապատող աշխարհի նկատմամբ թշնամության, ագրեսիվության զգացում: Այս որակներն առաջանում են անհրաժեշտ դաստիարակչական ազդեցությունների պակասից կամ նեգատիվ ազդեցություններից և ամրապնդվում են շփման ընթացքում, դպրոցում, ուսումնական հաստատություններում:

Բոլոր նշված որակները կոչում են տազնապայնություն, որը հասկացվում է որպես չգոյության վախ: Այդ վախը կարող է ունենալ երկու մակարդակ. Մահվան վախ (բարձր մա-

կարդակ) և անընդհատ անհանգստություն և անինքնավստահություն (ցածր մակարդակ): Եթե տազնապայնությունը հասնում է մահվան վախի մակարդակի, ապա մարդն սկսում է պաշտպանել իր կենսաբանական կարգավիճակը, իր կենսաբանական գոյությունը: Այստեղից բռնարարքային հանցագործությունների կատարումը որպես պաշտպանություն աշխարհից, որն անձը սուբյեկտիվորեն ըմբռնում է որպես վտանգավոր կամ թշնամական: Մարդասպանների առավել բնութագրական գծեր են հանդիսանում բարձր զգացմունքայնությունը, նրբազգացությունը, միջավայրի կողմից սպառնալիքի սպասումը: Եթե տազնապայնությունը պահպանվում է անընդհատ անհանգստության և անվստահության մակարդակի վրա, ապա մարդը կարող է պաշտպանել իր սոցիալական կարգավիճակը, սոցիալական գոյությունը, իր սոցիալական պատկանելությունը շահադիտական և շահադիտա-բռնարարքային հանցագործությունների կատարման ճանապարհով:

Տազնապայնի անձնավորությունն ամբողջովին այլ կերպ է տեսնում շրջապատող աշխարհը և համապատասխանաբար արձագանքում է նրա ազդեցությանը: Նրա առաջատար գիծը հանդիսանում է ինքնահաստատման, ինքնաընդունման, իրեն և իր «Ես»-ի կարևորման, կյանքում իր տեղի համար պայքարելու անընդհատ ձգտումը: Հաստատման և ինքնահաստատման միտումը կարող է իրականացվել այլ մարդու կարգավիճակի իջեցմամբ, նրա նվաստացմամբ և նույնիսկ ոչնչացմամբ: Հենց այդպիսի տազնապայնի մարդկանց է բնորոշ ներքին անազատության բարձր աստիճանը և առավել նախատրամադրվածությունը հակաիրավական վարքի նկատմամբ: Ինքնահաստատման պահանջմունքը մարդու վարքը խթանող կարևորագույն պահանջմունք է: Այդ պահանջմունքն սկսվում է դրսևորվել դեռևս մանկությունից: Երեխան փորձում է ապացուցել, որ նա ոչ մեկից վատը չի, նույնիսկ լավն է: Անձը ձգտում է գրավել սոցիալական կարգավիճակ, հասնել որոշակի սոցիալական դիրքի, հասարակության մեջ ճանաչման, սակայն հեղինա-

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 91 2016

¹ Стів Антонян Ю.М., Кудрявцев В.Н., Эминов В.Е., “Личность преступника” – СПб.: Изд. Юр. центр Пресс, 2004. – 366 с.

կություն յուրաքանչյուր ոք ձեռք է բերում տարբեր կերպ: Նրանք ձգտում են մտնել որոշակի խմբի մեջ, որը կապահովի դրված նպատակների ապահովմանը: Հանցագործության կատարումը միջոց է տվյալ խմբի մեջ ներթափանցելու համար: Նրանք կատարում են արարքներ, որոնք օգնում են հաղթահարել հոգեբանական թուլությունները, ցուցադրել անձի ուժեղ կողմերը: Այդ արարքներն օգնում են հասնել բարձր գնահատականի և ինքնագնահատականի, բարձրացնել ինքնահարգանքը և սեփական արժանապատվության մակարդակը: Այդպիսի ինքնահաստատումը տեղի է ունենում անգիտակցական մակարդակի վրա:

Տազնապայնության ուսումնասիրության դեպքում առանձնացնում են անձնային տագնապայնություն (ԱՏ) որպես անձի կայուն հատկություն և իրադրային կամ ռեակտիվ տագնապայնություն (ՌՏ) որպես հոգեկանի ժամանակավոր վիճակ՝ ծագող սպառնալիքի նկատմամբ մարդու հակազդման տեսակով: Անձնային տագնապայնությունը, ի տարբերություն իրադրայինի, որոշվում է սուբյեկտի բնավորության, խառնվածքի առանձնահատկություններով և արտացոլում է նրա ներանձնային կոնֆլիկտը: Դատական հոգեբանության հիմնադիրներից Վ. Ռատինովը նկատել է, որ ինչքան անօգնական է մարդը, այնքան առավել է նա պատկերացնում ծագող վտանգը, այնքան տագնապային է նա իրեն զգում, այնքան լայն է իրադրությունների շրջանակը, որոնք նրա կողմից ընկալվում են որպես սպառնալից և առաջ են բերում տագնապային վիճակ: Անձնային տագնապայնությունը զարգանում է իրադրայինից, հատկապես եթե մարդը հաճախ է ապրում վերջինս²:

Հանցավոր վարքի գենեզիսը բացահայտելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել հանցավոր վարքի նկատմամբ անձի պատրաստակամության ծագումը, որի կարևոր բաղադրիչն է դիրքորոշումը: Վերջինիս բովանդակությունը կազմում է ցանկալի արդյունքը և դրան հասնելու եղանակը (դիրքորոշում-նպատակ-եղանակ): «Դիրքորոշում» ասելով հաս-

կանում ենք անցյալ փորձի հիման վրա ձևավորված նախատրամադրվածություն ընկալելու կամ գնահատելու ինչ-որ օբյեկտ որոշակի կերպ և համապատասխան այդ գնահատականի դրանկատմամբ գործելու պատրաստակամություն³:

Ըստ Ս. Զ. Արզումանյանի՝ հանցածին դիրքորոշումները սոցիալական դիրքորոշումների քրեականացման արդյունքն են, իսկ դիրքորոշումների քրեականացման պրոցեսի նախագուշակական միջոցներից մեկը դրանց կազմավորման և դրսևորման մեխանիզմի բացահայտումն է: Անձի քրեական վարքի կառուցվածքում բովանդակվում են ոչ ադեկվատ բարոյական վարքի դիրքորոշումներ, որոնք առաջացել են զարգացման և ձևավորման առավել վաղ փուլերում: Հեղինակը գտնում է, որ քրեածին դիրքորոշումների կազմավորման նախադրյալների գենեզիսը սկսվում է շրջապատողների հետ զգացմունքային փոխհարաբերության խախտմամբ, խաթարմամբ: Այդ կերպ, նեգատիվ և քրեածին դիրքորոշումների առավել արտահայտված առաջնային նախադրյալ են հանդիսանում հուզա-անձնային ոլորտում տեղի ունեցող անբարենպաստ փոփոխությունները: Այդ փոփոխություններն առաջին հերթին արտահայտվում են բացասական հուզական դիրքորոշումներում, որոնք ընկած են նրա այլ անբարենպաստ անձնային և վարքային կողմերի հիմքում. նեգատիվիզմ, եսասիրություն և այլն: Իսկ վերջիններիս հիման վրա կազմավորվում են նեգատիվ դիրքորոշումներ, որոնք կանխարգելիչ միջոցառումների բացակայության դեպքում կարող են քրեականացվել և վերածվել քրեածին դիրքորոշման⁴:

Հանցագործություն կատարած կամ այն կատարելու ներքին պատրաստակամությամբ և համարժեք ներուժով օժտված մարդու անձը հոգեբանական բնույթի որակական տարբերություն ունի հասարակության օրինապահ անձնավորության հոգեբանական բնույթից: Այդ տարբերակող առանձնահատկություններն արտահայտվում են հոգեբանական հատկանիշների (կազմավորումների) ամբողջության առկայության մեջ, որոնք էական են հանցավոր

² Стѣи Романов В.В., «Юридическая психология» М. 2000, 488 с.

³ Стѣи «Юридическая психология: учебник» /отв. ред. Давыдов Н.А., Аминов И.И./ - Москва: Проспект, 2015. - с. 83.

⁴ Стѣи Арзуманян С.В., «Психолого-криминологическая теория становления личности правонарушителя», Ер., Зангак 97, 2000., с. 139-140.

վարքի դետերմինացիայի մեջ: Այդ ամբողջության համակարգի կորիզ են կազմում հանցավոր նպատակ ընդունելու ներքին հնարավորությունը որոշող հոգեկան հատկանիշները, հատկությունները, որոնց բովանդակությունն անբաժանելիորեն կապված են վարքի հակահասարակական եղանակների հետ: Այդ հատկանիշներն արտահայտում են որոշակի պայմաններում անհրաժեշտ արդյունքի հասնելու (որոշակի պահանջմունքի բավարարման կամ պրոբլեմային իրադրությունը լուծելու) համար հանրորեն վտանգավոր եղանակի ընդունման անձնային ընկալունակությունը:

Ըստ Ա.Ա.Գաբուզյանի՝ հանցավոր վարքի տարբերությունն իրավահնագանդ վարքից կայանում է սուբյեկտի կողմից իր նպատակներին հասնելու միջոցների և եղանակների ընտրության մեջ: Նպատակին հասնելու այս կամ այն միջոցի կամ եղանակի ընտրությունը կախված է մի շարք գործոններից, որոնց ընդհանրացումը թույլ է տալիս պնդել, որ նպատակներին հասնելու եղանակների և միջոցների ընտրությունը կախված է սուբյեկտի հնարավորություններից և իրադրության առանձնահատկություններից: Սուբյեկտի հնարավորությունները կարող են լինել սուբյեկտիվ և օբյեկտիվ: Որպես օբյեկտիվ հնարավորություններ կարող են հանդես գալ, օրինակ՝ պաշտոնը, սոցիալական, նյութական դրությունը, մասնագիտությունը, զբաղմունքի տեսակը և այլն: Սուբյեկտիվ հնարավորություններ են հանդիսանում ինտելեկտուալ ընդունակությունները և կամային հատկությունները, գիտելիքների մակարդակը, ֆիզիկական և հոգեկան վիճակը, հմտությունները և կարողությունները, կյանքի փորձը, արժեքային կողմնորոշումները, բարոյական դիրքորոշումները: Իսկ ինչ վերաբերում է իրադրու-

թյան առանձնահատկություններին, ապա այստեղ կարևոր է հաշվի առնել նպատակներին հասնելու տարբեր միջոցների առկայությունը կամ բացակայությունը, ինչպես նաև դրան հասնելու ադեկվատ եղանակի ընտրության համար անհրաժեշտ ժամանակը, այլ մարդկանց վարքը, ընդհանուր բարոյական վիճակը միկրոմիջավայրում կամ հասարակությունում:

Նպատակներին հասնելու հակաիրավական, հանցավոր եղանակի ընտրությունը կախված է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններից, որոնց մեջ վճռական դեր է խաղում պահանջմունքների և դրանց բավարարման հնարավորությունների միջև անհամապատասխանությունը: Դրա հետ կապված ակնհայտ է, որ հանցագործությունների կանխումը պետք է հիմնվի տվյալ անհամապատասխանությունը հաղթահարելու կամ մեղմելու, ինչպես նաև այն օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ազդեցությունը չեզոքացնելու վրա, որոնցով պայմանավորում է այդ ընտրությունը: Եվ այստեղ, ըստ Ա. Գաբուզյանի, վճռական նշանակություն ունեն փոփոխությունները հասարակության կենսագործունեության օբյեկտիվ պայմաններում: Վերջին հաշվով գլխավորը հանգում է նրան, որպեսզի ընդլայնվեն նպատակներին հասնելու իրավական եղանակների շրջանակը⁵:

Այսպիսով, հակահասարակական վարքն անձի սոցիալական վարքի (սոցիալական դիրքորոշումների, արժեքային կողմնորոշումների և այլն) քրեականացման արդյունք է և դրա գենեզիսը հատկանշվում է նրանով, որ վարքի պարզունակ խախտումներից հետզհետե կազմավորվում են օրենքը խախտելու, դրա նկատմամբ ոտնձգություններ կատարելու, այդ թվում՝ հանցավոր վարքագիծ դրսևորելու միտումները:



⁵ Sէն Գաբուզյան А.А., «Проблемы преступности в республике Армения в переходный период» Ереван, 2007., с. 46-50.

ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

ՔՆԱՐԻԿ ԱՎՈՅԱՆ

Հայաստանում ֆրանսիական համալսարանի ուսանող

ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ՀՐԱԺԱՐՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՎԱՉԱՓՈՒԹՅԱՆ ԴԱՅՄԱՆՆԵՐԸ

Սուբյեկտիվ իրավունքն անձին տրված հնարավորությունն է իր հայեցողությամբ դրսևորելու որոշակի վարքագիծ: Թեև սուբյեկտիվ իրավունքը պարզաբանվում է «հնարավորություն» եզրույթի միջոցով, սակայն իրավահարաբերություններում ամեն մի հնարավորություն չէ որ սուբյեկտիվ իրավունք է: Ն.Կորկունովը նշում է, որ սուբյեկտիվ իրավունքը պարզ հնարավորությունից (թույլատրված վարքագծից) տարբերվում է համապատասխան պարտականության առկայությամբ: Եթե անձն իրավունք ունի ինչ որ բան անելու, ուստի այն թույլատրված է, սակայն ամեն մի թույլատրված հնարավորություն միաժամանակ իրավունք չէ. իրավունք է միայն այն, ինչն ապահովված է պարտականությամբ¹: Օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածի համաձայն՝ մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին: Քրեական իրավունքում և դատավարությունում արգելված չէ մեղադրյալի կողմից սուտ ցուցմունք տալը (բացառությամբ՝ սուտ մատնությանը), ուստի՝ մեղադրյալը, ղեկավարվելով օրենքով չարգելված եղանակով պաշտպանվելու սահմանադրական դրույթով, հնարավորություն ունի նաև տալ սուտ ցուցմունք, սակայն սուտ ցուցմունք տալու հնարավորությունն ինքնին մեղադրյալի սուբյեկտիվ իրավունքը չէ: Նախ՝ սուտ ցուցմունք տալու հնարավորությունն ամրագրված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգրք), մինչդեռ ընդունված է այն մոտեցումը, որ սուբյեկտիվ իրավունքը պետք է ամրագրված լինի պոզիտիվ իրավունքում: Բացի այդ, սուբյեկտիվ իրավունքն իրավահա-

րաբերության մյուս կողմի համար առաջացնում է պարտականություն, մինչդեռ տվյալ դեպքում, վարույթն իրականացնող մարմինը պարտականություն չունի պարզաբանելու և ապահովելու մեղադրյալի սուտ ցուցմունք տալու՝ օրենքով չարգելված հնարավորությունը:

Ի տարբերություն իրավաբանական պարտականության, սուբյեկտիվ իրավունքի դեպքում իրավատերն է որոշում օգտագործել իր հնարավորությունը, թե հրաժարվել սուբյեկտիվ իրավունքից: Ընդհանուր առմամբ, սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելը մարդու համար չի առաջացնում անբարենպաստ իրավական հետևանքներ (էստոպելի կանոնի մասին կխոսի ստորև): Օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տասնութ տարին լրացած ՀՀ քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունք: Եթե ՀՀ քաղաքացին ընտրության օրը որոշում է հրաժարվել ընտրելու իրավունքից, ապա դա իր համար ինքնին չի առաջացնում անցանկալի հետևանքներ:

Իրավագիտության մեջ պատշաճ ուսումնասիրված չեն սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելու ընդհանուր տեսական հիմքերը, ինչը կարելի է բացատրել խորհրդային համակարգում մասնավոր իրավունքի, մարդու ինքնավարության բացակայությամբ և մարդու վարքագիծն առավելապես պարտականություններով և արգելքներով կարգավորելու պրակտիկայով. ոչ ազատ մարդը չէր կարող տնօրինելու իր գործողությունները: Այդ ժամանակահատվածում մարդու սուբյեկտիվ իրավունքները և դրանք իր հայեցողությամբ տնօրինելու, այդ թվում՝ սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելու գաղափարը, ընդհանուր առմամբ, հա-

● ՕՐԻՆԱԿԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ № 91 2016

¹ Стів Коркунов Н. М., “Лекции по общей теории права”, Сост., автор вступ. ст., коммент. А. Н. Медушевский. М.: Российская политическая энциклопедия (РОССПЭН), 2010. ст. 214.

մահունչ չէր հասարակական կյանքը պետականացնելու խորհրդային քաղաքականությամբ:

Հետխորհրդային ժամանակաշրջանում սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելու հետ կապված հարցերն ուսումնասիրել են առավելապես մասնավոր իրավունքի մասնագետները²: Բանն այն է, որ իրավունքից հրաժարվելը (renuntiatio) հայտնի էր հին հռոմեական իրավունքում: Ներկայումս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածում ամրագրված է քաղաքացիական իրավունքներն իրականացնելուց հրաժարվելու մասին դրույթ: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի մի շարք դրույթներ կարգավորում են նաև կոնկրետ տեսակի իրավունքից հրաժարվելու հարցերը, օրինակ՝ սեփականության իրավունքից հրաժարվելը:

Սույն հոդվածում կքննարկենք սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելու հասկացությունը և ձևերը, իրավաչափության պայմանները, սուբյեկտիվ իրավունքը պետության կողմից հարկադիր իրականացնելու թույլատրելիությունը:

1. Սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելու հասկացությունը

Արտասահմանյան իրավունքում օգտագործվում է նաև «ըբենդոն» հասկացությունը, որը ֆրանսերեն՝ abandon կամ անգլերեն՝ abandonment բառից է և նշանակում է իրավունքից հրաժարվել: Այս հասկացությունն օգտագործվում է սուբյեկտիվ քաղաքացիական և այլ իրավունքներից հրաժարվելու դեպքում³: Ռուսական իրավունքում «abandon» հասկացությունն օգտագործվում է նաև ապահովագրական օրենսդրությունում⁴:

Ռուսական գրականության մեջ սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելն անվանում են

իրավաբանական հրաժարում, որն իրավական կարգավորման իրավա-տեխնիկական մեթոդ է, իրավաստեղծ ու իրավակիրառ գործընթացի ծանրակշիռ տարրերից է: Որպես իրավական կարգավորման մեթոդ՝ այն անձին հնարավորություն է տալիս իրականացնելու իր ազատությունը⁵:

Ամերիկյան իրավագիտությունում իրավունքից հրաժարվելն ընդհանուր ձևով բնորոշվում է որպես կամավոր և դիտավորյալ կերպով իրավունքից, առավելությունից, շահույթից, պահանջից կամ արտոնությունից հրաժարվել⁶: Գերմանական իրավաբանությունում իրավունքից հրաժարվել ասելով հասկացվում է հիմնական իրավունքի կրողի համաձայնությունը, որ պետությունը ներգործի իր հիմնական իրավունքներով պաշտպանված բարիքների վրա, այնպես, որ այդ ներգործությունն այլևս արգելված չլինի, օրինակ՝ ներարկումը հանդուրժելը, բնակարանի խուզարկումը հանդուրժելը և նման դեպքեր⁷: Կարծում ենք, որ գերմանացի հեղինակի տված բնորոշմամբ իրավունքի հրաժարումը նույնանում է պետության կողմից մարդու իրավունքը սահմանափակելու հետ:

Իրավունքից հրաժարումը (abandon) իրավատիրոջ իրավաչափ որոշումն է կոնկրետ իրավիճակում չօգտագործել իրավական հնարավորությունը կամ դադարեցնելու իրավաօգտագործման փուլում գտնվող սուբյեկտիվ իրավունքը:

Սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելու առանձնահատկություններն են, մասնավորապես՝

1. Սուբյեկտիվ իրավունքից կարելի է հրաժարվել ոչ թե ընդհանրապես, այլ կոնկրետ իրավահարաբերության շրջանակներում: Ան-

² Տե՛ս Боднар Т. В., «Отказ как категория гражданского права: понятие и виды. Материалы Международной научно-практической конференции, посвященной 175-летию Киевского национального университета имени Тараса Шевченко» М.: 2009. Уразова А. А., «Отказ от корпоративных прав. Актуальные проблемы российского права» 2014. № 6, <http://www.finexg.ru/otkaz-ot-korporativnyx-prav/> (03.01.2016).

³ Տե՛ս Суденко В. В., «Отказ от права (абандон) в гражданском праве» Юрист. 2006. № 9. ст. 14-15.

⁴ Տե՛ս Чебунин А. В., «Абандон в теории и практике страхования» Сибирский Юридический Вестник. 2003. № 1 (03.01.2016).

⁵ Տե՛ս Гладышева И. П., «К вопросу о понятии «юридический» отказ», Вестник Нежгородской академии МВД России. 2010, № 2 (13), ст. 73.

⁶ Տե՛ս American Jurisprudence, 28 Am. Jur. Estoppel and Waiver, « 183 // Westlaw Database. <http://www.centerbereg.ru/o1759.html> (03.01.2016).

⁷ Տե՛ս Հաքս Միխայել, «Գերմանիայում հիմնական իրավունքների ընդհանուր ուսմունքի հիմունքները: Սուբյեկտիվ հանրային իրավունքները վարչական իրավունքում», Եր.: Տիգրան Մեծ, 2012. էջ 63:

թույլատրելի է ընդհանրապես հրաժարվել, օրինակ՝ սեփականության իրավունքից կամ դատական պաշտպանության իրավունքից: Եթե անձը որևէ գրավոր փաստաթղթում կամ որևէ կերպ հայտարարի սեփականության իրավունքից կամ դատական պաշտպանության իրավունքից ընդհանրապես հրաժարվելու մասին, ապա նման հայտարարությունն իրավական նշանակություն չունի: Ավելին, եթե նույնիսկ հետագայում անձը փորձում է ձեռք բերել կոնկրետ գույք կամ դիմել դատարան, ապա նախկինում կատարված ընդհանրական հայտարարությունը չի կարող օգտագործվել որպես իրավական կամ փաստական հիմք՝ գույք ձեռք բերելու կամ դատարան դիմելու հնարավորությունից նրան զրկելու համար: Անձը յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում է որոշում ձեռք բերել սեփականություն, թե հրաժարվել այդ հնարավորությունից, կամ կոնկրետ վիճելի իրավահարաբերությունում դիմել դատարան, թե ոչ:

2. Սուբյեկտիվ իրավունքից կարելի է հրաժարվել այն չօգտագործելով (նյութաիրավական հրաժարում) կամ իրավաօգտագործման փուլում գտնվող իրավունքը դադարեցնելով (ընթացակարգային հրաժարում): Սուբյեկտիվ իրավունքը չօգտագործելու եղանակով հրաժարման դեպքում իրավատերը դրսևորում է թույլատրելի անգործություն, օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք, սակայն ՀՀ քաղաքացին որոշում է չօգտվել բարձրագույն կրթություն ստանալու իրավունքից և չմասնակցել մրցույթին:

Սուբյեկտիվ իրավունքը դադարեցնելու եղանակով իրավունքի հրաժարման դեպքում իրավատերը կատարում է որոշակի գործողություններ, օրինակ՝ մեղադրյալն ունի պաշտպան, սակայն նախաքննության ընթացքում որոշում է պաշտպանությունն իրականացնել ինքնուրույն և վարույթն իրականացնող մարմնին հայտարարում է պաշտպանից հրաժարվելու մասին, որով մեղադրյալը դադարեցնում է իրավաօգտագործման փուլում գտնվող պաշտպան ունենալու իրավունքը: Սուբյեկտիվ իրավունքը դադարեցնելու եղանակով իրա-

վունքից հրաժարումն իրավաբանական փաստ է, որով դադարեցվում են ծագած իրավահարաբերությունները:

Նշված առանձնահատկության համատեքստում պետք է անդրադառնալ «սուբյեկտիվ իրավունքից հրաժարվել» և «սուբյեկտիվ իրավունքն իրականացնելուց հրաժարվել» հասկացություններին: ՀՀ քաղաքացիական օրենսգրքում օգտագործվում են քաղաքացիական իրավունքն իրականացնելուց հրաժարվել (11-րդ հոդվածի 2-րդ մաս) և իրավունքից հրաժարվել (օրինակ՝ հոդված 280) հասկացությունները: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հրաժարվելն իրենց իրավունքներն իրականացնելուց չի հանգեցնում այդ իրավունքների դադարման, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Քաղաքացիական իրավունքի գիտության մեջ փորձ է արվում տարանջատել «իրավունքից հրաժարվել» և «իրավունքի իրականացումից հրաժարվել» հասկացությունները: Այսպես, իրավունքն իրականացնելուց հրաժարվելու դեպքում անձը պարզապես դրսևորում է անգործություն, նրա կամքն ուղղված չէ այդ իրավունքի դադարեցմանը, իսկ իրավունքից հրաժարվելու դեպքում իրավատիրոջ նպատակը և գործողությունները պետք է միանշանակ ուղղված լինեն իրավունքի դադարեցմանը⁸: Կարծում ենք, որ նման տարանջատումն արհեստական է: Նախ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված է բացառություն, որի համաձայն՝ օրենքով կարող են նախատեսվել դեպքեր, երբ քաղաքացիական իրավունքն իրականացնելուց հրաժարվելը հանգեցնում է իրավունքի դադարմանը: Եթե նման բացառություն դիտարկենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 280-րդ հոդվածը, ապա այնտեղ օգտագործվում է ոչ թե «սեփականության իրավունքն իրականացնելուց հրաժարվել», այլ «սեփականության իրավունքից հրաժարվել» հասկացությունը կամ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 85-րդ հոդվածի 2-րդ մասում օգտագործվում է «ընկերակցությունից դուրս գալու իրավունքից հրաժարվել» հաս-

⁸ Стів Суханова Ю. В., «Отказ от субъективных гражданских прав» Автореф. дисс ... канд. юрид. наук. Казань, 2009.

կացությունը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 79-րդ հոդվածի 3-րդ մասում՝ «ընկերակցության փաստաթղթերին ծանոթանալու իրավունքից հրաժարվել» հասկացությունը: Նշված նորմերում բացակայում է «իրավունքի իրականացումից հրաժարվել» ձևակերպումը: Բացի այդ, ինչպես նշվեց, իրավունքից ընդհանրապես հրաժարվելն անթույլատրելի է, իսկ սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելն ընդգրկում է սուբյեկտիվ իրավունքի իրացման տարբեր փուլերը. իրավատերը մի դեպքում պարզապես հրաժարվում է օգտագործել սուբյեկտիվ իրավունքը, մեկ այլ դեպքում հրաժարվում է իրավաօգտագործման փուլում գտնվող իրավունքից և դադարեցնում գործողության մեջ գտնվող սուբյեկտիվ իրավունքը: Եթե սուբյեկտիվ իրավունքի իրականացումից հրաժարվելը չի դադարեցնում իրավունքը, ապա այն իրավունքից հրաժարվել չէ:

3. Ընդհանուր կանոնի համաձայն՝ սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելը վերջնական է: Անձը, հրաժարվելով սուբյեկտիվ իրավունքից, պետք է գիտակցի, որ այլևս չի կարող փոխել մտադրությունը և վերակենդանացնել հրաժարված իրավունքը: Այս պահանջով ապահովվում է իրավական համակարգի որոշակիությունը և կանխատեսելիությունը: Բացառիկ դեպքերում է հնարավոր հրաժարված սուբյեկտիվ իրավունքի վերակենդանացում, եթե պահպանվել են հետևյալ պայմանները: Առաջին՝ սուբյեկտիվ իրավունքի բնույթն այնպիսին է, որ հնարավոր է իրավունքից հրաժարվելուց հետո այն վերակենդանացնել: Օրինակ՝ մեղադրյալը հրաժարվում է պաշտպանից, սակայն հետագայում փոխում է մտադրությունը և պահանջում է վարույթին ներգրավել պաշտպան: Մինչդեռ, եթե անձը կոնկրետ դեպքում հրաժարվել է ընտրելու իրավունքից, ապա հետագայում օբյեկտիվորեն հնարավոր չէ հրաժարված իրավունքը վերակենդանաց-

նել: Երկրորդ՝ հրաժարված իրավունքի վերակենդանացումը չպետք է խաթարի իրավական որոշակիությունը և կանխատեսելիությունը: Օրինակ՝ դպրոցն ավարտելուց հետո անձը հրաժարվում է բարձրագույն կրթություն ստանալու իրավունքից, սակայն ավելի վաղ տարիքում որոշում է ստանալ բարձրագույն կրթություն: Հրաժարված կրթական իրավունքի վերակենդանացումն ինքնին չի խաթարում կրթական համակարգի իրավական որոշակիությունը և կանխատեսելիությունը: Մինչդեռ, եթե անձը հրաժարվել է սեփականության իրավունքից, և այդ գույքը ձեռք է բերել այլ անձ, ապա սեփականության իրավունքից հրաժարված անձը հետագայում չի կարող վերադարձնել իր գույքը, քանի որ դրանով իսկ կխաթարվի գույքային շրջանառության որոշակիությունը և կանխատեսելիությունը: Երրորդ՝ սուբյեկտիվ իրավունքից հրաժարումը և այն վերակենդանացնելու հնարավորությունը չպետք է պարունակեն իրավունքի չարաշահման տարրեր:

4. Սուբյեկտիվ իրավունքից հրաժարումն անձի ինքնավարության տիրույթում է, ուստի, ընդհանուր առմամբ, սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելն անձի համար չի կարող առաջացնել անբարենպաստ իրավական հետևանքներ: Միևնույն ժամանակ, առանձին ոլորտներում սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելու հետևանքով անձը կարող է հետագայում զրկվել առարկություն ներկայացնելու իրավունքներից: Նման իրավիճակ հնարավոր է էստոպելի ձևավորման դեպքում (անգլերեն՝ estoppel՝ զրկել առարկություն ներկայացնելու իրավունքից⁹), որի համաձայն՝ իր նախորդող վարքագծի (այդ թվում՝ իրավունքից հրաժարվելու) հետևանքով անձը զրկվում է առարկություն (պահանջ) ներկայացնելու կամ որոշակի փաստերի վրա հիմնվելու իրավունքից¹⁰: Օրինակ՝ քաղաքացիական հայցվորը տեղյակ է դատավորին բացարկելու հիմքերի մասին, սակայն հրաժար-

⁹ Տե՛ս <http://legal-dictionary.thefreedictionary.com/estoppel> (04.01.2016).

¹⁰ Տե՛ս Էստոպելի կանոնը գործում է նաև միջազգային հանրային իրավունքում: Այսպես, ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանն Արևելյան Գրինլանդիայի գործով (Դանիան ընդդեմ Նորվեգիայի) Նորվեգիայի նախարարի արած հայտարարությունն այն մասին, որ ճանաչում են Գրինլանդիայի՝ Դանիային պատկանելի, դիտարկեց որպես էստոպել, ինչի արդյունքում Նորվեգիան զրկվել է Գրինլանդիայի պատկանելիության վերաբերյալ Դանիային պահանջներ ներկայացնելու հնարավորությունից: Տե՛ս Eastern Greenland case (Denmark v Norway) (Merits) [1933] PCIJ (ser A/B) No 53: Էստոպելի մասին մանրամասն տե՛ս Alexander Ovchar, “Estoppel in the Jurisprudence of the ICJ A principle promoting stability threatens to undermine it”. Bond Law Review: Vol. 21: Iss. 1, Article 5. <http://epublications.bond.edu.au/blr/vol21/iss1/5> (05.01.2016):

վում է դատավորին ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնելու դատավարական իրավունքից: Էստոպելի կանոնի համաձայն՝ քաղաքացիական հայցվորը նախորդող վարքագծի, այն է՝ դատավորին բացարկելու իրավունքից հրաժարվելու հետևանքով զրկվում է դատավորի անաչառության հիմքով դատական ակտը բողոքարկելու իրավունքից: Էստոպելի կանոնը նախատեսված է նաև պոզիտիվ դատավարական իրավունքում: Այսպես, ՀՀ դատական օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանն իրավունք չունի նոր ապացույց ընդունելու և բողոքը քննելիս հիմնվում է միայն այն ապացույցների վրա, որոնք ներկայացվել են առաջին ատյանի դատարանին: Եթե առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ ապացույցը չի ներկայացվել կողմերի կամքից անկախ հանգամանքներով, ապա վերաքննիչ դատարանը բեկանում է գործը և այն ուղարկում համապատասխան առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, եթե գտնում է, որ ապացույցը էական նշանակություն ունի գործի լուծման համար: Այս կարգավորումից բխում է, որ եթե առաջին ատյանի դատարանում կողմը հրաժարվել է ապացույց ներկայացնելու դատավարական իրավունքից, թեև կարող էր իրականացնել այդ իրավունքը, ապա ձևավորվում է էստոպել, մասնավորապես՝ նա զրկվում է վերաքննիչ դատարանում ապացույց ներկայացնելու դատավարական իրավունքից:

5. Անձը կարող է հրաժարվել ցանկացած սուբյեկտիվ իրավունքից, անկախ այն հանգամանքից, թե վերջինս ամրագրված է ՀՀ Սահմանադրությունում կամ միջազգային պայմանագրերում կամ օրենքներում: Անհասկանալի է այն մոտեցումը, ըստ որի կարելի է հրաժարվել սեփականության իրավունքից, ժառանգման իրավունքից, սակայն չի կարելի հրաժարվել մարդու անօտարելի իրավունքից և ազատություններից, օրինակ՝ կյանքի իրավունքից¹¹: Կարծում ենք, որ մարդը կարող է հրաժարվել ցանկացած սուբյեկտիվ իրավունքից, այդ թվում՝ կյանքի իրավունքից, եթե դա չի վնասում այլ անձանց իրավունքները և օրինական շահերը, չի խաթարում սահմանադրական այլ արժեքներ: Պետք է բարձր գնահատել մարդու կյանքը որպես բարձրագույն արժեք ճանաչելու և պաշտպանելու պետության սահմանադրական պարտականության գիտակցումը, սակայն հասարակական կյանքի սահմանադրականացման պայմաններում պետք է հարգել և արժևորել նաև մարդու ինքնավարությունը: Եթե մարդն ինքնասպանություն կատարելու եղանակով հրաժարվում է կյանքի իրավունքից, ապա այդ որոշումը մարդու ազատության, ինքնավարության տիրույթում է և պետությունն իրավասու չէ կյանքի իրավունքից հրաժարվելու կամ դրա փորձի համար նախատեսել որևէ անբարենպաստ հետևանք¹²: Մյուս կողմից, եթե մարդը, օրինակ՝ փորձում է հրաժարվել իր սոմատիկ (մարմնական) իրավունքից՝ անդամահատելով

¹¹ Стн Гладышева И. П., “К вопросу о понятии “юридический” отказ”, Вестник Нежегородской академии МВД России. 2010, № 2 (13), ст. 75.

¹² Գրականությունում մարդու հիմնարար իրավունքներից հրաժարման իրավաչափությունը դիտարկվում է պետության պոզիտիվ և նեգատիվ պարտականությունների լույսի ներքո: Պետության պոզիտիվ պարտականությունը ենթադրում է վերջինիս կողմից բոլոր այն միջոցների ձեռնարկումը, որոնք ուղղված կլինեն մարդու հիմնարար իրավունքների անխափան իրականացմանը (օրինակ՝ պետությունը պարտավոր է սահմանել համապատասխան կարգավորիչ նորմեր, հիմնել այնպիսի դատավարական համակարգ, որը կերաշխավորի արդյունավետ քրեական հետապնդման համապատասխան մեխանիզմներ), իսկ նեգատիվ պարտականությունը մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների իրացման բնագավառում պետության միջամտության արգելքն է (արտահայտվում է պետության կողմից պասիվ վարքագծով), տես Les obligations en vertu de la Convention européenne des Droits de l’Homme. Un guide pour la mise en œuvre de la Convention européenne des Droits de l’Homme-2006: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, առաջնային և գերակա գնահատելով մարդու հիմնարար իրավունքները, իր նախադեպային որոշումներում արտահայտել է դրանցից հրաժարման ինստիտուտի վերաբերյալ զգույշ մոտեցում: Այսպես, դատարանը «Փրեթին ընդդեմ Միացյալ Թագավորության» (ArrUt Pretty c. Royaume-Uni) 2002 թվականի ապիլի 29-ի գործով նշել է, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածից չի կարելի բխեցնել մահանալու իրավունքը, սակայն այն չի արգելում անձին հրաժարվել բժշկական օգնություն ստանալու իրավունքից, նույնիսկ, եթե դրանից հրաժարումն անխուսափելիորեն կառաջացնի մահ: Դատարանը «Ադա Ռոսին և մյուսները ընդդեմ Իտալիայի» (ArrUt Ada Rossi et autres c. Italie) 2008 թվականի դեկտեմբերի 16-ի գործով նշել է, որ կոնվենցիայով էվթանազիայի իրավունքը ռչ երաշխավորված

մարմնի որևէ մաս, զինվորական ծառայությունից խուսափելու նպատակով, ապա իրավունքի նման հրաժարումը վնասում է այլ գերակա հանրային շահին, ուստի՝ պետությունն իրավասու է ՀՀ պաշտպանությանը մասնակցելու սահմանադրական պարտականությունից խուսափելու համար նախատեսել պատասխանատվություն:

2. Սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելու ձևերը

Անձը սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելիս դրսևորում է որոշակի վարքագիծ՝ գործողություն կամ անգործություն, որից օբյեկտիվորեն տեսանելի է սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելու նրա մտադրությունը: Կարելի է առանձնացնել սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելու հետևյալ ձևերը՝ անգործություն, միակողմանի գործողություն և երկկողմանի համաձայնություն:

Սուբյեկտիվ իրավունքից անգործությամբ հրաժարումն առկա է այն դեպքում, երբ մարդը չի օգտվում իր իրավունքից: Օրինակ՝ ընտրելու իրավունքից կամ կրթության իրավունքից անձն հրաժարվում է անգործությամբ, երբ ի սկզբանե չի օգտվում ընտրելու կամ բարձրագույն կրթություն ստանալու իրավունքներից: Անգործությամբ սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելու եղանակ է նաև իրավունքի ապահովման ոլորտում իրավատիրոջ կողմից պահանջ չներկայացնելը: Օրինակ՝ հետախուզման մեջ գտնվող, ինչպես նաև շարժիչի կամ նույնացման համարի վերադառված կամ ջնջված համարներով տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ կողմից, օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում, գույքը բարեխիղճ ձեռք բերողից հետ չպահանջելը (անգործություն՝ հեղ.) դիտվում է որպես սեփականության իրավունքից հրաժարում (280-րդ հոդվածի 1-ին մաս):

Սուբյեկտիվ իրավունքից միակողմանի

գործողությամբ հրաժարումն առկա է այն դեպքում, երբ անձը կատարում է որոշակի գործողություն, որից բխում է սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելու մտադրությունը, օրինակ՝ սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելու մասին գրավոր կամ բանավոր հայտարարելը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շարժական գույքից կարելի է հրաժարվել այն լքելով կամ դրա նկատմամբ սեփականության իրավունքից հրաժարվելու նպատակով այլ կերպ թողելով (դեմ նետված գույք):

Սուբյեկտիվ իրավունքից երկկողմանի համաձայնությամբ հրաժարումն առկա է այն դեպքում, երբ իրավահարաբերության երկու կողմերը ձեռք են բերում համաձայնություն չօգտվելու (չիրականացնել) իրենց սուբյեկտիվ իրավունքից: Այսպես, ՀՀ դատական օրենսգրքի 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե կողմերն առաջին ատյանի դատարանում կնքել են վերաքննության իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնություն, ապա նման համաձայնություն կնքած կողմի (կողմերի) ներկայացրած վերաքննիչ բողոքը վերաքննիչ դատարանի կողմից ենթակա է քննության միայն նման համաձայնություն կնքած մյուս կողմի համաձայնության դեպքում:

Առանձին հեղինակներ փորձում են տարբերակել իրավունքից հրաժարվելը և իրավունքն իրականացնելուց ձեռնպահ մնալու մասին համաձայնությունը և նշում են, որ իրավունքից հրաժարվելը միակողմանի գործողություն է, որի արդյունքում իրավունքը վերջնականապես դադարեցվում է, իսկ այս կամ այն իրավունքն իրականացնելուց ձեռնպահ մնալու համաձայնությունը սահմանափակված է որոշակի ժամկետով¹³: Նման տարանջատումը հիմնված է այն գաղափարի վրա, որ իրավունքից հրաժարվելը վերջնական է և չի կարելի իրավունքից հրաժարվել որոշակի ժամկետով:

է, և ո՛չ էլ՝ արգելված, և, հետևաբար, այս կապակցությամբ որոշում կայացնելու հայեցողությունը դրվում է անդամ պետության վրա՝ «X-ն ընդդեմ Միացյալ Թագավորության» գանգատ թիվ 8416/79 (ArrUt X c. Royaume-Uni): Մեկ այլ դեպքով, դատարանը՝ «Օ.Գ. և Դուբլինի Վ.Վ. կազմակերպություններն ընդդեմ Իռլանդիայի» (ArrUt Open Door et Dublin Well Woman c. Irlande) 1992 թվականի հոկտեմբերի 29-ի գործով, (գանգատ թիվ 14234/88), արտահայտել է խորհրդատվական կարծիքը հղիության արհեստական ընդհատման իրավաչափության վերաբերյալ, մատնանշելով, որ նույնիսկ եթե տվյալ պետության ներպետական օրենսդրությունն այն արգելում է, պետությունն իրավունք չունի խոչընդոտելու անձանց իրականացնելու դա այլ երկրում, որտեղ թույլատրելի է:

¹³ Տե՛ս Бойко Т. С., “Отказ от права и воздержание от осуществления права: российский и англо-американский подходы”, Закон, 2012, N 3. <http://www.center-bereg.ru/o1759.html> (03.01.2016).

Կարծում ենք, որ տվյալ դեպքում պետք է խուսափել բացարձակ դատողություններից: Ընդհանուր առմամբ իրավունքից հրաժարումը կոնկրետ է և վերջնական, սակայն, ինչպես վերը նշվեց, հնարավոր են հրաժարված իրավունքի վերակենդանացման բացառիկ դեպքեր: Վերաքննության իրավունքից հրաժարվելը նույնպես վերակենդանացվող իրավունք է, պարզապես նկատի ունենալով, որ այս իրավունքից հրաժարումը կատարվել է երկկողմանի համաձայնությամբ, ուստի օրենսդիրը սահմանել է, որ իրավունքի վերակենդանացումը և վերաքննիչ բողոքի քննությունն հնարավոր է մյուս կողմի համաձայնությամբ:

Իրավական պրակտիկայում, որպես իրավունքից հրաժարվելու եղանակ, նշվում է անձի ոչ իրավաչափ գործողությունները՝ իրավախախտումը կամ իրավունքի չարաշահումը, որից կարելի է բխեցնել իրավունքից հրաժարվելու մտադրությունը: Օրինակ՝ մեղադրյալը քրեական վարույթին ներգրավված անձի նկատմամբ կիրառել է արգելված միջոցներ (վկային սպառնալ, վնաս հասցնել) և անձի մոտ առաջացրել իրական վախի զգացողություն: Արդյոք նման վարքագծով մեղադրյալը փաստացի հրաժարվում է իր դեմ ցուցմունք տված վկային հարցաքննելու իրավունքից: Եվրոպական դատարանը Ալ-Բավայն և Թահերին ընդդեմ Միացյալ Թագավորությունների գործով 2011 թվականի դեկտեմբերի 15-ի վճռի 123-րդ կետում նշել է, որ մեղադրյալի նման վարքագիծը պետք է դիտարկել որպես Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» կետով սահմանված՝ վկային հարցաքննելու իրավունքից հրաժարվել: Մեղադրյալի կողմից վկաների մոտ առաջացրած վախից օգտվելու հանգամանքն անհամատեղելի է տուժողի և վկաների իրավունքների հետ: Ոչ մի դատարան չպետք է թույլատրի, որ նման կերպ խաթարվի դատաքննության արդարությունը: Կարծում ենք, որ իրավախախտումը կամ իրավունքի չարաշահումն իրավունքից հրաժարում չէ, քանի որ այն պետք է լինի կամավոր: Մինչդեռ, ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորած անձը ոչ միայն չի ցանկանում հրաժարվել իրավունքից, այլև, որպես կանոն, պայքարում է այդ իրավունքի իրականացման համար: Տվյալ դեպքում մեղադրյալը սպառնում է վկային

որպեսզի վերջինս առերես հարցաքննության ընթացքում հրաժարվի իր դեմ տված ցուցմունքից: Անթույլատրելի է իրավունքից հրաժարվելը դիտարկել իրավախախտման և իրավաբանական պատասխանատվության տիրույթում:

3. Սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելու իրավաչափության պայմանները

Ինչպես նշվեց, սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելն իրավատիրոջ ինքնավարության դրսևորման ձև է, իրավատիրոջ հայեցողությունն է տնօրինելու իր վարքագիծը, սակայն պոզիտիվ իրավական նորմերով կարող են սահմանափակվել իրավունքից հրաժարվելու դեպքերը՝ հրաժարման համար նախատեսելով իրավաչափության պայմաններ, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ ընդհանուր և հատուկ:

Սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելու իրավաչափության ընդհանուր պայմանները վերաբերում են իրավատիրոջ կամահայտնությա- նը: Սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելն իրավաչափ է, եթե սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելու դիրքորոշումը (ցանկությունը) կոնկրետ է, գիտակցված և կամավոր: Ինչպես նշվեց, իրավունքից հրաժարվելը նշանակու- թյուն ունի, եթե իրավատիրոջ կամահայտնու- թյունը կոնկրետ է՝ բխում է կոնկրետ իրավի- ճակից. որևէ սուբյեկտիվ իրավունքից ընդ- հանրապես հրաժարվելն իրավաչափ չէ:

Իրավունքից հրաժարվելը թույլատրելի է, եթե այն գիտակցված և կամավոր է, անձը կանխատեսում է սուբյեկտիվ իրավունքից հրա- ժարվելու փաստական և իրավական հետևանք- ները: Հանրային իշխանության մարմինները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն հատ- կապես հասարակության խոցելի անդամների (երեխաներ, տարեց մարդիկ, ֆիզիկական և հոգեբանական սահմանափակում ունեցող ան- ձինք և այլն) կողմից սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելու կամավորության և գիտակցվա- ծության պայմաններին: Այսպես, Օրենսգրքի 33-րդ և 183-րդ հոդվածների ուժով մասնա- վոր մեղադրանքով գործ հարուցելու և դրա- նով քրեական հետապնդում իրականացնելու հնարավորությունը կախված է դիմողի՝ են- թադրյալ հանցավորին քրեական պատասխա- նատվության ենթարկելու միջոցով իր իրա-

վունքների և օրինական շահերի պաշտպանության համար քրեական հետապնդման մարմնին դիմելու ցանկությունից և կամարտահայտությունից: Անձը (ենթադրյալ հանցագործության զոհը), ով անօգնական վիճակի կամ այլ օբյեկտիվ պատճառներով չի կարող պաշտպանել իր իրավունքներն ու օրինական շահերը, ապա նման իրավիճակում, քրեական գործի առիթն օրինական, իսկ հիմքերը բավարար լինելու դեպքում, քրեական գործ հարուցելու մասին որոշումը պետք է կայացվի ոչ թե մասնավոր մեղադրանքի, այլ հանրային մեղադրանքի գործերի հարուցման համար սահմանված ընդհանուր կարգով՝ անկախ դիմողի բողոքի առկայությունից (ՀՀ վճռաբեկ դատարանի ՎԲ-73/08 որոշման 13 կետ, 2008 թվականի դեկտեմբերի 26): Այս դեպքում անօգնական անձի (ենթադրյալ հանցագործության զոհ) կողմից քրեական հետապնդման մարմնին չդիմելը չի կարող դիտարկվել որպես մասնավոր մեղադրանքի գործով դատական պաշտպանության իրավունքից հրաժարվել, քանի որ անօգնական վիճակում գտնվող անձի մոտ բացակայում է իրավունքից հրաժարվելու կամավորության կամ գիտակցվածության պայմանները: Նման դեպքում վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է քրեական գործ հարուցել և քրեական հետապնդում իրականացնել անօգնական վիճակում գտնվող զոհի կամքից անկախ:

Եթե պահպանված չեն սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելու գիտակցվածության և կամավորության ընդհանուր պահանջը, ապա պետությունը կարող է օրենսդրությամբ սահմանել իրավունքի հարկադիր իրականացման կառուցակարգեր (այս մասին ստորև):

Սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելու իրավաչափության հատուկ պայմանները վերաբերում են կոնկրետ տեսակի սուբյեկտիվ իրավունքին կամ գործում են հատուկ դեպքերում: Իրավաչափության հատուկ պայմաններից են, մասնավորապես՝

ա) կոնկրետ տեսակի սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելու համար օրենքով կարող են նախատեսվել լրացուցիչ պահանջները: Օրինակ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 280-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սեփականության իրավունքից հրաժարվելը հիմք

է գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքները և պարտականությունները դադարելու համար այն պահից, երբ այլ անձ այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք: Տվյալ դեպքում սեփականության իրավունքից հրաժարվելը կարող է կատարել իրավահարաբերությունը դադարեցնող իրավաբանական փաստի գործառույթ, երբ իրականացվում են լրացուցիչ գործողություններ, օրինակ՝ օրենքով սահմանված կարգով իրավունքի դադարման պետական գրանցումը (պետական գրանցումը չեղարկելը): Որպեսզի սեփականության իրավունքից հրաժարվող անձն ազատվի սեփականության հետ կապված պարտականություններից, օրինակ՝ գույքահարկ վճարելու պարտականությունից, ապա պետք է միջոցներ ձեռնարկի սեփականության իրավունքի պետական գրանցումը չեղարկելու համար:

բ) իրավունքից հրաժարումն իրավաչափ է, եթե սուբյեկտիվ իրավունքը միաժամանակ չի դիտարկվում որպես պարտականություն: Օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, կրթության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման մասին: Ինչպես նկատում ենք տվյալ դեպքում երեխաների դաստիարակությունը ոչ միայն ծնողների իրավունքն է, այլև պարտականությունը: Ծնողը, որպես իրավատեր, իրավունք ունի պահանջելու ապահովել երեխային դաստիարակելու իր իրավունքը, սակայն չի կարող «սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելու» հայեցակարգի հիմնավորմամբ հրաժարվել երեխային դաստիարակելու պարտականությունից: Պատահական չէ, որ ՀՀ քրեական օրենսգրքի 170-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում ծնողի կողմից երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելու սահմանափակումները կարող են արդարացված լինել, եթե դրանք նպատակաուղղված են հանրային շահերի պաշտպանությանը: Սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելու մասին օրենսդրական արգելքը կամ սուբյեկտիվ իրա-

վունքը միաժամանակ պարտականություն դիտարկելը պետք է հետապնդի հստակ իրավաչափ նպատակ, իրավատիրոջը պետք է հասկանալի և ընկալելի լինի սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելու սահմանափակումը: Օրինակ՝ ակնհայտ է այն նպատակը հանուն որի ՀՀ Սահմանադրությամբ երեխային դաստիարակել դիտվում է ծնողների ոչ միայն իրավունքը, այլև՝ պարտականությունը: Մյուս կողմից պետք է քննարկել քվեարկության գաղտնիության իրավունքը միաժամանակ որպես պարտականություն դիտելու իրավաչափությունը: ՀՀ ընտրական օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասում ընտրողի համար քվեարկության գաղտնիությունը սահմանված է ոչ միայն որպես իրավունք, այլև՝ պարտականություն: Օրենսդրի կողմից քվեարկության գաղտնիության իրավունքը միաժամանակ պարտականություն դիտարկելը կարող է իրավաչափ համարվել, եթե հնարավոր լիներ վերհանել ընտրողի համար քվեարկության գաղտնիությունը որպես պարտականություն դիտելու նպատակը, այն իրավական արժեքը, հանուն որի ընտրողը պարտականություն ունի գաղտնի պահել քվեարկությունը: Կարծում ենք, որ նման պարտականություն նախատեսելու իրավական արժեքը բացակայում է: Պատահական չէ, որ ՀՀ քրեական օրենսգրքի 154-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում քվեարկության գաղտնիությունն որևէ կերպ խախտելու համար, սակայն նշված նորմը չի կիրառվում այն դեպքերում, երբ քաղաքացիները լուսանկարում են իրենց քվեաթերթիկը և քվեարկությունից հետո սոցիալական ցանցերում հրապարակում այն: Գործնականում նման գործողությունները քրեաիրավական հետևանքներ չեն առաջացնում¹⁴:

Ինչ վերաբերում է սուբյեկտիվ իրավունքի հարկադիր իրականացմանը, ապա պետությունը ելնելով հասարակության խոցելի խմբերի

իրավունքների պաշտպանության հանրային շահերից, առանձին իրավիճակներում շեղվում է սուբյեկտիվ իրավունքն անձի կողմից ազատ հայեցողությամբ իրականացնելու պահանջից և պոզիտիվ իրավունքով նախատեսում է սուբյեկտիվ իրավունքի հարկադիր իրականացման կառուցակարգեր: Ի.Լ. Պետրովսիինը նշում է, որ մի շարք դեպքերում պետությունը շահագրգռված է որպեսզի սուբյեկտիվ իրավունքն իրականացվի նույնիսկ իրավատիրոջ կամքին հակառակ, այսինքն՝ հարկադրաբար: Այս դեպքում իրավունքը չի վերածվում պարտականության: Խոսքը սուբյեկտիվ իրավունքի պարտադիր իրականացման այն դեպքերի մասին է, երբ սուբյեկտը տարիքային, հոգեբանական սահմանափակումների կամ այլ պատճառներով չի կարող գիտակցել իր շահերը պաշտպանելու համար ընձեռված իրավական հնարավորության նշանակությունը¹⁵:

Պետությունը նախատեսում է սուբյեկտիվ իրավունքի հարկադիր իրականացման կառուցակարգեր, եթե հստակ հիմնավորում է իրավատիրոջ կողմից սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելու գիտակցական կամ կամային տարրերի բացակայությունը կամ սահմանափակ լինելը: Օրինակ՝ կասկածյալի կամ մեղադրյալի մոտ հոգեկան հիվանդության կամ ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարման առկայությունը պաշտպանի պարտադիր մասնակցության հիմք է: Նման դեպքում, եթե մեղադրյալը հրաժարվում է պաշտպանից, ապա Օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի չընդունել պաշտպանից կասկածյալի կամ մեղադրյալի հրաժարվելը և նշանակել պաշտպան կամ պահպանել նշանակված պաշտպանի լիազորությունները:

Կրկին ընդգծենք, որ սուբյեկտիվ իրավունքի հարկադիր իրականացումը պետք է

¹⁴ Կարծում ենք, որ նման իրավակիրառ պրակտիկան պայմանավորված է այն հանգամանքով, որ քվեարկության գաղտնիության իրավունքը, թեև օրենսդրի կողմից դիտարկվել է միաժամանակ պարտականություն, սակայն այդ պարտականությունը սահմանելու իրավաչափ նպատակն ընկալելի չէ ոչ միայն հասարակությանը, այլև ընտրողի կողմից քվեարկության գաղտնիությունը խախտելու հանրային վտանգավորությունը շոշափելի, տեսանելի չէ նաև իրավապահ մարմինների համար: Բացի այդ, քվեարկության գաղտնիության պահպանումը քաղաքական մշակույթի տիրույթում է: Եթե որևէ հանրային անձ (դերասան, քաղաքական գործիչ և այլն) հրապարակելով իր քվեարկությունը, կարող է ազդեցություն թողնել այլ անձանց ընտրության վրա, ապա նման հարաբերությունները պետք է կարգավորել ոչ թե իրավաբանական պարտականություն նախատեսելով, այլ՝ քաղաքական նորմերով:

¹⁵ Տեն Петрухин И. Л., “Свобода личности и уголовно-процессуальное принуждение”. М.: Наука, 1984. ст. 68-73.

արդարացված լինի հանրային շահով: Եթե հանրային շահը տեսանելի չէ, ապա սուբյեկտիվ իրավունքի հարկադիր իրականացումը կարող է ստեղծել առավել վտանգավոր վիճակ, քան եթե իրավատերը հնարավորություն ունենար հրաժարվելու սուբյեկտիվ իրավունքից: Ներկայացնենք ենթադրական օրինակ: Այսպես, կալանքի տակ գտնվող ամբաստանյալը գրավոր դիմում է դատարան՝ հայտնելով, որ հրաժարվում է դատական նիստին մասնակցելու իր դատավարական իրավունքից, քանի որ չի ցանկանում լսել իր դեմ ներկայացված շինծու ցուցմունքները: Ամբաստանյալը հայտնում է նաև, որ դատական քննության ընթացքում իր շահերը կներկայացնի պաշտպանը: Գործը քննող դատարանն ամբաստանյալին պարզաբանում է, որ Օրենսգրքի 302-րդ հոդվածի համաձայն՝ դատական քննությունը կատարվում է ամբաստանյալի մասնակցությամբ, որի դատարան ներկայանալը պարտադիր է, ուստի ամբաստանյալն իրավասու չէ հրաժարվել դատական քննությանը մասնակցելուց, հակառակ դեպքում նա դատական նիստին կներկայացվի հարկադրաբար: Դատական նիստի օրն ամբաստանյալը հրաժարվում է դուրս գալ կալանավորված անձանց պահելու վայրից և հայտարարում, որ եթե իրեն ուժով փորձեն տեղափոխել դատարան, ապա ինքն իր կյանքին վերջ կտա: ՀՀ ոստիկանության ուղեկցող գունդն ստեղծված իրավիճակի մասին հայտնում է դատարանին, սակայն վերջինս պարզաբանում է, որ օրենքով ամբաստանյալի մասնակցությունը պարտադիր է, ուստի՝ ՀՀ ոստիկանությունը պարտավոր է ապահովել նրա մասնակցությունը դատական նիստին: ՀՀ ոստիկանությունը դատարանի հանձնարարության հիման վրա հարկադրաբար ամբաստանյալին տեղափոխում են դատարանի վարչական շենքի համապատասխան սենյակ: Մինչև դատական նիստն սկսելը, ՀՀ ոստիկաններն ամբաստանյալին հայտնաբերում են ինքնասպան վիճակում: Կոնկրետ օրինակով առանձին պետք է քննարկել, թե արդյոք առկա է այն իրավաչափ նպատակը, որի պաշտպանության համար նախատեսվել է ամբաստանյալի՝ դատական նիստին մասնակցելու դատավարական իրավունքի հարկադիր իրականացում, արդյոք պաշտպանի

մասնակցությունն ինքնին չի ապահովում ամբաստանյալի դատավարական իրավունքների իրականացումը, արդյոք պետությունը, ամբաստանյալի դատավարական իրավունքը հարկադիր իրականացնելով, չի միջամտել նրա կյանքի իրավունքին:

Ելնելով վերը նշվածից, կարելի է եզրակացնել, մասնավորապես՝

1. իրավունքից հրաժարումը (abandon) իրավատիրոջ իրավաչափ որոշումն է կոնկրետ իրավիճակում չօգտագործել իրավական հնարավորությունը կամ դադարեցնելու իրավաօգտագործման փուլում գտնվող սուբյեկտիվ իրավունքը: Սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելն իրավատիրոջ ինքնավարության դրսևորման ձև է, իրավատիրոջ հայեցողությունն է տնօրինելու իր վարքագիծը: Անձը կարող է հրաժարվել ցանկացած սուբյեկտիվ իրավունքից, անկախ նրանից այն ամրագրված է ՀՀ Սահմանադրությունում կամ միջազգային պայմանագրերում, թե՛ օրենքներում: Սուբյեկտիվ իրավունքից կարելի է հրաժարվել այն չօգտագործելով (նյութաիրավական հրաժարում) կամ իրավաօգտագործման փուլում գտնվող իրավունքը դադարեցնելով (ընթացակարգային հրաժարում):
2. Սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելը կոնկրետ է և վերջնական: Սուբյեկտիվ իրավունքից կարելի է հրաժարվել ոչ թե ընդհանրապես, այլ կոնկրետ իրավահարաբերության շրջանակներում: Անձը, հրաժարվելով սուբյեկտիվ իրավունքից, պետք է գիտակցի, որ այլևս չի կարող փոխել մտադրությունը և վերակենդանացնել հրաժարված իրավունքը: Այս պահանջով ապահովվում է իրավական համակարգի որոշակիությունը և կանխատեսելիությունը: Բացառիկ դեպքերում է հնարավոր հրաժարված սուբյեկտիվ իրավունքի վերակենդանացում:
3. Առանձին ոլորտներում սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելու հետևանքով անձը կարող է հետագայում զրկվել առարկություն ներկայացնելու իրավունքներից: Նման իրավիճակ հնարավոր է էստոպելի ձևավորման դեպքում, որի համաձայն՝ նախորդող վարքագծի հետևանքով անձը զրկվում է առարկություն (պահանջ) ներկայացնելու կամ որոշակի փաստերի վրա հիմնվելու իրավունքից:

4. Անձը սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելիս դրսևորում է որոշակի վարքագիծ՝ գործողություն կամ անգործություն, որից օբյեկտիվորեն տեսանելի է սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելու նրա մտադրությունը: Կարելի է առանձնացնել սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելու հետևյալ ձևերը՝ անգործությամբ, միակողմանի գործողությամբ և երկկողմանի համաձայնություն:

Իրավախախտումը կամ իրավունքի չարաշահումն իրավունքից հրաժարում չէ:

5. Պոզիտիվ իրավական նորմերով կարող են սահմանափակվել իրավունքից հրաժարվելու դեպքերը՝ հրաժարման համար նախատեսելով իրավաչափության պայմաններ: Սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելու իրավաչափության ընդհանուր պայմանները վե-

րաբերում են իրավատիրոջ կամահայտնությամբ: Սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելն իրավաչափ է, եթե հրաժարումը կոնկրետ է, գիտակցված և կամավոր: Սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելու իրավաչափության հատուկ պայմանները վերաբերում են կոնկրետ տեսակի սուբյեկտիվ իրավունքին կամ գործում են հատուկ դեպքերում:

Պետությունը, ելնելով հասարակության խոցելի խմբերի իրավունքների պաշտպանության հանրային շահերից, առանձին իրավիճակներում շեղվում է սուբյեկտիվ իրավունքն անձի կողմից ազատ հայեցողությամբ իրականացնելու պահանջից և պոզիտիվ իրավունքի նորմերով նախատեսում է սուբյեկտիվ իրավունքի հարկադիր իրականացման կառուցակարգեր:



ԱՐԹՈՒՐ ՆԱԶԱՐԵԹՅԱՆ

Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի
«Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական
դատավարություն» ամբիոնի հայցորդ

ՎՃՌԱՔԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Իրավաբանական գրականության մեջ վճռաբեկ դատարանի լիազորությունները տարբեր կերպ են ընկալվում: Որոշ դատավարագետներ կարծում են, որ որոշման վճռաբեկ ստուգման փուլում դատարանի լիազորությունները պետք է հասկանալ երկու՝ լայն իմաստով որպես ստորադաս ատյանի դատարանի որոշումների օրինականության ու հիմնավորվածության ստուգում, և նեղ իմաստով՝ որպես ստուգման դատավարական հետևանքներ (բեկանում, որոշման փոփոխում և այլն)¹:

Այլ գիտնականների կարծիքով վճռաբեկ ատյանի դատարանի լիազորությունները հանգեցվում են ստուգվող գործի դատավարական հետևանքների որոշմանը²: Այս տեսակետն ավելի ճիշտ է համարվում, ուստի, խոսելով վճռաբեկ դատարանի լիազորությունների մասին, մենք ի նկատի ունենք ստուգվող գործի դատավարական հետևանքները:

Վճռաբեկ դատարանի լիազորությունները ոչ միայն անհրաժեշտ են վճռաբեկ վերանայման հատուկ գործառնության կատարման և դատական ակտերի օրինականության ու հիմնավորվածության ստուգման համար, այլ նաև որպես միջոց են ծառայում արդարադատության ընդհանուր նպատակին հասնելու համար, կանխորոշվում են այդ նպատակով:

Վճռաբեկ ատյանի դատարանի լիազորությունների ամբողջությունն իր բնույթով ու բովանդակությամբ տարատեսակ է: Տվյալ հանգամանքը պահանջում է այդ լիազորությունների դասակարգում՝ դրանց առավել էական գծերի ու բնորոշ հատկությունների բացահայտման նպատակով:

Դասակարգելով վճռաբեկ ատյանի դա-

տարանի լիազորությունները՝ Վ.Ս.Կալմացկին առանձնացնում է վճռաբեկ ատյանի դատարանի առարկայական, գործառնության և ապացուցողական լիազորություններ: Առարկայական լիազորությունների տակ նա հասկանում է ստորադաս ատյանի դատարանի վճիռների օրինականության ու հիմնավորվածության ստուգման դեպքում իրավունքների ու պարտականությունների ամբողջությունը, իսկ գործառնության լիազորությունների տակ՝ ստորադաս ատյանի դատարանի վճիռների ստուգման դեպքում տարբեր դատավարական գործողությունների կատարման և օրինականության հայտնաբերված խախտումներին արձագանքելու վերաբերյալ իրավունքների ու պարտականությունների ամբողջություն, իսկ ապացուցողական լիազորությունների տակ՝ ստորադաս ատյանի դատարանների կողմից ուսումնասիրված և գնահատված ապացույցների վերաբերյալ լիազորություններ, որոնց իրագործումը կայանում է «վճռաբեկ ատյանի դատարանի կողմից գործում առկա կամ դրան կցված նյութերի հիման վրա գործի հանգամանքներն իմանալու (հասկանալու) և բողոքարկված վճռի կամ որոշման մեջ առկա եզրակացությունների հետ միասին իր եզրակացությունները կազմելու մեջ»³:

Ի.Մ.Ջայցևը վճռաբեկ դատարանի լիազորությունները բաժանում է 4 խմբի.

- սահմանված կարգով գործերը քննելու լիազորություններ (դատական նիստի անցկացում, համապատասխան որոշման կայացում և դրանց արտաքին թերությունների շտկում),

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 91 2016

¹ Стен Юдельсон К.С., “Советский гражданский процесс” М., 1956, ст. 350-352.

² Стен “Советский гражданский процесс: Учебник” / Под ред. М.А.Гурвича, М., 1967, ст. 269-296, “Гражданский процесс: Учебник” / Под ред. Н.А.Чечиной, Д.М.Чечот, М., 1968, ст. 297-321.

³ Стен Калмацкий В.С., “Суд второй инстанции как субъект советского гражданского процессуального права”, Автореф. дисс. канд. юрид. наук. Свердловск, 1978, ст. 9-15.

- բողոքարկված վճիռների և որոշումների օրինականության և հիմնավորվածության ստուգման լիազորություններ,
- հայտնաբերված դատական սխալների շտկման լիազորություններ ոչ իրավաչափ որոշումները բեկանելու և փոփոխելու, դրանք սեփական որոշումներով փոխարինելու ձևով,
- ստորադաս դատարանների գործունեության մեջ դատական սխալների նախականիման լիազորություններ, իրավունք՝ ցուցումներ տալ այն մասին, թե ինչ դատավարական գործողություններ պետք է կատարի ստորադաս ատյանի դատարանը գործի նոր քննության ժամանակ, ստորադաս դատարանների հասցեին մասնավոր որոշումներ կայացնելու իրավունք⁴:

Բերված դասակարգումներից յուրաքանչյուրը, անկասկած, ունի իր արժեքը և թույլ է տալիս խորապես հասկանալ երրորդ ատյանի դատարանի լիազորությունների բնույթն ու բովանդակությունը:

Դրա հետ մեկտեղ հնարավոր է նաև վճռաբեկ դատարանի լիազորությունների այլ դասակարգում, որի համար հիմք է ծառայում ստորադաս ատյանի դատարանների գործառույթների հետ այդ լիազորությունների կապը:

Առաջին խումբը կազմում են վճռաբեկ դատարանի այն լիազորությունները, որոնք կարող են կոչվել հիմնական: Դրանք այն լիազորություններն են, որոնք պայմանավորված են վճռաբեկ դատարանի հիմնական, այսինքն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելու գործառույթով:

Հիմնական լիազորությունների խմբում պետք է ներառել որոշումն անփոփոխ, իսկ բողոքը՝ առանց բավարարման թողնելու, որոշումն ամբողջությամբ կամ մասնակի բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու, մասնավոր բողոքն առանց բավարարման թողնելու, ինչպես նաև ստորադաս ատյանի դատարանի վճիռների և որոշումների արտաքին

թերությունների շտկման, վճռաբեկ վարույթի դադարեցման վերաբերյալ լիազորությունները:

Երկրորդ խումբը կազմում են վճռաբեկ դատարանի ածանցյալ լիազորությունները, որոնց իրագործումը բնորոշվում է վճռաբեկ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանի լիազորությունները փաստացի իր վրա վերցնելու գործառույթով: Այստեղ պետք է ներառել նոր որոշում կայացնելու, որոշումը փոփոխելու, գործով վարույթը դադարեցնելու, դիմումն առանց քննության թողնելու, ստորադաս ատյանի դատարանի որոշումը բեկանելուց հետո գործը նոր քննության ուղարկելու հարցը լուծելու, ստորադաս ատյանի դատարանի վճռի կամ որոշման արտաքին թերությունների շտկման լիազորությունները:

Տվյալ լիազորությունները հատուկ են միայն վերահսկիչ գործառույթներ իրականացնող դատական ատյանին:

Դատական ակտերը վճռաբեկության կարգով վերանայելիս վճռաբեկ դատարանը, վճռաբեկ բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում քննելով գործը, անշուշտ, հաշվի է առնում (գնահատում է) վճռաբեկ բողոքին կցված փաստաթղթերը, իրեն ներկայացված կամ վճռաբեկ նիստում գործին մասնակցող անձանց կողմից տրված բացատրությունները, սակայն նա իրավունք չունի այդ նյութերի հիման վրա փոփոխել օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը: Նման դեպքերում նա միաժամանակ իրավունք չունի կայացնելու գործն ըստ էության լուծող նոր դատական ակտ, որովհետև առաջին ատյանի կամ վերաքննիչ դատարանները նոր նյութերը չեն քննարկել և իրենց կայացրած ակտերի հիմքում չեն դրել, իսկ ինքը՝ վճռաբեկ դատարանը գործն ըստ էության չի քննում, գործի հանգամանքները չի հաստատում և ապացույցներ չի հետազոտում⁵:

Վճռաբեկ դատարանի լիազորությունները սպառիչ կերպով թվարկված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240 հոդվածում, որի համաձայն՝ գործն ըստ էության

⁴ Տե՛ս Зайцев И.М., “Устранение судебных ошибок в гражданском процессе”, Саратов, 1985, ст. 111-112.

⁵ Տե՛ս Ռ.Գ. Պետրոսյան, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն, չորրորդ հրատ.», Երևան, Ոսկան Երևանցի, 2012թ., էջ 523:

լուծող դատական ակտերի վերանայման արդյունքում վճռաբեկ դատարանը՝

1) մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ: Այս դեպքում, վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը, սակայն եթե դատարանի կայացրած՝ գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի կամ սխալ է պատճառաբանված, ապա վճռաբեկ դատարանը պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը:

2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վճռաբեկ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մնում է օրինական ուժի մեջ:

3) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և հաստատում կողմերի հաշտության համաձայնությունը:

4) մասնակիորեն բեկանում և փոփոխում է ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

5) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը կամ առանց քննության է թողնում հայցն ամբողջովին կամ դրա մի մասը:

6) վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը փոփոխվելու դեպքերում վճռաբեկ դատարանն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ օրինական ուժ տալով առաջին ատյանի դատարանի դատական ակտին: Այս դեպքում վճռաբեկ դատարանը լրացուցիչ պատճառաբանում է առաջին ատյանի դատարանի դատական ակտը, եթե այն թերի կամ սխալ է պատճառաբանված:

2. Միջանկյալ դատական ակտերի վերա-

նայումից հետո վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ կամ կայացնում է նոր դատական ակտ, որն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից:

Այժմ համառոտակիորեն անդրադառնանք վերը նշված լիազորություններին: Ինչպես նշվեց, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, իսկ այն դեպքերում, երբ վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը, սակայն դատարանների կայացրած գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտերը թերի պատճառաբանված, սխալ պատճառաբանված կամ չպատճառաբանված են, ապա պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը: Այս լիազորությունն ունի օրինական ուժի մեջ թողնված դատական ակտը համոզիչ դարձնելու նպատակ: Վճռաբեկ ատյանի կողմից որոշումն անփոփոխ թողնելը՝ իրավաբանական փաստ է, որի գլխավոր հետևանքը կայանում է ստորադաս ատյանի դատարանի որոշման օրինական ուժի ձեռքբերման և այդ հատկությունների իրագործման հնարավորության մեջ:

Վճռաբեկ դատարանի վրա պարտականություն է դրված արձագանքելու ստորադաս ատյանի դատարանի կողմից գործի լուծման ժամանակ թույլ տրված ցանկացած սխալի: Վճռաբեկության կարգով ստուգելով գործը՝ վճռաբեկ դատարանը կարող է երևան հանել առանձին դատավարական խախտումներ, որոնք չեն ազդել կայացված որոշման օրինականության ու հիմնավորվածության վրա: Ըստ Օ.Վ.Ժուկովայի՝ վճռաբեկ դատարանը չբեկանելով որոշումը պարտավոր է այդ դեպքում վճռաբեկ կամ մասնավոր որոշման մեջ նշել ստորադաս ատյանի դատարանի աշխատանքում հայտնաբերված թերությունների մասին⁶:

Իրավաբանական գրականության մեջ այս հարցում կա նաև այլ տեսակետ:

Վճռաբեկ ատյանն իրավասու է կայացնել մասնավոր որոշումներ, երբ տարբեր կազմակերպությունների աշխատանքում հայտնաբեր-

⁶ St'u Жукова О.В., «Кассационное производство в гражданском процессе: Учеб. пособие». Тверь, 2005. ст. 64.

վում են էական թերություններ, քաղաքացիների իրավունքների ու ազատությունների խախտումներ, օրենքների չիրագործում և այլ բացասական երևույթներ, եթե ստորադաս ատյանի դատարանը մասնավոր որոշում չի կայացրել: «Դատարանի նման բացթողումը կարող է հիմք հանդիսանալ առաջին կամ վերաքննիչ (Ա.Ն.) ատյանի դատարանի հասցեին մասնավոր որոշում կայացնելու համար⁷»: Այս կապակցությամբ պետք է նշել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը մասնավոր որոշումներ կայացնելու մասին նորմ չի պարունակում: Մասնավորապես օրենսգրքի 240.1 հոդվածի 2-րդ կետի համաձայն վճռաբեկ դատարանը, պարզելով, որ գործը քննած դատարանի թույլ տված իրավունքի հարցերի խախտումները հիմք չեն վճռի բեկանման համար, պետք է դրանց մասին նշի կայացրած որոշման մեջ: Սա, իհարկե, մասնավոր որոշում չէ, սակայն չափազանց կարևոր պահանջ է՝ ուղղված ստորադաս դատարաններին՝ խախտումներ թույլ չտալու համար: Ինչ վերաբերում է քաղաքացիների կամ կազմակերպությունների և պաշտոնատար անձանց կողմից օրինականության խախտումներ թույլ տալու դեպքերին, ապա, մեր կարծիքով, նախապատրաստվող նոր քաղաքացիական դատավարության օրենսգրքում անպայման պետք է Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ և 268-րդ հոդվածներում նշված դեպքերում պարտավորեցնել վճռաբեկ դատարանին կայացնելու մասնավոր որոշումներ:

Հաշվի առնելով վերը շարադրվածը, առաջարկում ենք օրենսգրքի 240-րդ հոդվածը լրացնել 3-րդ կետով հետևյալ բովանդակությամբ. **«3. Օրինականության խախտման դեպքեր հայտնաբերելիս վճռաբեկ դատարանը կայացնում է մասնավոր որոշումներ և այն ուղարկում է համապատասխան կազմակերպություններին ու պաշտոնատար անձանց, որոնք պարտավոր են մեկ ամսվա ընթացքում հարթել օրինականության խախտման իրավական հետևանքները»:**

Ստորադաս ատյանի դատարանի կողմից քաղաքացիական դատավարության օրենսգրք-

քի նորմերի խախտման վերաբերյալ (օրինակ՝ գործը ոչ ժամանակին վարույթ ընդունելու, գործի քննության ժամկետների խախտման, միջնորդությունները ոչ ժամանակին քննելու, հայցը բավարարելուց անհիմն մերժելու փաստերի դեպքերում և այլն) վերը նշված որոշումները կայացնելու ձևով արձագանքելու վճռաբեկ ատյանի դատարանին այդ իրավունքից զրկելը չի նպաստում քաղաքացիական դատավարության խնդիրների լուծմանը:

Դատական պրակտիկան վկայում է, որ դատարանների հասցեին կայացվող որոշումների առավել հաճախ հանդիպող պատճառներ են՝ ստորադաս ատյանի կողմից գործը քննելու համար ոչ պատշաճ նախապատրաստումը, ընդդատության կանոնների խախտմամբ գործերի լուծումը, գործերի քննության ժամկետների խախտումը և նյութական ու դատավարական իրավունքի նորմերի այլ խախտումները:

Վճռաբեկ դատարանի կողմից օրինականության խախտման նկատմամբ այդպիսի դատավարական արձագանքը բավականին արդյունավետ միջոց է, որը կապահովի քաղաքացիական դատավարության նպատակներին հասնելուն: Այս լրացումը դատական պրակտիկայում կունենա նախականիսի նշանակություն և լրացուցիչ ազդակ կհանդիսանա ստորադաս դատարանների համար, որպեսզի գործերի քննությունն իրականացնեն օրինականության տառին և ոգուն համապատասխան:

Վճռաբեկ դատարանն ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վճռաբեկ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը: Բեկանված մասով գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մնում է օրինական ուժի մեջ (հոդված 240, 2-րդ կետ): Վճռաբեկ դատարանն այդպես է վարվում, եթե ստորադաս ատյանի դատարանի կողմից թույլ տրված խախտումներն ինքն ուղղել չի կարող: Օրինակ՝ երբ ստորադաս ատյանը չի պարզել գործի լուծման համար էական

⁷ Ст'я "Комментарий к Гражданскому процессуальному кодексу Российской Федерации" /Отв. ред. М.С. Шакарян, М., 2003, ст. 591.

նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները կամ այդ հանգամանքները չի հաստատել անհրաժեշտ ապացույցներով կամ իր կողմից հաստատված հանգամանքներից սխալ հետևություններ է արել կամ թույլ է տվել օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ կետում թվարկված դատավարական խախտումներ կամ որոշում է կայացրել օրենսգրքի 227-րդ հոդվածում նշված նյութական իրավունքի նորմերի խախտմամբ: Գործը նոր քննության ուղարկելու որոշման մեջ վճռաբեկ դատարանը ոչ միայն պետք է նշի վերը բերված հիմքերը, այլև այն, թե ինչու ինքը չի կարող փոփոխել վերաքննիչ ատյանի վճիռը: Նա սահմանում է նաև ստորադաս ատյանի վերադարձվող գործի նոր քննության ծավալը:

Ըստ Ռ.Ֆ.Կալլիստրատովայի՝ ցուցումները դատարանին օգնում են հասկանալ օրենքի իրական իմաստը և ճիշտ լուծել կողմերի միջև վեճը: Ստորադաս ատյանի դատարանի կողմից վերադաս դատարանի ցուցումները չկատարելը և, որպես դրա հետևանք, վեճի ոչ ճիշտ լուծումը կհանգեցնի որոշումը կրկին բեկանելուն: Սակայն բեկանելու համար հիմք է հանդիսանում ոչ թե հենց ինքը՝ ցուցումների չկատարումը, այլ գործի փաստական հանգամանքների ուսումնասիրման մեջ թույլ տրված բացթողումը⁸:

Ըստ Ն.Պ.Էլիզարովի՝ «Վերադաս (վճռաբեկ՝ Ա.Ն.) դատարանը իրավասու չէ կայացնել նոր որոշում այն ապացույցների հիման վրա, որոնք չնայած առկա են գործում, բայց վերաքննիչ դատարանի ստուգման առարկա չեն հանդիսացել: Այս հարցի այլ լուծումը կհանգեցնի առաջին ու վերաքննիչ ատյանների և վճռաբեկ դատարանների միջև իսկապես գործող սահմանի վերացմանը, քանի որ ստորադաս դատարանի կողմից չքննված ապացույցների հիման վրա որոշում կայացնելու իրավունքը վճռաբեկ դատարանին վերապահելը փաստացի կնշանակեր՝ նրան օժտել առաջին ատյանի դատարանի գործառույթով: Նոր որոշում կայացնելը հնարավոր է միայն այն դեպքում, եթե չի պահանջվում փոփոխություններ

մտցնել գործի փաստական հանգամանքների մասին եզրակացություններում, որոնք շարադրված չեն ստորադաս դատարանի որոշման մեջ⁹:

Գործը նոր քննության ուղարկելու որոշման մեջ վճռաբեկ դատարանը չի անդրադառնում ստորադաս ատյանի դատարանում գործն այլ դատավորի քննությանը հանձնելուն, քանի որ այդ հարցն արդեն իսկ լուծված է դատական օրենսգրքի 91-րդ հոդվածում:

Վճռաբեկ դատարանն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և հաստատում է կողմերի հաշտության համաձայնությունը (հոդված 240, 3-րդ կետ): Այս կապակցությամբ պետք է նկատի ունենալ, որ կողմերը դատական բոլոր ատյաններում հաշտության համաձայնություն կարող են կնքել միայն հայցային վարույթի գործերով: Հաշտության համաձայնությունը, ինչպես որ ցանկացած տնօրինչական գործողություն, իրականացվում է դատարանի հսկողության ներքո: Դատարանն ամեն անգամ պետք է ստուգի, թե հաշտության համաձայնությունը չի հակասում արդյոք օրենքին կամ չի խախտում այլ անձանց իրավունքներն ու շահերը:

Վճռաբեկ դատարանը մասնակիորեն բեկանում կամ փոփոխում է ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից (հոդված 240, 4-րդ կետ):

Ստորադաս ատյանի դատարանի դատական ակտը մասնակիորեն բեկանվում և փոփոխվում է այն դեպքում, երբ օրինակ՝ ստորադաս դատարանը գործի հանգամանքները պարզել է լրիվ և ճիշտ, նոր ապացույցներ հավաքելու կամ հետազոտելու անհրաժեշտություն չկա, բայց սխալ է թույլ տվել նյութական օրենքի կիրառման հարցում, այսինքն՝ երբ ստորադաս դատարանի հաստատած հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման (փոփոխված) ակտ և «եթե դա բխում է

⁸ St'u Каллистратова Р.Ф., «Обязательность указаний вышестоящего суда при новом рассмотрении дела/Ученые записи ВИЮН», Вып. 10, М., 1959, ст. 79-83.

⁹ St'u Елизаров Н.П., «Предупреждение и устранение нарушений гражданского законодательства областным /краевым/ судом». М., 1977, ст. 15.

արդարադատության արդյունավետության շահերից»:

Մեր կարծիքով վերջին դարձվածքը դատարանների կամայականության հնարավորություն է ստեղծում, որովհետև միշտ էլ վիճելի է մնում, թե արդարադատության շահերից բխելու հանգամանքն արդյոք հակասության մեջ չի գտնվում գործին մասնակցող այս կամ այն անձի շահերի հետ:

Անդրադառնալով օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով վճռաբեկ դատարանին տրված լիազորության սահմանադրականության հարցին՝ ՀՀ Սահմանադրական դատարանը դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ այդ լիազորությունը կարող է կիրառվել բոլոր այն դեպքերում, երբ ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները թույլ են տալիս վճռաբեկ դատարանին ստորադաս դատարանի ակտից տարբերվող ակտ կայացնելու և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից: Հաշվի առնելով նշված իրավակարգավորման առկայությունը՝ ՀՀ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի ակտը փոփոխելը կարող է տեղի ունենալ բացառապես հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությամբ, որոնք մի կողմից, վճռաբեկ դատարանին պահում են իր սահմանադրաիրավական կարգավիճակում, մյուս կողմից՝ երաշխավորում են արդար դատաքննության և դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքները: Դրանք են, մասնավորապես՝

ա) ՀՀ վճռաբեկ դատարանը հետազոտության առարկա չի դարձնում որևէ փաստական հանգամանք, այլ իր սահմանադրաիրավական կարգավիճակին համահունչ անդրադառնում է միայն իրավունքի հարցերին,

բ) ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները պետք է հնարավորություն տան վճռաբեկ դատարանին կայացնելու ստորադաս դատարանի ակտից տարբերվող ակտ,

գ) վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի ակտը փոփոխելը պետք է

բխի արդարադատության արդյունավետության շահերից,

դ) այդպիսի որոշման հիմք կարող է հանդիսանալ միայն ստորադաս դատարանի կողմից նյութական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը:

Նման գործերի քննության ժամանակ պետք է հաշվի առնվեն նաև օրենսգրքի 227-րդ հոդվածով նախատեսված դատավարության սկզբունքները¹⁰:

Վճռաբեկ դատարանն իրավասու է նաև ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանել դատական ակտը և կարճել գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը կամ առանց քննության թողնել հարցն ամբողջովին կամ դրա մի մասը (հոդված 240, 5-րդ կետ): Այստեղ փաստորեն բացահայտված չէ, թե որ դեպքերում է կարճվում գործը կամ հայցն առանց քննության թողնվում: Նշված կետը, մեր կարծիքով, նախ և առաջ ունի հստակեցման կարիք այն առումով, թե որ դեպքերում է կարճվում գործով վարույթը կամ հայցն առանց քննության թողնվում:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ առաջարկում ենք օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետը փոփոխել և շարադրել հետևյալ բովանդակությամբ. «5) սույն օրենսգրքի 233.1 հոդվածով նախատեսված հիմքերի առկայության դեպքում ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը կամ առանց քննության է թողնում հայցն ամբողջովին կամ դրա մի մասը»:

Նշված լրացումը ավելի ամբողջական կդարձնի վճռաբեկ դատարանի նշված լիազորությունը և կբացառի նշված լիազորության կամայական մեկնաբանությունը:

Վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը փոփոխելու դեպքերում վճռաբեկ դատարանն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ օրինական ուժ տալով առաջին ատյանի դատարանի դատական ակտին: Այս դեպքում վճռաբեկ դատարանը լրացուցիչ պատճառաբանում է առաջին ատյանի դատարանի

¹⁰ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ ՍԴՈ-832 որոշման 9-րդ կետը:

դատական ակտը, եթե այն թերի կամ սխալ է պատճառաբանված (հոդված 240, 1-ին կետի 6-րդ ենթակետ):

Սահմանադրական դատարանը վերոհիշյալ որոշմամբ միաժամանակ արձանագրում է, որ վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանված լինելու պահանջը, ի թիվս այլոց, ենթադրում է նաև խնդրո առարկա հայեցողական լիազորությունից օգտվելիս արդարադատության արդյունավետության շահի առկայության հիմնավորումը՝ որպես այդ լիազորության կիրառման իրավաչափության երաշխիք: Մինչդեռ իրավակիրառական պրակտի-

կայի ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ այդ պահանջին մի շարք դեպքերում ձևական մոտեցում է ցուցաբերվում: Վերջինս, սակայն ոչ թե օրենքի դրույթի սահմանադրականության, այլ հիմնավորված կիրառելու խնդիր է¹¹:

Ինչ վերաբերում է միջանկյալ դատական ակտերին, ապա դրանց վերանայումից հետո վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, կամ կայացնում է նոր դատական ակտ, որն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից:



¹¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ ՍԴՈ-832 որոշման 9-րդ կետը:

ԱԻՂԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի օգնական, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի իրավագիտության ամբիոնի ասպիրանտ

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՅԱՌՈՂ ՀԱՆՔԱՄԱՆՔՆԵՐԻ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Քրեական դատավարության օրենսդրության նպատակներից է անձի իրավունքների և ազատությունների երաշխավորման վրա հիմնված վարույթի իրականացման արդյունավետ կարգի սահմանումը: Հիշյալ նպատակի կենսագործումը մեծապես պայմանավորված է վարույթի համապատասխան մասնակիցների՝ քրեական գործով շահագրգռված չլինելու և նրանց կողմից իրենց դատավարական լիազորությունները, իրավունքներն ու պարտականությունները պատշաճ կատարելու հանգամանքներով: Դատախազը, քննիչը, քննչական բաժնի պետը, հետաքննության մարմնի պետը և աշխատակիցը վարույթի հանրային մասնակիցներն են, ովքեր դրական (պոզիտիվ) պատասխանատվություն են կրում իրենց պաշտոնական գործառույթները, պարտականությունները պատշաճ իրականացնելու համար, ի պաշտոնե պարտավոր են օրենքով նախատեսված դեպքերում և կարգով դրսևորել ակտիվություն, կատարել անհրաժեշտ գործողություններ և ընդունել որոշումներ¹: Ինչպես նշում է Ս.Ս.Ամպենովը, հանրային իշխանական լիազորություններով օժտված քրեական վարույթի մասնակիցների մասնակցությունը բացառող հանգամանքների առկայության դեպքում տվյալ անձանց բացարկ հայտնելու մասնավոր մասնակիցների սուբյեկտիվ իրավունքը հանդիսանում է վերջիններիս իրավունքների և օրինական

շահերի պաշտպանության հիմնարար միջոց, քանի որ հնարավորություն է ընձեռում վարույթից հեռացնել հանրային լիազորությունների լուրջ ծավալով օժտված մասնակիցներին, որոնց օբյեկտիվությունն ու անաչառությունը կասկածի տակ դնելու հիմնավոր պատճառներ կան, որպիսի հանգամանքը կարող է արմատապես ազդել գործի քննության բովանդակության և ընթացքի վրա²: Վարույթի քննարկվող մասնակիցների մասնակցությունը բացառող հանգամանքների օրենսդրական հստակ ամրագրումը հանդիսանում է վերջիններիս կողմից կատարվող դատավարական գործողությունների և կայացվող դատավարական որոշումների օրինականության գործուն երաշխիք և գործով ձեռք բերված ապացույցների թուլատրելիության պարտադիր պայման³:

Վարույթին հանրային մասնակիցների մասնակցությունը բացառող հանգամանքները սահմանվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 91՝ «Դատախազին բացարկելը», և 92՝ «Քննիչին կամ հետաքննության մարմնի աշխատակցին բացարկելը», հոդվածներով, որոնց համաձայն դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմնի աշխատակիցը չի կարող մասնակցել քրեական գործով վարույթին, եթե առկա է օրենսգրքի 90 հոդվածով նախատեսված հանգամանքներից որևէ մեկը: Օրենսգրքի 90 հոդվածով նախա-

¹ Տե՛ս Հովսեփյան Ա., Թամազյան Ա., Ղամբարյան Ա., Շահնազարյան Վ., «Քրեական վարույթի հանրային մասնակիցների փոխհարաբերությունները», Եր.: Ասողիկ, 2015, էջ 5:
² Տե՛ս Ампов С. С., «Обстоятельства, исключая участие в уголовном судопроизводстве»: дис. канд. юрид. наук, Тюмень, 2010, с. 97-98.
³ Տե՛ս «Комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации (постатейный): Изд. 2-е» / ред. О. А. Галустьян.- М.: РИОР, ИНФРА-М, 2010 с.150.

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 91 2016

տեսված վարույթին դատավորի մասնակցությունը բացառող հանգամանքներն ընդհանուր բնույթ են կրում, ուստի նաև վարույթի հանրային մասնակիցների մասնակցությունը բացառող հանգամանքներ են⁴: Մասնավորապես.

1) *կանխակալ վերաբերմունք ունի որպես կողմ հանդես եկող անձի, նրա ներկայացուցչի, պաշտպանի, դատավարության այլ մասնակիցների նկատմամբ*

«Կանխակալությունը» նախապես ունեցած կարծիքի վրա հիմնված նախատրամադրվածությունն է՝ դրական կամ բացասական, ընդ որում՝ խնդրո առարկա հարցի շրջանակներում պետք է ընդգծել, որ վարույթի հանրային մասնակցի՝ վարույթի ընթացքում ձևավորված դիրքորոշումը չի կարող որակվել իբրև կանխակալություն, օրինակ՝ դատախազի կողմից մեղադրական եզրակացությունը հաստատելը: Համանման դիրքորոշում է հայտնել նաև Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը Դակտարասն ընդդեմ Լիտվայի (Daktaras v. Lithuania, 42095/98,) գործով 2000 թվականի հոկտեմբերի 10-ի վճռի 44-րդ կետում նշելով. «(...) սույն գործով վիճարկվող հայտարարությունները դատախազի կողմից կատարվել են ոչ թե քրեական դատավարությունների ենթատեքստից դուրս՝ որպես մամլո ասուլիսի մաս, այլ այդ դատավարությունների նախնական քննության փուլում գործի քննությունը կարճելու մասին դիմողի պահանջը մերժելու վերաբերյալ պատճառաբանված որոշման կայացման լույսի ներքո: (...) Դատարանը հետազայում նշում է, որ իր որոշման մեջ պնդելով, որ դիմողի մեղքը «ապացուցվել է» գործում առկա ապացույցներով, դատախազը կիրառել է այն նույն եզրույթը, որը կիրառվել է դիմողի կողմից, ով գործի վարույթը կարճելու վերաբերյալ իր պահանջի մեջ նշել է, որ իր մեղքը չի «ապացուցվում» գործում առկա ապացույցներով: Թեև «ապացուցված է» եզրույթի կիրառումն անհաջող է, սակայն Դատարանը, անդրադառնալով այն

ենթատեքստին, որում բառը կիրառվել է, գտնում է, որ երկուստեք՝ դիմողը և դատախազը, նկատի են ունեցել ոչ թե այն, որ դիմողի մեղքը հաստատվել է դատախազի որոշման հիմքում չդրված ապացույցով, այլ այն, որ գործի նյութերում առկա են բավարար ապացույցներ գործը դատական քննության ուղարկելու համար: (...) Այս հանգամանքներում Դատարանը եզրակացնում է, որ դատախազի՝ 1996 թվականի հոկտեմբերի 1-ի որոշման մեջ նշված դրույթները չեն խախտում անմեղության կանխավարկածը⁵: Պրիբկեն ընդդեմ Իտալիայի (Priebke v. Italy, 48799/99) գործով Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը 2001 թվականի ապրիլի 5-ի վճռում նշել է. «(...) իր հայտարարության մեջ դիմողը, մասնավորապես, մատնանշում է այնպիսի հանգամանքներ, որոնք ապացուցում են իրեն անօրինական կարգով հետաքննությանը մասնակից դարձնելու փաստը: (...) 1996 թվականի մայիսի 10-ի դատական նիստի ժամանակ դատախազության ներկայացուցիչը հրապարակայնորեն հայտարարել է դիմադրությանն իր մասնակցության մասին՝ միաժամանակ ցուցաբերելով լիակատար անտարբերություն հակառակորդի ճամբարում կռվողների նկատմամբ:

b) Դատարանը հիշեցնում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված անկախության և անաչառության երաշխիքները վերաբերում են միայն տվյալ քրեական գործը քննող դատական ատյանին և դա չի կիրառվում դատախազության ներկայացուցչի նկատմամբ, որը հանդիսանում է մրցակցային դատավարության կողմերից մեկը⁶: Այսպիսով, վարույթի հանրային մասնակիցների՝ որևէ փաստի առկայության կամ բացակայության, անձի բնութագրի և վարույթի առարկայի հետ կապված ու վարույթի շրջանակներում ձևավորված դիրքորոշումը չի կարող որակվել իբրև կանխակալություն: Հարկ է նշել, որ վարույթի հանրային մասնակիցներին քննարկվող հիմքով բացարկ

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 91 2016

⁴ Տե՛ս Թադևոսյան Ա., «Վարույթին դատավորի մասնակցությունը բացառող հանգամանքներն ըստ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի», // Դատական իշխանություն, 7-8/181-182, հուլիս-օգոստոս, 2014, էջեր 102-112:
⁵ Տե՛ս Մաքբրայդ Զ., «Մարդու իրավունքները և քրեական դատավարությունը: Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան», - Եր.: Անտարես, 2009, էջեր 42-43:
⁶ Տե՛ս Մաքբրայդ Զ., «Մարդու իրավունքները և քրեական դատավարությունը: Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան», - Եր.: Անտարես, 2009, էջ 43:

հայտնելու համար հանրային մասնակցի կանխակալության ապացուցման բեռը կրում է բացարկ հայտնողը, քանի որ տվյալ պարագայում առկա է վարույթի հանրային մասնակցի անկողմնակալության կանխավարկած՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ վարույթի հիշյալ մասնակիցներն ի պաշտոնե դատախազական հսկողություն, նախաքննություն, հետաքննություն իրականացնում են բացառապես իրավունքի շահից ելնելով:

2) որպես մասնավոր անձ, ականապես է այն փաստերին, որոնք վիճարկվում են դատաքննության ընթացքում

Տվյալ պարագայում վարույթի հանրային մասնակիցները վարույթի ընթացքում քննվող փաստերին իրազեկ լինելով, այդ թվում՝ նաև ականատես լինելու եղանակով, դրանց վերաբերյալ ձևավորում են նախնական դիրքորոշում, որպիսի փաստը ողջամտորեն կարող է խոչընդոտել գործի օբյեկտիվ քննության իրականացմանը: Կարծում ենք, որ մեկնաբանվող հիմքի ուժով վարույթի հանրային մասնակիցը պարտավոր է ինքնաբացարկ հայտնել նաև իր ծառայողական լիազորությունների շրջանակներում վարույթի ընթացքում քննվող փաստերին ականատես լինելու կամ այլ կերպ իրազեկվելու դեպքերում: Օրինակ՝ առերեսման ընթացքում քննիչն ականատես է լինում մի մեղադրյալի կողմից մյուսի առողջությանը ծանր վնաս պատճառելու հանցագործության դեպքին: Բնդրո առարկա հարցի շրջանակներում ուշադրության է արժանի Կ.Բ. Կալինովսկու դիրքորոշումը սույն հարցի կապակցությամբ: Վերջինս նշում է, որ ի տարբերություն դատավորի, որի համար արտադատավարական իրազեկվածությունը կարող է վերջինիս կողմնակալության կանխավարկածի հիմք հանդիսանալ, մեղադրանքի կողմի համար նման մտավախությունը բացակայում է՝ նկատի ունենալով, որ վերջինս գործի լուծման ֆունկցիա չի իրականացնում, հետևաբար հիշյալ հանգամանքի առկայության դեպքում վարույթին քննիչի կամ հետաքննության մարմնի աշխատակցի մասնակցությունը կբացառի ոչ թե նախնական իրազեկվածության, այլ որպես

վկա ցուցմունք տալու ֆունկցիա իրականացնելու համար⁷: Ելնելով վերոգրյալ եզրահանգումներից՝ Կ.Բ. Կալինովսկին առաջարկում է սույն հիմքը որպես վարույթին քննիչի, ինչպես նաև դատախազի, հետաքննության մարմնի աշխատակցի մասնակցությունը բացառող հանգամանք դիտել միայն այն դեպքում, երբ գործով բացակայում են այլ վկաներ, որոնք կարող են համապատասխան ցուցմունք տալ⁸:

3) *Նա կամ նրա ամուսինը կամ նրանց հետ արյունակցական՝ մինչև 3-րդ աստիճանի կապի մեջ գտնվող անձը ողջամտորեն կհանդիսանա (հիմքեր ունի կարծելու, որ նա կհանդիսանա) գործին մասնակցող անձ կամ մասնակցել է փվյալ գործի քննությանը որպես գործին մասնակցող անձ:*

Ներկայացվող հիմքով վարույթի հանրային մասնակցի կողմից ինքնաբացարկ ներկայացնելու կամ վարույթի համապատասխան մասնակիցների կողմից վերջիններիս բացարկ հայտնելու համար կարևոր պայման է, որպեսզի վարույթի հանրային մասնակիցը կամ նրա ամուսինը կամ նրանց հետ ազգակցական՝ մինչև 3-րդ աստիճանի կապի մեջ գտնվող անձը.

1. հանդիսացած լինի վարույթին գործին մասնակցող անձ (օրինակ՝ գործով հետաքննություն իրականացրած անձը հանդիսանում է նախաքննություն իրականացրած քննիչի եղբորորդին),

2. հանդիսանում է գործին մասնակցող անձ (օրինակ՝ մեղադրյալի պաշտպանը հանդիսանում է հսկող դատախազի քույրը),

3. ողջամտորեն կարող է հանդիսանալ (հիմքեր ունի կարծելու, որ նա կհանդիսանա) վարույթին ներգրավված անձ (օրինակ՝ վարույթին որպես տուժողի օրինական ներկայացուցիչ ներգրավվելու է քննիչի ամուսնու հետ ազգակցական մինչև 3-րդ աստիճանի կապի մեջ գտնվող անձը):

4) *Գիտի, որ նա անձամբ կամ նրա ամուսինը կամ նրանց հետ արյունակցական՝ մինչև 3-րդ աստիճանի կապի մեջ գտնվող անձինք տնտեսական շահ ունեն՝ կապված վեճի էության կամ կողմերից մեկի հետ:*

⁷ Տե՛ս Калиновский К. Б. “Внепроцессуальная информированность следователя и проблема его отвода” // Новые информационные технологии в практике работы правоохранительных органов, СПб., 1998, с. 157.

⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 159:

«Տնտեսական շահ» հասկացությունն ենթադրում է, որ վեճի լուծումից կամ վարույթի կողմերից մեկից կախված է վարույթի հանրային մասնակցի կամ մեկնաբանվող հոդվածում նշված մյուս անձանց ֆինանսական շահը՝ նյութական վիճակի դրական փոփոխությունը ցանկացած ձևով, ներառյալ՝ ուղղակի նյութական օգուտ, եկամտի ավելացում, գույքի, գույքային իրավունքների ձեռքբերում և այլն:

Ի թիվս Օրենսգրքի 90 հոդվածով նախատեսված ընդհանուր հանգամանքների՝ օրենսդիրը Օրենսգրքի 91 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ուժով, որպես հատուկ հանգամանք, վարույթին դատախազի մասնակցությունը բացառող հանգամանքների շարքին դատում է համապատասխան քրեական գործը կամ նյութը քննող դատավորի հետ ազգակցական կամ անձնական կախվածության այլ հարաբերությունների մեջ գտնվելու հանգամանքը: Քննարկվող հիմքը հետազոտության առարկա դարձնելիս անհրաժեշտ է պարզաբանել «ազգակցական կապ» և «ազգակցական հարաբերություն», «անձնական կախվածության այլ հարաբերություններ» հասկացությունների բովանդակությունը: «Ազգակցական կապը» գործին մասնակցող անձանց կենսաբանական կապն է, որը կարող է զուգորդված լինել կամ չլինել «ազգակցական հարաբերություններով», որոնք ենթադրում են տվյալ անձանց միջև մարդկային շփում: ՀՀ Վճռաբեկ դատարանը ՎԲ-251/06 գործով 2006 թվականի նոյեմբերի 24-ին կայացրած որոշման 4-րդ կետում նշել է. «(...) ազգակցական հարաբերություններն առկա են միայն այն դեպքում, երբ ազգակցական կապը զուգորդվում է ազգակցական հարաբերություններով (մարդկային շփումներ, այդ կապը կարևորող դրսևորումներ և այլն) (...)»: Ստացվում է, որ ազգակցական հարաբերություններն ազգակցական կապով միմյանց հետ կապված անձանց միջև առկա միջանձնային հարաբերություններն են: Ի տարբերություն Օրենսգրքի 90 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված՝ դատավորի՝ գործի մասնակցող ան-

ծի հետ արյունակցական կապի առկայության պայմաններում վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքի, մեկնաբանվող հոդվածի ուժով դատախազի մասնակցությունը վարույթին բացառվում է միայն դատավորի հետ ազգակցական հարաբերությունների առկայության դեպքում: Վերլուծության առարկա դարձնելով «անձնական կախվածության այլ հարաբերություններ» հասկացությունը, նախևառաջ, անհրաժեշտ է պարզաբանել «կախվածություն» հասկացության բովանդակությունը: Ըստ բացատրական բառարանի՝ «կախվածություն» նշանակում է ինքնուրույնության, ազատության, անկախության բացակայության պայմաններում ուրիշի կամքին, իշխանության ենթարկված լինելը՝ կախում ունենալը⁹: «Կախվածությունը» իր բնույթով իրավական հասկացություն չէ և հանդիսանում է հոգեբանական գիտության ինստիտուտ: Հոգեբանական գրականության մեջ կախվածությունը կամ ադդիկցիան (անգլ. addiction – կախվածություն, հակվածություն) բնորոշվում է որպես սուբյեկտի գերարժևորած վերաբերմունքն օբյեկտի նկատմամբ, որի արդյունքում սուբյեկտը դառնում է օբյեկտից կախյալ, նվազում է նրա սոցիալական ակտիվությունը, ինքնավար կամքի դրսևորման հնարավորությունը¹⁰: Սույն դեպքում անձնական կախվածության այլ հարաբերությունները ներառում են ազգակցական բնույթ չկրող, սակայն դատախազի և դատավորի միջև գոյություն ունեցող անձնական կախվածության հարաբերությունները: Նման հարաբերությունները կարող են բովանդակել ընկերական բնույթ կրող հարաբերությունները, նյութական կախվածության հարաբերությունները և այլն: Անձնական կախվածություն կարող է ծագել այն պարագայում, երբ, օրինակ՝ դատախազի ընտանիքի անդամի մասնակցությամբ գործը գտնվում է տվյալ դատավորի վարույթում:

Անդրադառնալով վարույթին քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի մասնակցությունը բացառող հատուկ հանգամանքներին՝ հարկ է նշել, որ իբրև այդպիսին, օրենս-

⁹ Տե՛ս Աղայան Է. Բ., «Արդի հայերենի բացատրական բառարան», «Հայաստան» Հրատարակչություն, Երևան, 1976, Հատոր 1, էջ 674:

¹⁰ Տե՛ս Запесоцкая И. В., “Метапсихологический уровень реализации состояния зависимости” // Вестник МГГУ им. Шолохова: Серия “Педагогика и психология”. 2012. №3(23). с. 92, Никишина В. Б., Запесоцкая И. В., “Состояние зависимости: метапсихологический подход”, Журнал “Клиническая и специальная психология”, № 2/2013, с. 4.

դիրը դրանց առանձին շրջանակ չի նախատեսել՝ սահմանելով միայն Օրենսգրքի 90 հոդվածով ամրագրված ընդհանուր հիմքերը: Միաժամանակ, օրենսդիրը դատախազի մասնակցությունը քրեական գործի քննությանը, ինչպես նաև դատական նիստում նրա կողմից մեղադրանքը պաշտպանելը համապատասխան քրեական գործով վարույթին որպես դատախազ նրա հետագա մասնակցությունը բացառող հանգամանք չի դիտում (Օրենսգրքի 91 հոդված, մաս 2)¹¹: Ի տարբերություն դատավորի, դատախազի դատավարական գործառույթների բնույթով պայմանավորված՝ վարույթին նախկինում ունեցած մասնակցության արդյունքում ձևավորված իրավական դիրքորոշումը չի կարող դիտվել իբրև կողմնակալության դրսևորում և խոչընդոտել վերջինիս գործառույթների իրականացմանը վարույթի հետագա ընթացքում: Կոնկրետ գործով դատախազի իրավական դիրքորոշումը ձևավորվում է դատախազական հսկողության իրականացման շրջանակներում կամ մեղադրանքը դատարանում պաշտպանելիս, որպիսի հանգամանքը վկայում է գործով նրա «շահագրգռվածության» մասին՝ նկատի ունենալով, որ գործի շրջանակներում, վերջինս արտահայտում և պաշտպանում է արդեն իսկ ձևավորված իր դիրքորոշումը, որը գործի ելքի վրա բացասական հետևանք չի կարող ունենալ, քանի որ գործով վերջնական որոշում կայացնող սուբյեկտը ոչ թե դատախազն է, այլ դատարանը¹²:

Համանման իրավակարգավորում նախատեսում է նաև Օրենսգրքի 92 հոդվածի 2-րդ մասը՝ ամրագրելով, որ համապատասխան քրեական գործով նախկինում կատարված քննությանը որպես քննիչ, հետաքննության մարմնի աշխատակից, ինչպես նաև դատախազ մասնակցելը տվյալ գործով վարույթին նրանց հետագա մասնակցությունը բացառող հանգամանք չէ: Նույն հոդվածը նախատեսում է վարույթի հանրային մասնակցի դատավարական կարգավիճակի փոփոխման դեպքում

իբրև վարույթի հանրային մասնակից, սակայն այլ դատավարական կարգավիճակով տվյալ վարույթին հետագա մասնակցության հնարավորություն: Օրինակ՝ տվյալ վարույթում հետաքննության մարմնի աշխատակցի դատավարական կարգավիճակ ունեցող անձը հետագայում դատախազ նշանակվելու դեպքում կարող է մասնակցել նույն վարույթին դատախազի դատավարական կարգավիճակով:

Վարույթին նախկին մասնակցության հիմքով քննիչին, հետաքննության մարմնի աշխատակցին բացարկ հայտնելու արգելք սահմանելու կողմնակից է նաև ռուս գիտնական Մ.Վ.Գորսկին, ով համակարծիք է Վ.Մ. Սավիցկու հետ՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ քննարկվող սուբյեկտների վարույթին նախկին մասնակցությունը չի կարող բացասական ազդեցություն ունենալ վարույթի ելքի վրա՝ հաշվի առնելով այն, որ նշյալ սուբյեկտները գործով վերջնական ակտ չեն կայացնում, այլ դատարանին են ներկայացնում քրեական գործի շրջանակներում համապատասխան փաստերի առնչությամբ ձևավորված իրենց իրավական դիրքորոշումը¹³: Ընդգծենք, որ քննարկվող կանոնից օրենսդիրը սահմանում է միայն մեկ բացառություն, այն է՝ այն դեպքում, երբ բացահայտվել են գործով՝ քննարկվող մասնակիցների կողմից թույլ տրված օրենքի էական խախտումներ: Օրինակ՝ տվյալ գործի վարույթից օրենքի էական խախտում թույլ տալու համար հեռացված քննիչը չի կարող նույն գործով հետագայում իրականացնել նախաքննություն:

Անդրադառնալով վարույթին քննչական բաժնի պետի և հետաքննության մարմնի պետի մասնակցությունը բացառող հանգամանքների քրեադատավարական կարգավորման հիմնախնդիրներին՝ հարկ է նշել, որ Օրենսգրքի 6 հոդվածի 31-րդ կետով դատավարության մասնակիցներն են դատախազը (մեղադրողը), քննիչը, հետաքննության մարմինը, ինչպես նաև տուժողը, քաղաքացիական հայցվո-

¹¹ Օրենսգրքի 91 հոդվածի 2-րդ մասը, ըստ էության, հակասում է Օրենսգրքի 53 հոդվածի դրույթներին, քանի որ դատախազը քրեական գործի քննությանը չի մասնակցում, այլ իրականացնում է հետաքննության և նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում:

¹² St' u Савицкий В. М., “Отвод прокурора в уголовном судопроизводстве” // Правоведение, 1970, № 4, с. 55-56.

¹³ St' u Горский М. В., “Механизм правового регулирования отводов участников уголовного судопроизводства (процессуальное и криминалистическое исследование)” / М., Юрлитинформ, 2011, с. 67.

րը, նրանց օրինական ներկայացուցիչները և ներկայացուցիչները, կասկածյալը, մեղադրյալը, նրանց օրինական ներկայացուցիչները, պաշտպանը, քաղաքացիական պատասխանողը և նրա ներկայացուցիչը:

Օրենսգրքի 6 հոդվածի 26-րդ կետին համապատասխան՝ որպես քննչական բաժնի պետ ճանաչվում են քննչական կոմիտեի նախագահը և նրա տեղակալները, հատուկ քննչական ծառայության պետը և նրա տեղակալները, քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության, ազգային անվտանգության, հարկային կամ մաքսային մարմինների քննչական վարչության, բաժնի, բաժանմունքի պետը և նրա տեղակալները, որոնք գործում են իրենց իրավասության սահմաններում: Նույն հոդվածի 27-րդ կետի համաձայն՝ հետաքննության մարմինը սույն օրենսգրքով հետաքննության իրավասություն ունեցող պետական մարմնի համապատասխան ստորաբաժանման պետը (այսուհետ՝ հետաքննության մարմնի պետ) և աշխատակիցներն են:

Հատկանշական է, որ Օրենսգրքը քննչական բաժնի պետին չի դասում դատավարության մասնակիցների շարքին, թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համակարգային վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ վերջինս օժտված է լիազորությունների ծավալով, որոնք իրենց բնույթով էական ազդեցություն ունեն գործի լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննության վրա, մասնավորապես՝ քննչական բաժնի պետը նախաքննության կատարումը հանձնարարում է իրեն ենթակա քննիչին, գործն իրեն ենթակա մի քննիչից հանձնում է մյուսին, հետևում է իրեն անմիջականորեն ենթակա քննիչների կողմից իրենց վարույթում գտնվող քրեական գործերով քննչական գործողությունները ժամանակին կատարելու, նախաքննության և կալանքի տակ պահելու ժամկետները պահպանելու, դատախազի ցուցումները և այլ քննիչների հանձնարարությունները կատարելու նկատմամբ, իրեն անմիջականորեն ենթակա քննիչներին ցուցումներ է տալիս իրենց վարույթում գտնվող քրեական գործերով առանձին քննչական գործողություն-

ներ կատարելու վերաբերյալ, նախաքննության կատարումը հանձնարարում է իրեն ենթակա մի քանի քննիչի, իրավունք ունի մասնակցել իրեն անմիջականորեն ենթակա քննիչի վարույթում գտնվող քրեական գործով նախաքննության կատարմանը, անձամբ կատարել նախաքննությունը՝ օգտվելով քննիչի լիազորություններից (Օրենսգրքի հոդված 193, մաս 1, 2): Անդրադառնալով հետաքննության մարմնի պետի դատավարական կարգավիճակին՝ պետք է ընդգծել, որ վերջինս, ի տարբերություն քննչական բաժնի պետի, օրենքի ուժով դասվում է դատավարության մասնակիցների շարքին, և նույնպես օժտված է լիազորությունների լայն շրջանակով, այն է՝ հետաքննության մարմնի պետն իրավունք ունի հետաքննության մարմնի աշխատակցին հանձնարարել հանցագործության դեպքով կատարել հետաքննություն, նրան տալ պարտադիր գրավոր ցուցումներ առանձին քննչական գործողություններ կատարելու մասին, գործը մի աշխատակցից հանձնել մյուսին, գործի քննությունը հանձնարարել մի քանի աշխատակիցների, մասնակցել հետաքննության կատարմանը և անձամբ կատարել հետաքննություն (Օրենսգրքի հոդված 57, մաս 4):

Օրենսգրքի 11-րդ «Անձանց բացարկելը և նրանց ազատելը քրեական դատավարությանը մասնակցելուց» վերտառությամբ գլուխը վարույթին և հետաքննության մարմնի պետի, և քննչական բաժնի պետի մասնակցությունը բացառող հանգամանքներ չի նախատեսում, այդպիսով, փաստորեն, վերջիններիս դասելով բացարկման անձեռնմխելիությամբ օժտված սուբյեկտների շարքին: Կարծում ենք, որ տվյալ մոտեցումն արդարացված չէ, քանի որ վերջիններս օժտված չեն բացարկման ենթակա սուբյեկտներին բնորոշ հիմնական հատկանիշով՝ անփոխարինելիությամբ, վերջիններս հանդիսանում են բացառապես դատավարական սուբյեկտներ, որոնք օժտված են հանրային-իշխանական լիազորություններով և վարույթի շրջանակներում կատարում են օրենքով իրենց վերապահված որոշակի լիազորություններ¹⁴:

Քննարկվող սուբյեկտների մասնակցությու-

¹⁴ Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի նշված բացն իր կարգավորումն է ստացել Նախագծի 67 հոդվածում, որը սահմանում է վարույթի հանրային մասնակիցների մասնակցությունը բացառող հանգամանքները, այդ թվում՝ քննչական մարմնի ղեկավարի և հետաքննության մարմնի պետի:

նր բացառող հանգամանքներ ամրագրված չեն նաև ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 9-րդ «Քրեական դատավարությանը մասնակցությունը բացառող հանգամանքները» վերտառությամբ գլխում, որպիսի փաստը քննադատության է արժանացել նաև ռուս իրավաբան-գիտնականների կողմից: Մ.Վ.Գորսկին իրավամար նշում է, որ կասկած չկա, որ եթե քննչական մարմնի ղեկավարը, հետաքննության մարմնի պետը գործի ելքով ունենան որոշակի շահագրգռվածություն, ապա օժտված լինելով նման լիազորություններով, նրանք կարող են ազդեցություն ունենալ քրեական գործի ճակատագրի վրա¹⁵: Համանման դիրքորոշում է հայտնել նաև Ս.Ս.Ամպենովը՝ նշելով, որ քննչական մարմնի ղեկավարի, հետաքննության մարմնի պետի կողմից իրենց լիազորությունների ոչ օբյեկտիվ կենսագործումը կարող է բացասաբար ազդել քրեական գործով ելակետային նշանակություն ունեցող որոշումների, և, առհասարակ, մինչդատական վարույթի վրա¹⁶: Հարկ է արձանագրել, որ «Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2008 թվականի դեկտեմբերի 2-ի № 226-Փ3 օրենքով ուսումնասիրության առարկա դարձած օրենսդրական բացը որոշակիորեն լուծվել է, մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքի 67 հոդվածը լրացվել է հետևյալ կերպ. «Քննչական մարմնի ղեկավարին հայտնված բացարկը լուծվում է քննչական մարմնի ղեկավարի վերադասը»: Փաստորեն, ՌԴ օրենսդիրը քննչական մարմնի ղեկավարին դասել է բացարկման ենթակա վարույթի մասնակիցների շարքին, թեև չի նախատեսել վերջինիս բացարկման հիմքերը: Տվյալ խնդիրը մասնակիորեն լուծվել է ՌԴ սահմանդրական դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի №1080-Օ-Պ որոշմամբ, որով ՌԴ սահմանադրական դատարանը փաստել է, որ քննչական մարմնի ղեկավարի լիազորությունների լայն շրջանակը ենթադրում է քրեական

գործով ակտիվ մասնակցություն ունենալու հնարավորություն: Նրա վրա դրված են հանրային գործառույթներ՝ կապված ինչպես մինչդատական վարույթի իրականացման, այնպես էլ դրա կազմակերպման հսկողության հետ, ուստի քննչի և վարույթի իրականացնող այլ անձանց բացարկման հիմքերը պետք է տարածվեն նաև քննչական մարմնի ղեկավարի վրա, եթե առկա են այնպիսի հանգամանքներ, որոնք թույլ են տալիս կասկածի տակ դնել նրա անաչառությունը: Գործնականում չեն բացառվում իրավիճակներ, երբ քննչական բաժնի պետը կամ հետաքննության մարմնի պետն ազգակցական կապի մեջ գտնվի գործին մասնակցող անձանց հետ, կամ կողմի, նրա ներկայացուցչի նկատմամբ ունենա կանխակալ վերաբերմունք, տնտեսական շահ կամ գտնվի անձնական կախվածության այլ հարաբերությունների մեջ: Հիշյալ հանգամանքները վերոգրյալ պատճառաբանությամբ, պետք է հիմք հանդիսանան վարույթին վերջիններիս մասնակցությունը բացառելու համար: Անդրադառնալով քննչական բաժնի պետի և հետաքննության մարմնի պետի վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքների շրջանակին՝ կարծում ենք, որ այն պետք է համընկնի Օրենսգրքի 92 հոդվածով ամրագրված հանգամանքների շրջանակին՝ նկատի ունենալով վերջիններիս դատավարական կարգավիճակը և փոխհարաբերությունների բնույթը վարույթի այլ մասնակիցների հետ:

Ամփոփելով սույն հոդվածի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքները՝ առաջարկում ենք Օրենսգրքի 92 հոդվածի վերնագիրը խմբագրել հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 92. Քննչական բաժնի պետին, քննիչին, հետաքննության մարմնի պետին կամ հետաքննության մարմնի աշխատակցին բացարկելը», հոդվածում շարադրված հանգամանքները դիտելով իբրև վարույթին քննչական բաժնի պետի և հետաքննության մարմնի պետի մասնակցությունը բացառող հանգամանքներ:

¹⁵ St' u Горский М. В., “Механизм правового регулирования отводов участников уголовного судопроизводства (процессуальное и криминалистическое исследование)” / М., Юрлитинформ, 2011, с. 75.

¹⁶ St' u Ампинов С. С., “Обстоятельства, исключающие участие в уголовном судопроизводстве”: дисс. канд. юрид. наук, Тюмень, 2010, с. 106.

ԱՐՈՒՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Երևանի պետական համալսարանի
Իրավագիտության ֆակուլտետի «Քաղաքացիական
իրավունք» ամբիոնի դասախոս

**ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՉԱՐՏՆԻՔԻ ԿԱՊԱԿՅՈՒԹՅԱՄԲ
ԱՌԱՋԱՅՈՂ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՒՅԵԿՏԱՅԻՆ
ԿԱԶՄԻ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Առևտրային գաղտնիքի սուբյեկտների կապակցությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը¹ տարբեր եզրույթներ է գործածում: Մի դեպքում՝ «տեղեկատվություն ունեցող» (141-րդ հոդված, 1-ին մաս), «տեղեկատվությանն օրինաչափ տիրապետող անձ» (1164-րդ հոդված, 1-ին մաս), «տեղեկատվության օրինական տեր» (1165-րդ հոդված, 1-ին մաս), «տեղեկատվության օրինական տիրապետող» (1165-րդ հոդված, 2-րդ մաս) և այլն²: Կարծում ենք, որ ներկայացված եզրութաբանության մեջ չկա միասնական մոտեցում և լիովին հստակ չէ թե՛ առևտրային գաղտնիք կազմող տեղեկություններին օրինական կամ ապօրինի հիմքերով տիրապետող անձանց կամ այս իրավահարաբերությունների մյուս սուբյեկտներին ինչպես պետք է «անվանել» և ինչ պետք է հասկանալ թվարկված եզրույթների ներքո:

Գրականության մեջ ևս առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվության նկատմամբ իրավունքի սուբյեկտի բնորոշման համար տարաբնույթ եզրութաբանություն է գործածվում: Բացի առևտրային գաղտնիքի սուբյեկտ-տիրապետողներից՝ գործարարական գործունեությամբ զբաղվող անձանցից, առանձնացվում են նաև այլ սուբյեկտներ: Վ.Ն.Լոպատինը ընդգծում է, որ «ավելի ճիշտ կլիներ խոսել ոչ թե

տիրապետողների, այլ առևտրային գաղտնիքի սեփականատերերի մասին», որոնք մենաշնորհային իրավունքներ ունեն այդ տեղեկատվության նկատմամբ, ինչպես նաև՝ «առևտրային գաղտնիքի կոնֆիդենտների մասին», այսինքն՝ այն անձանց, որոնց օրենքի կամ պայմանագրի ուժով հայտնի է դարձել տեղեկատվությունը³:

Մի խումբ գիտնականներ սեփականատիրոջ ներքո հասկանում են այդ տեղեկատվության սեփականատիրոջը, իսկ տիրապետողի՝ այլ անձանց, ովքեր օրենքի հիման վրա այդ տեղեկատվությունը ստացել են նրա սեփականատիրոջից: Ընդ որում, սուբյեկտին պատկանող իրավագործությունների ծավալի տեսանկյունից հավասարության նշան է դրվում այդ տեղեկատվության սեփականատիրոջ և տիրապետողի միջև⁴: Օ.Ա.Գորդովն առանձնացնում է առևտրային գաղտնիքի պահապանին (պահպանողին)՝ նրան օժտելով այդ տեղեկատվության տիրապետողի իրավագործություններով⁵: Մ.Վ.Բելյայևը տարբերակում է առևտրային գաղտնիքի սեփականատիրոջը և տիրապետողին և գտնում է, որ «ճիշտ կլիներ խոսել ոչ թե առևտրային գաղտնիքի սեփականատերերի, այլ տիրապետողների մասին⁶»:

Հատուկ առանձնացվում են «առևտրային գաղտնիքի կոնֆիդենտները», որոնց ևս առա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 91 2016

¹ Տե՛ս ՀՀՊՏ 1998.08.10/17(50) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք:
² Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1165-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ մասեր, 141-րդ հոդվածի 4-րդ մաս, 1166-րդ հոդված, 2-րդ մաս:
³ Տե՛ս Лопатин В. Н., «Правовая охрана и защита коммерческой тайны // Законодательство» 1998. № 11, ст. 78 – 79, Банило И. Л., Лопатин В. Н., Федотов М. А., «Информационное право» СПб., 2001. ст. 509 и т.д.
⁴ Տե՛ս Фисун А. П., Касилов А. Н., Глоба Ю. А., Савин В. И., Белевская Ю. А., «Право и информационная безопасность: Учеб. пособие». М.: Приор-издат, 2005. ст. 140.
⁵ Տե՛ս Городов О. А., «Интеллектуальная собственность предпринимателя // Коммерческое право. В 2 ч.: Учебник» / Под ред. В. Ф. Попондопуло, В. Ф. Яковлевой. 3-е изд. М.: Юрист, 2004. 4.1. ст. 287.
⁶ Տե՛ս Беляев М. В., «Субъекты права на коммерческую тайну: проблемы правового статуса» // Информационное право. № 3, 2005.

ջարկվում է դասել առևտրային գաղտնիքի նկատմամբ իրավունքի սուբյեկտների թվին: Դրանք վարձու աշխատողներն են, պետական մարմիններն ու դրանց պաշտոնատար անձինք, ինչպես նաև այլ անձինք, որոնց տեղեկատվությունը տրամադրվել է մասնագիտական պարտականությունների կատարման համար (փաստաբաններ, նոտարներ, ապահովագրողներ և այլք): Այս անձանց հաճախ դասում են առևտրային գաղտնիքի «օգտագործողների» թվին: Թվում է, թե նշված անձինք իրավատերերից տարբերվում են օրենսդրությամբ կամ պայմանագրով իրենց տրամադրված իրավագործությունների ծավալով: Նրանք տեղեկատվության նկատմամբ օժտված չեն փաստական մենաշնորհով. նրանց համար առևտրային գաղտնիքը հանդիսանում է երկրորդային՝ իր առաջնային տիրապետողի կողմից փոխանցված: Նման սուբյեկտների գործողությունները, այդ թվում՝ տեղեկատվության գաղտնիության ռեժիմի ապահովումը, կապված են ծառայողական պարտականությունների կատարման հետ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքից (մասնավորապես 141-րդ հոդվածից) կարելի է բխեցնել առևտրային գաղտնիքի նկատմամբ իրավունքի սուբյեկտի (տեղեկատվության ունեցողի) լեզալ հասկացությունը⁷: Սակայն ոչ բոլոր հեղինակներն⁸ են այս հասկացության հետ համակարծիք: Գ.Վ.Օնյուկովան և Ա.Ի.Ալեքսեևան սուբյեկտի բնորոշման համար օգտագործում են տեղեկատվության տիրապետող կամ սեփականատեր եզրույթները⁹: Վ.Ա.Դոգուլյակը գործածում է իրավատեր եզրույթը¹⁰: Վ.Ն. Լո-

պատինը, Ա.Պ.Սերգեևը և այլք գործածում են առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվության տիրապետող արտահայտությունը¹¹:

Հարկ ենք համարում ընդգծել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածում գործածվող «տեղեկատվություն ունեցող» արտահայտության կիրառման աննպատակահարմարությունը և նշված արտահայտությամբ բնորոշվող հասկացության իմաստային անհամապատասխանությունը: Ուստի կարծում ենք՝ անհրաժեշտ է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածում օգտագործվող արտահայտությունը փոխարինել «տեղեկատվության իրավատեր» եզրույթով:

Վ.Վ.Պոգուլյակը կարծում է, որ «Առևտրային գաղտնիքի մասին» ՌԴ օրենքով իրավահարաբերությունների համակարգ ներմուծված առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվության տիրապետողի անձն այնքան էլ հաջող չէ¹²: Փաստարկները տանում են նրան, որ տեղեկատվության նման տիրապետող կարող է լինել ինչպես այն անձը, ում տեղեկատվությունը պատկանում է, այնպես էլ այլ անձ, ով նրա նկատմամբ մատչելիություն է ստացել: Ըստ հեղինակի՝ ՌԴ օրենսդրությունը տարբերակում չի դնում նման տեղեկատվության առաջնային և ածանցական տիրապետողների իրավական կարգավիճակի միջև¹³: Ըստ Վ.Վ. Պոգուլյակի՝ առավել տրամաբանական կլիներ ոչ թե տեղեկատվության տիրապետող, այլ տեղեկատվական ռեսուրսների սեփականատեր եզրույթը՝ սուբյեկտ, ով լրիվ ծավալով իրականացնում է նշված օբյեկտների տիրա-

⁷ Համանման հասկացություններ են բովանդակվում նաև Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքում ու «Առևտրային գաղտնիքի մասին» ՌԴ օրենքում:

⁸ Հարկ ենք համարում նշել, որ սույն ուսումնասիրության մեջ ՌԴ իրավակիրառ և դատական պրակտիկային կամ իրավական կարգավորումներին անդրադառնալը և օրինակների մեջբերումը պայմանավորված են այն փաստով, որ ՀՀ քաղաքացիական իրավունքում առևտրային գաղտնիքին առնչվող կարգավորումները սահմանափակվում են լոկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված սակավաթիվ դրույթներով, այնինչ ՌԴ-ում գործում է «Առևտրային գաղտնիքի մասին» օրենքը, որը «պատասխան է տալիս» մեր տեսանկյունից խնդրահարույց շատ հարցերի: Բացի դրանից, ի տարբերություն մեր հանրապետության, ՌԴ իրավաբանական գրականությունն ու իրավակիրառ պրակտիկան շատ ավելի «հարուստ»:

⁹ Տե՛ս Отнюкова Г., «Коммерческая тайна» // Закон. 1998. No 2. ст. 57, А. И. Алексеева, «О составе защищаемой информации», // Безопасность информационных технологий. 1999. No 2. ст. 5.

¹⁰ Տե՛ս Дозорцев В. А., «Информация как объект исключительного права», // Дело и право. 1996. No 4. ст. 31.

¹¹ Տե՛ս Сергеев А. П., «Право интеллектуальной собственности в Российской Федерации: Учебник» М., 1996, ст. 681, Лопатин В. Н., «Правовая охрана и защита права на тайну», // Юридический мир. 1999. No 5/6, ст. 44, Куликов А. А., «О коммерческой и служебной тайне» // Хозяйство и право. 1996. No 11. ст. 99 - 100.

¹² Տե՛ս Погуляев В. В., «Постатейный комментарий к Федеральному закону «О коммерческой тайне», М.: Юридический дом «Юстицинформ», 2005. ст. 11-16.

¹³ Համանման մոտեցում է որդեգրել ՀՀ քաղաքացիական օրենսգրքը:

պետման, օգտագործման և տնօրինման իրավագրությունները¹⁴:

Ըստ որոշ հեղինակների՝ նման մոտեցումն անարդարացիորեն ավելացնում է սուբյեկտների քանակը և բարդացնում է առևտրային գաղտնիքի նկատմամբ իրավունքի պաշտպանության գործընթացը՝ կապված նրանցից որոշների իրավական կարգավիճակի անորոշության հետ¹⁵: Առևտրային գաղտնիքի «սեփականատեր» և «տիրապետող» եզրույթների գործածումը դժվար թե կարելի է ճիշտ համարել, քանի որ այն (առևտրային գաղտնիքը) ոչ նյութական օբյեկտ է, որի վրա անհնարին է տարածել սեփականության իրավունքները: Այդ իսկ պատճառով ՌԴ քաղաքացիական օրենսգրքում և այլ օրենքներում առևտրային գաղտնիքի ռեժիմ սահմանելու իրավունք ունեցող սուբյեկտի բնորոշման համար արդարացիորեն գործածվել է «տիրապետող» եզրույթը, ինչը թույլ է տալիս հստակորեն որոշել սուբյեկտի իրավական կարգավիճակը, նրա տեղն ու դերը առևտրային գաղտնիքի պաշտպանության մեխանիզմում:

Ինչպես տեսնում ենք, ՌԴ քաղաքացիական իրավունքի դոկտրինայում, ի տարբերություն ՀՀ դոկտրինայի, գրեթե միևնույն հասկացության բնորոշման համար գործածվում են առևտրային գաղտնիքի տիրապետող, սեփականատեր և տնօրինող եզրույթները, որն իրավաբանական առավել մեծ դժվարություններ է հարուցում և իրավական բանավեճերի պարարտ հող ստեղծում: Այնինչ ՀՀ իրավական դոկտրինայում տիրապետող և տնօրինող եզրույթները բնորոշվում են միասնական «տիրապետող»-ով, որը նպատակահարմար ենք համարում փոխարինել «իրավատեր» եզրույթով:

Ժամանակակից օրենսդրության վերլուծության հիման վրա կարելի է եզրակացություն անել առ այն, որ որպես առևտրային գաղտնիքի տիրապետող (իրավատեր) կարող են հանդես գալ բացառապես անհատ ձեռներեցները (այդ թվում՝ գյուղացիական (ֆերմերային) տնտեսությունը), առևտրային իրավաբանական անձինք, ինչպես նաև՝ ոչ առևտրային իրավաբանական անձինք՝ պայմանավորված իրենց կողմից գոր-

ծարարական գործունեության իրականացմամբ և այն նպատակների իրականացմանը ծառայելու համար, որոնց համապատասխան և որոնց համար նրանք ստեղծվել են: Միաժամանակ հարկ է ընդգծել, որ նշված անձինք առևտրային գաղտնիքի նկատմամբ իրավունքով օժտված են բացառապես իրենց կողմից գործարարական գործունեության իրականացման կապակցությամբ: Հարկ է նաև նշել, որ առևտրային գաղտնիքի նկատմամբ իրավունքի տիրապետողներն (իրավատերերը) իրավասու են առևտրային գաղտնիքի օգտագործման իրավագրությունը տրամադրել երրորդ անձանց՝ առևտրային գաղտնիքի օգտագործողներին, որոնց դերում կարող են հանդես գալ նաև գործարար չհանդիսացող ֆիզիկական անձինք:

Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող ոչ առևտրային կազմակերպությունները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, կարող են ձեռնարկատիրական (գործարարական) գործունեություն իրականացնել միայն այն դեպքերում, երբ դա ծառայում է այն նպատակների իրականացմանը, որոնց համար նրանք ստեղծվել են և համապատասխանում է այդ նպատակներին: Որոշ հետազոտողներ գտնում են, որ այդ իսկ պատճառով նրանք չեն կարող լինել առևտրային գաղտնիքի նկատմամբ իրավունքի սուբյեկտներ¹⁶: Ինչի հետ կարելի է չհամաձայնել:

Այդ մասին է վկայում նաև ՀՀ դատական պրակտիկան: Մասնավորապես, հարկ է նշել, որ ՀՀ Վճռաբեկ դատարանը թիվ ՎԴ/1696/05/09 վարչական գործով 2010 թվականի մայիսի 27-ին դռնբաց դատական նիստում, քննելով «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Հասարակական կազմակերպություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 7-ի վճռի դեմ՝ ըստ Հասարակական կազմակերպության հայցի ընդդեմ «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կազմակերպու-

¹⁴ Sեն Погуляев В. В., “Постатейный комментарий к Федеральному закону “О коммерческой тайне””, М.: Юридический дом “Юстицинформ”, 2005. ст. 31-79.

¹⁵ Sեն Северин Р. В., “Механизм защиты прав на коммерческую тайну” // Дисс. канд. юрид. наук. М., 2011.

¹⁶ Sեն Северин Р. В., “Механизм защиты прав на коммерческую тайну” // Дисс. канд. юрид. наук. М., 2011.

թյուն)՝ Կազմակերպության գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու, որպես հետևանք տեղեկատվություն տրամադրել պարտադրելու պահանջների մասին, հաստատված համարելով, որ Կազմակերպությունը պետական ոչ առևտրային կազմակերպություն է և առևտրային շահ չունի, սակայն առևտրային շահ ունեն այն կազմակերպությունները, որոնց հետ Կազմակերպությունը կնքել է պայմանագրեր, հանգել է այն հետևության, որ Կազմակերպությունը, հայցվորին տրամադրելով նրա պահանջած տեղեկությունը, կիրառարակեր այլ ընկերությունների առևտրային գաղտնիքը, ուստի Կազմակերպությունը գործել է օրենքի շրջանակներում, հետևաբար նրա գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու հիմքեր չկան¹⁷: Այդպիսով դատարանը տեղեկատվությունը որպես առևտրային գաղտնիք որակելու հարցը լուծելիս դիտարկել է ոչ միայն տվյալ գործով պատասխանող կողմի՝ ոչ առևտրային կազմակերպության («Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի) շահերը, այլև վերջինիս գործընկեր այլ կազմակերպությունների առևտրային շահերը՝ կանխելով հիշյալ կազմակերպությունների հետ ևս առնչվող առևտրային տեղեկատվության հնարավոր հրապարակման հետևանքով վերջիններիս վնաս պատճառելը և վերջիններիս իրավունքների հնարավոր խախտումները՝ դրանով իսկ ոչ առևտրային կազմակերպություններին դասելով առևտրային գաղտնիքի նկատմամբ իրավունքի սուբյեկտների շարքին:

Համանմանորեն՝ արտասահմանյան օրենսդրությունում գործարարական գործունեություն իրականացնող անձինք ճանաչվում են առևտրային գաղտնիքի նկատմամբ իրավունքի սուբյեկտներ (օրինակ՝ Գերմանիայի Դաշնության առևտրային ոլորտային¹⁸ 90-րդ հոդվածի համաձայն՝ առևտրային և արտադրական գաղտնիքների տիրապետող է հանդիսանում

գործարարը): Հաշվի առնելով, որ տեղեկատվության նկատմամբ մատչելիության իրավունքի խախտման դեպքում անձի իրավական կարգավիճակի որոշումը նշանակություն ունի տեղեկատվության պաշտպանության միջոցի ընտրության հարցում՝ առաջարկում ենք օրենսդրական մակարդակով ամրագրում տալ ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշմանը՝ սահմանելով, որ առևտրային գաղտնիքի սուբյեկտներ կարող են լինել ինչպես առևտրային իրավաբանական անձինք, այնպես էլ ոչ առևտրայինները:

Եզրափակելով կարելի է նշել, որ առևտրային գաղտնիքի իրավունքի տիրապետողների (իրավատերերի) և օգտագործողների թվի ավելացումը թույլատրելի է այնքան ժամանակ, քանի դեռ առևտրային գաղտնիքը հայտնի է սահմանափակ քանակով անձանց, այսինքն առևտրային գաղտնիք կազմող տեղեկությունները մնում են ոչ հանրահայտ¹⁹:

Հարկ ենք համարում շեշտել, որ «Առևտրային գաղտնիքի մասին» ՌԴ օրենքը²⁰, ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, միասնական եզրույթաբանություն է կիրառում՝ սահմանելով նաև առևտրային գաղտնիքի որոշ սուբյեկտների հասկացություններ: Այսպես, համաձայն «Առևտրային գաղտնիքի մասին» ՌԴ օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասի՝ առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվության իրավատիրոջ ներքո հասկացվում է այն անձը, ով օրինական հիմունքներով տիրապետում է առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվությանը, սահմանափակել է այդ տեղեկատվության հասանելիությունը և նրա նկատմամբ սահմանել է առևտրային գաղտնիքի ռեժիմ²¹: Կարծում ենք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով մի շարք եզրույթներով բնորոշվող առևտրային գաղտնիքին օրինական հիմքերով տիրապետող սուբյեկտի նկատմամբ լիովին կիրառելի կարող է լինել նաև «իրավատեր» եզրույթը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 141-րդ

¹⁷ Տե՛ս <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=59779>:

¹⁸ Տե՛ս «Германское право. Ч. 2». М. Исследовательский центр частного права. 1996. ст. 32 – 56.

¹⁹ Տե՛ս Гуляева Наталья Сергеевна, «Коммерческая тайна в предпринимательской деятельности: сравнительно-правовое исследование законодательства РФ, зарубежных государств и международно-правового регулирования», Специальность 12.00; Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук; Москва, - 2002, ст. 20.

²⁰ Տե՛ս https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_48699/ կայքէջում («Консультант Плюс» տեղեկատվա-իրավական համակարգում):

²¹ Տե՛ս https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_48699/ կայքէջում («Консультант Плюс» տեղեկատվա-իրավական համակարգում):

հողվածի 1-ին մասով ամրագրված առևտրային գաղտնիքի օրենսդրական հասկացությունը բովանդակում է այնպիսի անքակտելի հատկանիշ, ինչպիսին է տեղեկատվության իրական կամ հնարավոր առևտրային արժեքը (ցանկացած ձևով առևտրային շահույթի ստացման հնարավորությունը)²²: Համաձայնելով ռուս հեղինակի հետ՝ նշենք, որ բանը նրանում է, որ առևտրային գաղտնիքի ռեժիմը սահմանվում է շահույթի ստացման նպատակով գործարարական գործունեությամբ զբաղվող մասնավոր իրավական հետաքրքրությունների (Ռ-Ռ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդված) պաշտպանության համար:

Նորմերի համակարգային վերլուծությունը հետազոտողներին թույլ է տվել առևտրային գաղտնիքի իրավատեր համարել առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվության նկատմամբ մենաշնորհային իրավունքներ ունեցող գործարարական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական և իրավաբանական անձանց²³: Բայց այս մոտեցումը լիարժեք լինել չի կարող²⁴, քանզի հաշվի չի առնում, որ առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվությունը կարող է ստացվել (այդ թվում՝ պետական մարմնի կողմից) կապալի պայմանագրի, գիտահետազոտական աշխատանքների և փորձարարական-կոնստրուկտորական ու տեխնոլոգիական աշխատանքների կատարման պայմանագրերի արդյունքում (<< քաղաքացիական օրենսգրքի 37-րդ և 38-րդ գլուխներ²⁵): Այդ դեպքում, համաձայն ընդ-

հանուր կանոնների (եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ), առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվության իրավատեր է հանդիսանում կապալառուն (կատարողը):

Իրավատերերի հնարավոր բազմազանությունը և հեղինակի անձի բացակայությունն առևտրային գաղտնիքի նկատմամբ իրավունքի սուբյեկտին բնորոշ առանձնահատկությունների թվին են պատկանում: Առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվությունը, որին տիրապետում է մեկ սուբյեկտ կարող է հիշյալից անկախ ձևով ստացվել այլ սուբյեկտի կողմից օրենքի հիման վրա, ինչի հետ կապված ներմուծվել է «քվազիբացարձակ իրավունք» եզրույթը, այն է՝ «իրավունք, որը կարող է միաժամանակ պատկանել մի քանի անձանց²⁶»: Առաջինն այս առանձնահատկությունն առանձնացրել է Վ.Ա.Դոզորցևը²⁷: Ըստ նրա՝ միևնույն տեղեկությունները կարող են հանդիսանալ տարբեր անձանց արտադրության գաղտնիքներ, և նրանք բոլորը կհամարվեն օրինական տիրապետողներ՝ նրանց օրինական ստացման պայմանով: Ընդ որում միևնույն տեղեկատվությունը կարող է զուգահեռաբար ստացվել տարբեր անձանց կողմից²⁸:

Այսպիսով, առևտրային գաղտնիքի իրավատիրոջ ներքո կարող է ընկալվել գործարարական գործունեության սուբյեկտը, քաղաքացիաիրավական պայմանագրով նրա կոնտրագենտը, ինչպես նաև այն անձը, ով կապալի պայմանագրով, գիտահետազոտական աշխատանքների, փորձնական-կոնստրուկտորական կամ

²² Համանման մոտեցում է ցուցաբերել նաև Ռ-Ռ օրենսդիրը («Առևտրային գաղտնիքի մասին» Ռ-Ռ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով):

²³ Տե՛ս Степанов А. Г., Шерстнева О. О., “Защита коммерческой тайны.” М.: Альфа-Пресс, 2006, ст. 23.

²⁴ Տե՛ս “Московский государственный юридический университет имени О.Е. Кутафина (МГЮА); На правах рукописи, Яковлева Ирина Александровна, “Информация с ограниченным доступом в предпринимательской деятельности: правовой аспект”, Специальность: 12.00.03, Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук; Москва - 2014, ст. 131.

²⁵ Հարկ է նկատել, որ նշվածն ուղղակիորեն ամրագրված է Ռ-Ռ քաղաքացիական օրենսգրքի 1471-րդ հոդվածով, որտեղ սահմանվում է. «արտադրության գաղտնիքը (առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվության տարատեսակ) կարող է ստացվել այդ թվում՝ պետական մարմնի կողմից կապալի պայմանագրի, գիտա-հետազոտական, փորձնական-կոնստրուկտորական աշխատանքների կատարման պայմանագրի կամ տեխնոլոգիական աշխատանքների կատարման պայմանագրի արդյունքում», որպիսի մոտեցման պարագայում հնարավորինս հեշտանում է իրավակիրառական պրակտիկան: Նշված պայմանագրերից յուրաքանչյուրը կնքելիս կողմերը կարիք չեն ունենա անդրադառնալու հնարավոր արտադրության գաղտնիքի (պաշտպանության) վերաբերյալ նորմ նախատեսելու կամ չնախատեսելու հարցին, քանի որ այնդ հարցը արդեն իսկ օրենսդրական լուծում ստացած կլինի:

²⁶ Տե՛ս Дозорцев В. А., “Вестник Высшего Арбитражного Суда Российской Федерации” 2001. No 7. ст. 112.

²⁷ Հեղինակի առաջարկը հետագայում իր իրավական ամրագրումն է ստացել Ռ-Ռ քաղաքացիական օրենսգրքի 1466-րդ հոդվածի 2-րդ մասով՝ որպես արտադրության գաղտնիքի (նոու-հաու) նկատմամբ բացառիկ իրավունքի իրավատերերի բազմազանության սկզբունք:

²⁸ Տե՛ս Северин Р. В., “Механизм защиты прав на коммерческую тайну” // Дисс. канд. юрид. наук. М., 2011.

տեխնոլոգիական աշխատանքների կատարման պայմանագրով աշխատանքների կատարման ընթացքում ստացել է առևտրային գաղտնիքի հատկանիշներով օժտված արդյունք²⁹:

Հիմք ընդունելով «Քաղաքացիական օրենսգրքի տասներորդ բաժնում փոփոխություններ կատարելու հայեցակարգը³⁰»՝ առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքով հստակ սահմանել, թե ով կարող է լինել չբացահայտված տեղեկատվության օրինական տիրապետող (իրավատեր) և ինչ իրավունքներ ունի այն անձը, որն ինքնուրույն ստեղծել, հայտնաբերել կամ բացահայտել է չբացահայտված տեղեկատվությունը՝ առանց իրենից առաջ օրինական որևէ տնօրինողի կամ տիրապետողի (իրավատիրոջ) իրավունք խախտելու՝ սահմանելով. առևտրային գաղտնիքի իրավատեր (տեղեկատվությանն օրինաչափ տիրապետող անձ, այդ թվում՝ լիցենզառու, կապալառու (կատարողը), այդ թվում՝ ոչ առևտրային կազմակերպությունը) գործարարական գործունեության սուբյեկտը, քաղաքացիաիրավական պայմանագրով նրա կոնտրագենտը, ինչպես նաև այն անձը, ով կապալի պայմանագրով, գիտահետազոտական աշխատանքների, փորձնական-կոնստրուկտորական կամ տեխնոլոգիական աշխատանքների կատարման պայմանագրով աշխատանքների կատարման ընթացքում ստացել է առևտրային գաղտնիքի հատկանիշներով օժտված արդյունք:

Առևտրային գաղտնիքի իրավատերերն իրավասու են առևտրային գաղտնիքի օգտագործման իրավագործությունը տրամադրել երրորդ անձանց՝ առևտրային գաղտնիքի օգտագործողներին, որոնց դերում կարող են հանդես գալ նաև գործարար չհանդիսացող ֆիզիկական անձինք:

Շարադրվածի հիման վրա կարծում ենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով մի շարք եզրույթներով բնորոշվող առևտրային գաղտնիքին օրինական հիմքերով տիրապետող սուբյեկտի նկատմամբ լիովին կիրառելի կարող է լինել նաև «իրավատեր» եզրույթը:

Քաղաքացիների և իրավաբանական անձանց, այդ թվում՝ օտարերկրյա, ինչպես նաև պետության դատումը տեղեկատվական հարաբերությունների սուբյեկտների թվին համընդհանուր ճանաչում է գտել³¹. ընդ որում վերջիններս միմյանց վրա ներազդում են տեղեկատվության (այդ թվում՝ առևտրային գաղտնիքի) շրջանառության ոլորտում:

Վ.Ա.Կոպիլովն առանձնացնում է տեղեկատվության (այդ թվում՝ առևտրային գաղտնիքի) ստեղծողներին կամ արտադրողներին, տեղեկատվության տիրապետողներին և սպառողներին³²: Նրանցից յուրաքանչյուրն ունի առևտրային գաղտնիքի ստացման, օգտագործման և փոխանցման նկատմամբ իրավագործությունների իր ծավալը: Սակայն ամեն մեկը չէ, որ կարող է առևտրային գաղտնիքի նկատմամբ իրավունքի սուբյեկտ լինել: Մասնագետների շրջանում առևտրային գաղտնիքի սուբյեկտի կարգավիճակի որոշման հարցի շուրջ միասնական մոտեցում չկա³³: Ընդգծվում են երկու խումբ խնդիրներ, որոնցից մեկը կապված է սուբյեկտի մասնագիտական գործունեության հետ (գործարարների շարքին նրա պատկանելիության հետ), իսկ երկրորդը վերաբերում է սուբյեկտի՝ որպես այդ գաղտնիքի տիրապետողի բնորոշմանը:

Առևտրային գաղտնիքի՝ օրենքով³⁴ սահմանված հատկանիշներից կարելի է բխեցնել, որ առևտրային գաղտնիք են համարվում գոր-

²⁹ Տե՛ս «Московский государственный юридический университет имени О.Е. Кутафина (МГЮА)», На правах рукописи, Яковлева Ирина Александровна, «Информация с ограниченным доступом в предпринимательской деятельности: правовой аспект», Специальность: 12.00.03, Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук; Москва - 2014, ст. 132.

³⁰ Տե՛ս ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքէջում՝ http://www.moj.am/storage/files/legal_acts/legal_acts_1656450483731_tasnerord.pdf:

³¹ Տե՛ս Огородов Д. В., «Правовое регулирование отношений в информационной сфере» Автореф. дисс. канд. юрид. наук. М. 1992. www.urbicom.ru.

³² Տե՛ս Копылов В. А., «О модели гражданского оборота информации» // Журнал российского права. No 9, 1999. ст. 37-41.

³³ Տե՛ս Снытников А. А., «Информация как объект гражданских правовых отношений» Автореф. дисс. канд. юрид. наук. Тверь-СПб., 2000.

³⁴ Ի նկատի են ունեցվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1164-րդ հոդվածի 1-ին մասը և «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը:

ծարարների համար առևտրային արժեք ներկայացնող տեղեկությունները: Հետևապես, առևտրային գաղտնիքի նկատմամբ իրավունքի սուբյեկտներ կարող են լինել պրոֆեսիոնալ ձևով գործարարական գործունեությամբ զբաղվող սուբյեկտները³⁵, այն է առևտրային իրավաբանական անձինք և անհատ ձեռներեցները: Միաժամանակ, ինչպես ընդգծում է Ա.Պ.Սերգեևը. «քաղաքացիական շրջանառությունում որպես սպառողներ հանդես եկող կամ իրենց սովորական որակներով հանդես եկող քաղաքացիները, հավասարապես և սահմանված կարգի խախտմամբ գործարարական գործունեությամբ զբաղվող քաղաքացիներն առևտրային գաղտնիքի նկատմամբ իրավունքից չեն օգտվում³⁶»:

Գործարարության սուբյեկտներ, համապատասխանաբար՝ առևտրային գաղտնիքի նկատմամբ իրավունքի սուբյեկտներ, կարող են լինել ֆիզիկական և իրավաբանական անձինք: Առևտրային գաղտնիքի նկատմամբ իրավունքը կարգավորող ՀՀ իրավանորմերը³⁷ լիարժեքորեն չեն տալիս «առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվության տիրապետող»-ի սահմանումը, որի ներքո, ըստ մեզ³⁸, հարկ է ընկալել որպես «օրենքի հիման վրա առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվությունը տիրապետող անձ, ով այդ տեղեկատվության նկատմամբ սահմանափակել է մատչելիությունը և նրա նկատմամբ սահմանել է առևտրային գաղտնիքի ռեժիմ»:

Եզրահանգումն առ այն, որ գործարարները հանդիսանում են առևտրային գաղտնիքի նկատմամբ իրավունքի սուբյեկտներ, գրականության մեջ տարբեր կերպ է հիմնավորվում: Ա.Ա.Կուզմինը գտնում է, որ «առևտրային գաղտնիքը, որպես իրավունքով պաշտպանվող օբյեկտ, գոյություն չունի ձեռնարկությունից դուրս. այն անբաժանելի է ձեռնարկությունից³⁹»: Սակայն կարծում ենք, որ հեղինակը հաշվի չի առնում անհատ ձեռնարկատերերին: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ մա-

սի համաձայն՝ նրանց նկատմամբ կիրառվում են առևտրային կազմակերպություններ համարվող իրավաբանական անձանց գործունեությունը կարգավորող կանոնները, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից կամ իրավահարաբերության էությունից: Կարծում ենք, որ խոչընդոտներ չկան նրանց առևտրային գաղտնիքի սուբյեկտներ ճանաչելու համար⁴⁰:

Այլ հետազոտողներ գտնում են, որ «առևտրային գաղտնիքի սեփականատեր կարելի է համարել իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ցանկացած տնտեսվարող սուբյեկտի, քանի որ հենց իրավաբանական անձն է իրավասու ստեղծել առևտրային գաղտնիքի պաշտպանությունը կարգավորող լոկալ (տեղական) նորմատիվ ակտեր⁴¹»:

Անդրադառնալով առևտրային գաղտնիքի սուբյեկտների դասակարգմանը և համաձայնելով որոշ հեղինակների հետ՝ կարծում ենք՝ այն կարելի է հանգեցնել հետևյալին.

1. գործարարական գործունեության սուբյեկտ՝ առևտրային գաղտնիքի իրավատերը, որը կարող է հանդես գալ որպես

ա) իրավատեր՝ տեղեկատվությանը օրինաչափ տիրապետող անձ, այդ թվում՝ լիցենզառու,

բ) բարեխիղճ ձեռք բերող՝ տեղեկատվությունը տարածելու իրավունք չունեցող անձը,

գ) տեղեկատվության բովանդակություն ունեցող տեղեկություններն ինքնուրույն և օրինաչափ ստացած անձ, այդ թվում՝ կապալի պայմանագրի, գիտահետազոտական աշխատանքների և փորձարարական-կոնստրուկտորական ու տեխնոլոգիական աշխատանքների կատարման պայմանագրերի կատարման արդյունքում:

2. գործարարական գործունեության սուբյեկտի անձնակազմը՝ առևտրային գաղտնիքի իրավատիրոջ աշխատակիցները,

3. գործարարական գործունեության սուբյեկտի տնտեսական գործունեության նկատ-

³⁵ Տե՛ս «Гражданское право. Том 3» // Под ред. А. П. Сергеева, Ю. К. Толстого, М., 2007. ст. 279.

³⁶ Տե՛ս Сергеев А. П., «Право интеллектуальной собственности в Российской Федерации. Учебник» Издание второе, перераб. и доп. М.: ПБОЮЛ Гриженко Е. М., 2001. ст. 680.

³⁷ Համանմանորեն և «Առևտրային գաղտնիքի մասին» ՌԴ օրենքի 3-րդ հոդվածում:

³⁸ «Առևտրային գաղտնիքի մասին» ՌԴ օրենքի 3-րդ հոդվածի ձևակերպման նմանությամբ:

³⁹ Տե՛ս Кузьмин А. А., «Правовая защита коммерческой тайны» // Правоведение. 1992. No 5. ст. 49.

⁴⁰ Ընդ որում, «Առևտրային գաղտնիքի մասին» ՌԴ օրենքի 10-րդ հոդվածը հիշատակվում է տվյալ անձանց կողմից տեղեկատվության գաղտնիության պաշտպանության միջոցների ձեռնարկման վերաբերյալ:

⁴¹ Տե՛ս Плаксин В. А., Макогон Ю. В., «Коммерческая тайна: правовые проблемы» // Государство и право. 1992. No 8. ст. 76.

մամբ ստուգում իրականացնող պետական կազմակերպությունների և օրգանների պաշտոնատար անձինք,

4. գործարարական գործունեության սուբյեկտին վնաս հասցնելու նպատակով գործարարական գործունեության այլ սուբյեկտի առևտրային գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման մեջ շահագրգիռ գործարարական գործունեության այլ սուբյեկտներն ու նրանց աշխատակիցները (տեղեկատվությունն ապօրինի հիմքերով ստացած, տարածած կամ օգտագործած անձ⁴²),

5. երրորդ անձինք:

Գործարարական գործունեության սուբյեկտ՝ առևտրային գաղտնիք կազմող տեղեկությունների տիրապետողներ հանդիսանում են ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձինք՝ անհատ ձեռներեցները (գործարարներ⁴³):

Գործարարի աշխատակիցներն իրավունք ունեն իրենց ծառայողական ու աշխատանքային պարտականությունների կատարման համար օգտվել առևտրային գաղտնիք կազմող տեղեկություններից: Նման տեղեկատվության նկատմամբ աշխատակիցներից յուրաքանչյուրի հասանելիությունը որոշվում է անձամբ գործարարի կողմից, իսկ օգտագործման պայմանները սահմանվում են գործարարի կողմից մշակված փաստաթղթերով և աշխատանքային պայմանագրով (կոնտրակտով) կամ նրան կից լրացուցիչ համաձայնությամբ⁴⁴:

«Աշխատանքային օրենսգրքի⁴⁵ «Տեղեկատվություն ստանալը» վերտառությամբ 43-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Աշխատանքային հարաբերությունների վերաբերյալ տեղեկատվությունը գործատուն տրամադրում է աշխատողների ներկայացուցիչներին: Տրամադրվող տեղեկատվության չափը պայմանա-

վորվում է սոցիալական գործընկերության մակարդակով»:

Նույն հոդվածի 3-րդ մասն ամրագրում է. «Տեղեկատվությունը ներառում է (...) այլ տեղեկություններ՝ աշխատանքային հարաբերությունների վերաբերյալ, եթե այդ տեղեկությունները պետական, ծառայողական կամ առևտրային գաղտնիք չեն համարվում»:

Գործարարի նկատմամբ ստուգում իրականացնող պետական կազմակերպությունների և օրգանների ծառայողներն առևտրային գաղտնիքի նկատմամբ մուտք են ստանում պետական օրգանների և կազմակերպությունների համապատասխան ակտերի հիման վրա: Գործարարի առևտրային գաղտնիքի մասին տեղեկատվությունը նրանք ստանում են վարչական իրավահարաբերությունների շրջանակներում: Նման տեղեկատվության նկատմամբ նրանց հասանելիության ծավալը սահմանափակվում է ստուգման ուղղվածությամբ, ինչի մասին պետք է նշված լինի ստուգման փաստաթղթերում: Առևտրային գաղտնիքի հրապարակման համար պետական օրգանների և կազմակերպությունների ծառայողները կրում են օրենսդրությամբ սահմանված պատասխանատվություն: Մասնավորապես՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների անցկացման և կազմակերպման մասին» ՀՀ օրենքի⁴⁶ 8-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է «Ստուգումն իրականացնող անձը (անձինք⁴⁷) պարտավոր է (են) (...) առանց տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձի գրավոր համաձայնության՝ չհրապարակել ստուգման ընթացքում իրեն (իրենց) հայտնի դարձած տնտեսավարող սուբյեկտի գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները, գործունեության մասին ցանկացած ծրագրի կամ մշակման, գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի մասին տե-

⁴² Сѣу Министерство образования и науки украины, донецкий государственный университет экономики и торговли, им. М.Туган-барановского, кафедра экономики предприятия, Хлевицкая Т. Б., «Коммерческая тайна предприятия, конспект лекций для студентов дневной формы обучения специальности 7.050107; «Экономика предприятия», Донецк - 2004, ст. 29.

⁴³ Տե՛ս նույն տեղում:

⁴⁴ Տե՛ս նույն տեղում:

⁴⁵ Տե՛ս ՀՀՊՏ 2004.12.21/69(368) Հոդ.1385 ՀՀ աշխատանքային օրենսգրքի:

⁴⁶ Տե՛ս ՀՀՊՏ 2000.06.23/14(112) «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք:

⁴⁷ Քննարկվող օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը թվարկում է այն մարմինները, որոնք Հայաստանի Հանրապետության տարածքում իրենց լիազորությունների շրջանակներում ստուգումներ իրականացնելու իրավասությամբ են օժտված:

ղեկությունները և դրա վերաբերյալ ցանկացած այլ տեղեկատվություն, որը տնտեսավարող սուբյեկտը մտադիր է եղել գաղտնի պահել, և ստուգում իրականացնող անձը (անձինք) տեղյակ է (են) կամ կարող է (են) տեղյակ լինել այդ մտադրության վերաբերյալ, ինչպես նաև առևտրային գաղտնիք համարվող տեղեկություններ⁴⁸»:

Բացի ՀՀ քաղաքացիներից և իրավաբանական անձանցից, առևտրային գաղտնիքի իրավունքից օգտվում են նաև օտարերկրյա քաղաքացիներն ու իրավաբանական անձինք: Վերջիններիս համար, առանց բացառության, գործում են առևտրային գաղտնիքի պահպանության համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բոլոր կանոնները⁴⁹:

Առևտրային գաղտնիքի սուբյեկտների առանձին կատեգորիա են կազմում մրցակցային պայքարում այն օգտագործելու նպատակով գործարարության այլ սուբյեկտի առևտրային գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման մեջ շահագրգիռ անձինք: Այդ անձանց գործողությունները կարող են դիտարկվել որպես մրցակցային հետախուզում կամ արտադրական լրտեսություն⁵⁰:

Հարկ ենք համարում ընդգծել, որ «Տնտեսական մրցակցության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի ա) կետով որպես չբացահայտված տեղեկատվության նկատմամբ անբարեխիղճ մրցակցության տարատեսակ է սահմանվում «արդյունաբերական, առևտրային լրտեսությունը կամ դրան հարկադրումը»: Անբարեխիղճ մրցակցության այս տարատեսակն իր իրավական ամրագրումն է գտել նաև միջազգային իրավական ակտերում:

Այսպիսով, առևտրային գաղտնիքի պաշտ-

պանությունը նրա սուբյեկտների առումով ունի երկակի ուղղվածություն, մասնավորապես՝ ներքին և արտաքին: Ներքին պաշտպանությունը վերաբերում է գործարարական գործունեության սուբյեկտի աշխատակիցներին, իսկ արտաքինը՝ պետական համակարգերի պաշտոնատար անձանց, որոնք իրականացնում են կազմակերպության ստուգում և առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվության ստացման մեջ շահագրգիռ գործարարության այլ սուբյեկտներին⁵¹:

Առաջին դեպքում առևտրային գաղտնիքի պաշտպանությունը ենթադրում է վերջինիս սեփականատիրոջ կողմից առևտրային գաղտնիքի ռեժիմի սահմանում, իսկ երկրորդում՝ նրա նկատմամբ հասանելիություն ստացած անձանց նկատմամբ կարգավորվում է համապատասխան օրենսդրական ակտերով⁵²:

Գտնում ենք, որ առևտրային գաղտնիքի ռեժիմի սահմանման և առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվության գաղտնիության պատշաճ պաշտպանության համար առևտրային գաղտնիքի մասին ՀՀ օրենսդրությունը, ՌԴ օրենսդրության նմանությամբ, պետք է բովանդակի նաև վերջինիս իրավատիրոջ կողմից որոշակի լրացուցիչ կանխարգելիչ միջոցներ ձեռք առնելու պահանջներ, այդ թվում՝ առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվություն բովանդակող իրային կրիչների (փաստաթղթերի) վրա «Առևտրային գաղտնիք» գրիֆի տեղադրումը: Բացի դրանից, կրկին անվտանգության նկատառումներից ելնելով, առաջարկում ենք անց կացնել առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվության նկատմամբ հասանելիություն ունեցող անձանց հաշվառում. այն անձանց, ում այդ տեղեկատվությունը տրամադրվել կամ փոխանցվել է:

⁴⁸ Տե՛ս Министерство образования и науки украины, донецкий государственный университет экономики и торговли, им. М.Туган-барановского, кафедра экономики предприятия, Хлевицкая Т. Б., “Коммерческая тайна предприятия, конспект лекций для студентов дневной формы обучения специальности 7.050107”, “Экономика предприятия”, Донецк - 2004, ст. 30.

⁴⁹ Տե՛ս Բարսեղյան Տ. Կ., Հովհաննիսյան Ա. Ա., «Մտավոր սեփականության իրավունք (ուսումնական ձեռնարկ)» / Երևան 2012թ., էջ 248:

⁵⁰ Տե՛ս Министерство образования и науки украины, донецкий государственный университет экономики и торговли, им. М.Туган-барановского, кафедра экономики предприятия, Хлевицкая Т. Б., “Коммерческая тайна предприятия, конспект лекций для студентов дневной формы обучения специальности 7.050107”, “Экономика предприятия”, Донецк - 2004, ст. 30.

⁵¹ Տե՛ս Министерство образования и науки украины, донецкий государственный университет экономики и торговли, им. М.Туган-барановского, кафедра экономики предприятия, Хлевицкая Т. Б., “Коммерческая тайна предприятия, конспект лекций для студентов дневной формы обучения специальности 7.050107”, “Экономика предприятия”, Донецк - 2004, ст. 31.

⁵² Տե՛ս նույն տեղում:

ՈԱԶՄԻԿ ՄԱՐԻԿՅԱԼ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

**ՀԱՅ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՕՐԻՆԱԿԱՐԳՈՒՄԸ
(ԿՈՂԻՖԻԿԱՑԻԱՆ)**

VII դարի սկզբներին հայ առաքելաշավիղ եկեղեցու հայրերը կարողացան մշակել ազգային-դավանական և քաղաքական ինքնորոշմանը միտված խորատես քաղաքականություն, որի դրոշակակիրն ու ոգեկոչողը Հովհաննես Օձնեցի կաթողիկոսն էր (717-728) մեծանուն բարենորոգիչը և սրբացված իմաստասերը¹, ով հիշվում է «երկրորդ Ոսկեբերան», Թաղետոս և Բարդուղիմեոս առաքյալների, Գրիգոր Լուսավորչի արժանավոր հետևորդ պատվանուններով²: Հունական փայլուն կրթություն ստացած Օձնեցին կարողացավ ազգային-եկեղեցական ոգով նորովի շնչավորել նշանավոր աստվածաբան Բյուրեղ Ալեքսանդրացու քրիստոնեաբանական հայեցողությունը և նրա հետևողությամբ Եփեսոսի՝ 431 թվականի Տիեզերաժողովի հաստատած դավանաբանական սկզբունքները: Նա «առաքյալների նման շրջում էր ամենուր և քարոզում ճշմարիտ հավատքը» - ասվում է Օձնեցու Վարքում³: Հովհաննես Օձնեցին և նրա հետևորդները մշակեցին հայոց եկեղեցու դավանական ուղենիշերը՝ ամբողջացնելով նրա քրիստոնեա-բանական նկարագիրը, երկրում ամրացնելով ժողովրդի հոգևոր համագոյությունը և քրիստոնեական իրավակեցությունը:

Հովհան Իմաստասեր Օձնեցին միջնադարյան Հայաստանի եկեղեցու մատենագրության, մշակույթի և հասարակական-քաղաքական այն նշանավոր դեմքերից և սակավաթիվ գործիչներից մեկն է, որ բարձր գնահատանքի և մեծարանքի է արժանացել դեռևս իր կենդանության օրոք: Հետագայում նա դասվել է հայ եկեղեցու սրբերի կարգը⁴:

Հովհան Օձնեցին թողել է բավական հարուստ գրական ժառանգություն՝ աստվածաբանական, դավանաբանական ճառեր, քարոզներ, հայ եկեղեցու բարեկարգությանը նվիրված կանոններ, ներբողներ, շարականներ: Հովհան Օձնեցուն են վերագրվում «Կանոնագիրք Հայոց» և «Գիրք թղթոց» ժողովածուների կազմումը:

Ժամանակակից պատմագրության համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում Հովհան Օձնեցու եկեղեցական բարեփոխումների, գումարած եկեղեցական ժողովների, քաղկեդոնականության և աղանդավորական շարժումների ու հերձվածների դեմ պայքարի հարցերը: Ներկա աշխատության մեջ փորձ է արվում որոշել Հովհան Օձնեցի կաթողիկոսի դերը և տեղը հայ մատենագրության, փիլիսոփայության, եկեղեցական իրավունքի, հոգևոր երաժրշտության պատմության մեջ: Աշխատությունը պատմական հետազոտություն է, որտեղ Հովհան Օձնեցու գործունեությունը ներկայացված է ժամանակի արտաքին և ներքին հասարակական-քաղաքական իրողությունների և փոխհարաբերությունների հետնախորքի վրա:

Պատմագիտական և բանասիրական կարևոր խնդիր է հայ և օտար սկզբնաղբյուրների հիման վրա Հովհան Օձնեցու գործունեության գնահատումը հայ եկեղեցու պատմության, նրա կանոնակարգի և ծիսակարգի զարգացման մեջ: Հովհան Օձնեցու անվան հետ է կապվում եկեղեցու ազգայնացման մի կարևոր շրջան, երբ տարաբնույթ դավանաբանական վեճերից և վայրիվերումներից հետո հնարավորություն

¹ Տեն Վ.Վարդանյան, «Հայոց եկեղեցու պետաիրավական և գաղափարական շահերի պաշտպանությունը Հովհաննես Օձնեցու կողմից // Սուրբ Հովհան Օձնեցի Հայրապետը և ժամանակը», Ս. Էջմիածին, 2004, էջ 15:

² Տեն «Ճառ Վարդան Վարդապետի ի վերայ Յոհան Օձնեցոյ ըստ խնդրոց Համազասպ Եպիսկոպոսի Հաղբատայ», «Արարատ», 1888, Ժ, էջեր 583-584:

³ Տեն «Սուրբ հայրապետ Յովհաննես Օձնեցի իմաստասերի վարքը», «Գանձասար», Ա, Երևան, 1992, էջ 282:

⁴ Տեն Մ.Պապյան, «Հովհան Իմաստասեր Օձնեցի: Կյանքը և գործունեությունը», Երևան, 1998, էջեր 5-7:

ստեղծվեց հստակեցնել հայ եկեղեցու դավանական դիրքը, կանոնակարգել արարողությունը: Հովհան Օձնեցու հրավիրած 726 թվականի Մանազկերտի ժողովում փաստորեն տեղի ունեցավ հայ եկեղեցու երկու՝ արևելյան և արևմտյան հատվածների միավորումը:

Հովհան Օձնեցու մատենագրական ժառանգության և եկեղեցական գործունեության վերաբերյալ տված իրարամերժ, երբեմն տրամազժորեն հակառակ գնահատականներն արդյունք են այն քաղաքական, դավանաբանական պայքարի, որի հուլովոյթում հայտնվել էր Հայաստանը VII դարի վերջին և VIII դարի սկզբին: Դա պայմանավորվում է նաև պատմագիրների և ուսումնասիրողների քաղաքական և կրոնական համոզմունքներով, որից ելնելով նրանք վերլուծել և գնահատել են Հովհան Օձնեցու գործունեությունն ու վաստակը:

Ուշագրավ իրողություն է, որ թեև Հայաստանն ուներ Օմայանների կողմից ճանաչված կառավարիչ՝ ի դեմս հայոց իշխանի, սակայն թե՛ խալիֆան, և թե՛ նրա արքայնակներն առավելապես հաշվի էին նստում Հովհաննես Օձնեցու հետ, ում գումարած նախարարների և հոգևորականների ժողովներում մշակվում էին երկրի համար կենսական նշանակություն ունեցող ուղենիշ ծրագրեր⁵:

Հովհաննես Օձնեցին ակնառու դեր խաղաց նաև դիվանագիտության ոլորտում, ձեռք բերելով Օմար խալիֆայի հովանավորությունը քրիստոնյա ժողովրդի, մասնավորապես հայերի նկատմամբ՝ հնարավորինս բացառել տալով բռնությամբ նրանց հավատափոխ անելը: Օձնեցին կարողացավ օրինականացնել քրիստոնեական կրոնի ազատ դավանումը և ապահովեց եկեղեցու ապահարկ կացությունը, որի դիմաց խալիֆային նա հավաստեց իր ժողովրդի արաբամետ դիրքորոշումը և քաղկեդոնականության նկատմամբ Հայ եկեղեցու հակոտնյա դիրքը, ինչը դարձավ նրա դավանական ինքնորոշման ազդու գործոնը: Միայն այդ պայմանների ապահովման պարագայում կաթողիկոսը հնարավոր համարեց հայերի հնազանդությունը խալիֆային՝ վերջինիս հա-

վաստելով, որ «ամենայն ազգ իմ ծառայեցենք եզ»:

Ն.Մելիք-Թանգյանն իր հիմնարար երկհատոր ուսումնասիրության մեջ⁶ վերլուծում է Հովհան Օձնեցու ձեռնարկած եկեղեցական բարեփոխումները, պավլիկյանների դեմ գրած ճառը և Կանոնագրքին առնչվող խնդիրները: Առանձին տեղ է հատկացված Մ. Չամչյանի տեսության քննադատությանը: Տրված են նաև 719 թվականի Դվինի ժողովի ընդունած կանոնների գրաբար և աշխարհաբար տարբերակները՝ փոքրիկ մեկնաբանություններով: Վերջում հեղինակն անդրադառնում է Մանազկերտի ժողովին և հուլիանոյանների (երևութականներ) դեմ Հովհան Օձնեցու մղած պայքարին:

«Քրիստոնեության պատմություն» բազմահատորյակի հայ եկեղեցու պատմությանը նվիրված հատվածում ֆրանսիացի հայագետ Ժան Պիեռ Մահեն մանրամասն ներկայացնում է Հովհան Օձնեցու կենսագրությունը, գործունեությունը և գրական ժառանգությունը: Ժան Պիեռ Մահեն գտնում է, որ Հովհան Օձնեցին հայ եկեղեցու դավանաբանության և եկեղեցական կարգի հիմնադիրն է, ով պայքարելով զանազան աղանդների և քաղկեդոնականության դեմ, կարողացավ ավարտել հայ եկեղեցու ազգայնացումը և կանոնակարգել նրա գործունեությունը⁷:

Հովհաննես Օձնեցու դարակազմիկ ձեռնարկումներում վառ կերպով դրսևորվեց եկեղեցու պահպանող ոգին, ազգը հոգևորապես, մշակութապես, իհարկե, նաև պետականորեն լիցքավորելու, միաձուլելու և Արևմուտքի օտարափառ եկեղեցիների դավանաբանական բռնություններից ձերբազերծելու կարողությունը: Եկեղեցին կարողացավ մարմնավորել սեփական ժողովրդի իմաստությունն ու կորովը: Անշուշտ, չպետք է անտես առնել նաև այն զորեղ փաստը, որ արաբական խալիֆայության տիրապետության պայմաններում հույժ հրատապ անհրաժեշտություն դարձավ իսլամի կողմից կյանքի կոչված օրինակարգը Հայաստան ներմուծելու կանխարգելումը, մանավանդ որ իսլամը նաև սրբազնագործված կենսակերպ էր, ուստի խա-

⁵ Տե՛ս «Ճառ Վարդան Վարդապետի ի վերայ Յոհան Օձնեցոյ ըստ խնդրոց Համազասպ եպիսկոպոսի Հաղբատայ», «Արարատ», 1888, Ժ, էջ 584:

⁶ Տե՛ս Մելիք-Թանգեան, «Հայ եկեղեցական իրավունքը», Հատոր 1 և 2, Շուշի, 1903:

⁷ Տե՛ս «Histoire du Christianisme, tome 4», Leglise Armenienne de 611 a 1066, Desclee, 1993.

լիֆայությունը գերիշխողի իրավունքով կարող էր այն պարտադրել նաև հայ ժողովրդին՝ խաթարելով հայրենադավան բարքերն ու սովորույթները, ինչը բնականաբար խիստ բացասական հետևանքներ կունենար քրիստոնեական կրոնի ու կենսակերտվածքի, հայոց ազգային ինքնագոյկեցության հարատևման առումով:

Կուռ ու միասնական օրինագրքի (կանոնագրքի) ստեղծմամբ հաստատուն հիմքերի վրա էր դրվում նաև հայոց եկեղեցու դատաստանական իրավագրությունը: Այն նաև սահմանում էր դավանական այն ուղենիշերը, որոնք հիմք էին դառնալու հետագա դարերի հայ առաքելական եկեղեցու քրիստոնեաբանության ամբողջական ու ավարտուն նկարագիրն անաղարտ պահելու համար: Հայոց կանոնագրքի ստեղծումն ուներ նաև գաղափարական սուր հնչեղություն, քանի որ նրանում ամփոփված կանոնները սահմանորոշում էին նաև Հայաստանի հոգևոր զարգացման ընթացքն ու գաղափարական խնդիրներն ուղենշող սկզբունքները: Հայոց կանոնագիրքը դարձավ Օձնեցու գործունեության փառապսակը: Կանոնական ցաքուցրիվ բնագրերն իմի զետեղելով՝ նա ստեղծեց միասնական օրինագիրք՝ Հայոց կանոնագիրքը, որը դառնալու էր ազդու միջոց օտար դատաստանագրքերի մուտքը Հայաստան կանխելու, հայրենադավան օրինակարգը պահպանելու համար:

Հովհան Օձնեցին Կանոնագրքում իմի է հավաքել և դասակարգել առաքելական, տիեզերական և հայ եկեղեցու սահմանած այն կանոնները, որոնք բխում են հայ եկեղեցու ավանդական դավանանքից և սահմանում նրա արարողակարգն ու ծիսակարգը: Սակայն Հովհան Օձնեցին չի սահմանափակվել միայն կանոնները հավաքելով և իմի զետեղելով, փաստորեն, նա կատարել է լուրջ հետազոտական աշխատանք և կանոնական ցաքուցրիվ բնագրերից ժողովածու կազմելուց զատ՝ կանոնախմբերի սկզբում դրել է իր հետազոտական արդյունքները՝ առանձին կանոնախմբերի ստեղծ-

ման ժամանակի և պատճառների մասին տեղեկություններ, ինչպես նաև կանոնախմբերի բովանդակության համառոտ ցանկեր: Կանոնագիրքը կազմելիս՝ Օձնեցին առաջնորդվել է ոչ թե ժամանակագրական կամ հեղինակայնության սկզբունքով, այլ հայ եկեղեցու տեսանկյունից կանոնախմբերի առավել կարևորությամբ:

Հարկ է նշել, որ Կանոնագիրքը մեկ խմբագրությամբ չի հասել մեզ. իր դարավոր պատմության ընթացքում այն ճյուղավորվել, մշակվել, խմբագրվել է մի քանի անգամ: Ս. Տիգրանյանը նկատում է, որ Կանոնագիրքն ինքնին պատմական մի հավաքածու է ոչ միայն իր բովանդակած կանոնադրությունների որպիսությամբ, այլև իր իսկ՝ որպես հավաքածու կազմվելու, գոյանալու և զարգանալու ընթացքով, քանի որ այն դարերի ընթացքում մաս-մաս է հավաքել իր ներկա կազմը⁸: Հետևաբար, Կանոնագրքի կազմվելը, զարգանալն իր պատմությունն ունի, դարավոր պատմությունը: Պայմանավորված վերոնշյալ հանգամանքներով՝ ուսումնասիրողների կողմից առանձնացվել են Կանոնագրքերի ձեռագրական խմբեր: Հիշատակելի է հատկապես Ս.Տիգրանյանի աշխատանքը, որով Կանոնագրքի հետազոտության որակական նոր փուլ սկսվեց, նա առաջին ձեռագիր Կանոնագրքերը դասակարգեց 5 խմբերի՝ А-Е, և փորձեց ցույց տալ այդ խմբերի հիմնական առանձնահատկությունները⁹: Այս աշխատանքն էլ հետագայում զարգացվեց և իր ամփոփումը գտավ Վ.Հակոբյանի կողմից ձեռագրական խմբերի ուսումնասիրության մեջ և «Կանոնագիրք Հայոց»-ի գիտաքննական բնագրի կազմումով (Ա խմբի 57 կանոնախմբերի ընդգրկմամբ):

Մինչև Հովհան Օձնեցու Կանոնագրքի կազմումը հունական եկեղեցում հայտնի էին աշխարհիկ և եկեղեցական օրենքների ու կանոնների Թեոդոսյան և Հուստիկյան ժողովածուները, որոնք, ըստ Մ.Օրմանյանի, ծանոթ էին Հովհան Օձնեցուն և որպես ուղեցույց են ծառայել նրան: Սույն փաստը մեկ անգամ ևս խոսում է այն մասին, որ Հովհան Օձնեցին քաջա-

⁸ Տես Ս.Տիգրանյան, «Հայոց իրավունքի պատմության ներածություն», Յերեվան, 1923, (մեքենագրված, ձեռագրի իրավունքով), էջ 136:
⁹ Տես Կիրակոսյան Ս., «Древне-армянская книга канонов. Очерки описания и исследования памятника, описательная часть», Петроград, 1918.
¹⁰ Տես «Յովհաննու Իմաստասիրի Աձնեցոյ մատենագրութիւնք», Վենետիկ, 1833:

ծանոթ էր հունարենին, հունական մշակույթին և նախանձախնդիր արևմտյան քաղաքակրթության նվաճումները հայ իրականության մեջ ներմուծելուն:

Մեծ է Հովհան Օձնեցու սահմանած դավանական կարգի ազդեցությունը հայ եկեղեցու դավանանքի և ծիսակարգի հետագա զարգացման վրա¹⁰: Դա արտահայտվում է հետագա հայ մատենագրության և աստվածաբանական, մեկնողական գրականության մեջ: Մասնավորապես, Խոսրով Անձևացին, X դարում, իր «Մեկնություն սրբոյ պատարագի» աշխատության մեջ լայնորեն օգտվել է 719 թվականի Դվինի և Մանազկերտի եկեղեցական ժողովներում Հովհան Օձնեցու սահմանած հայ եկեղեցու արարողակարգի և ծիսակարգի դրույթներից¹¹: Հենվելով հիմնականում VIII դարում ձևավորված ծիսակարգի վրա՝ Խոսրով Անձևացին իր աշխատության մեջ մեկնաբանում է սուրբ պատարագի խորհուրդը՝ հայ եկեղեցու դավանական սկզբունքների ըմբռնողությամբ:

Հովհան Օձնեցու գումարած Մանազկերտի եկեղեցական ժողովն իր գրավոր վճռով և ընդհանուր հաստատությամբ դարձավ Ներսես Շնորհալու կազմելիք դավանաբանական ձեռնարկի հիմնաքարը և գլխավոր պաշտպանողական խարիսխը¹²: X-XIV դարերում, երբ նորից օրախնդիր էր դարձել քաղկեդոնականության դեմ պայքարի հարցը, հայ հոգևորականներն ու քաղաքական գործիչներն արդեն իրենց ավելի վստահ և պաշտպանված էին զգում: Երկրաբնակ և քրիստոնեական մյուս եկեղեցիներն այլևս չէին կարող հայ եկեղեցուն մեղադրել հերձվածողության մեջ: Ցանկացած մեղադրանքի պատասխանելու համար հայ եկեղեցին ուներ ավանդույթ, պաշտոնական պատմություն և դարեր ի վեր կանոնակարգված գործելակերպ:

Կանոնագիրք Հայոցը ողջ միջնադարի ընթացքում դիտվել է իբրև, իրավաբանական ակտերի պաշտոնական ժողովածու, որի կանոնները բազմիցս օգտագործվել են նաև քաղաքացիական օրենսգրքերում, հաստատագրվել

են վիմագիր արձանագրություններում: Թեպետ Հովհաննես Օձնեցու կազմած Կանոնագիրք Հայոցն ունի անհատականացված բնույթ և կրում է այդ հզոր գործչի գործունեության ընդգծված կնիքը, այնուամենայնիվ, իր ստեղծման օրից ժողովածուն պաշտոնական կերպարանք է առել, թեև այդ մասին չի պահպանվել որևէ որոշակի վկայություն¹³: Հովհաննես Օձնեցին իր գործունեությամբ վարում էր բացահայտ հակաքաղկեդոնական քաղաքականություն, որը պետք է գործունեության ազատություն տար նրան արաբների հետ փոխհարաբերություններում և ամրապնդեր Հայոց եկեղեցու ինքնուրույնությունը: Այս մոտեցումը բազմիցս փաստվում է նրա ստեղծած Կանոնագրքի բովանդակությամբ:

Հետագայում առաջացել են Կանոնագրքի տարբեր խմբագրություններ, որոնց հիմքում միշտ առկա է Հովհաննես Օձնեցու ստեղծած կանոնական ժողովածուն, որն արդեն 10-րդ դարի վերջում ընդարձակվել էր և ուներ շուրջ 40 կանոնախումբ: Սկզբնաղբյուրների անուղղակի վկայություններով պարզվել է նաև, որ Անանիա Մոկացին և Մխիթար Գոշն օգտագործել են Կանոնագրքի ընդարձակված այս խմբագրությունը¹⁴:

Հովհաննես Իմաստասերի կատարած ազգանպաստ գործի հիմնական նպատակն էր հայ ժողովրդի քաղաքական միասնության վերականգնումը, հայ ժողովրդի և հայ եկեղեցու ինքնուրույնության պահպանումն ու ամրապնդումը, ինչպես նաև հասարակության տարբեր խավերի ուժերի համախմբումը և պայքարը ընդդեմ արտաքին թշնամիների՝ բյուզանդացիների և արաբների: Հովհաննես Իմաստասերի հետնորդները շարունակեցին նրա գործը և այն հարստացրին նոր կանոնախմբերով: Ինչպես նշեցինք, 10-րդ դարի վերջին «Կանոնագիրք Հայոց»-ը արդեն պարունակում էր 40 կանոնախմբեր, որոնցից 1-24-ը Օձնեցու համակարգված կանոնախմբերն են, իսկ 25-40-ը հետագա դարերի ընթացքում ընդունված կանոնախմբերը:

● ¹⁰ Այս մասին տես «Commentary on the Divine Liturgy by Xosrov Anjewaci», Translated with an introduction by S. Peter Cowe New York, 1991, introduction.
¹¹ Տես Մելիք-Թանգյան, «Հայ եկեղեցական իրավունքը, գիրք Ա», Շուշի, 1903, էջ 407:
¹² Տես Խ.Սամուելյան, «Հին Հայ իրաւունքի պատմութիւնը», հ. Ա, էջեր 47 և 49:
¹⁴ Տես «Կանոնագիրք Հայոց, հ. Բ», էջ ԻԹ:

Մեզ են հասել ընդհանուր թվով 70-100 կանոնախմբեր, որոնք ընդգրկում են 1000-1500 կանոններ¹⁵:

Ինչպես վերը նշել ենք, «Կանոնագիրք Հայոց»-ի գիտաքննական բնագիրը գիտական բարեխղճությամբ պատրաստվել և հրատարակվել է Վազգեն Հակոբյանի աշխատասիրությամբ¹⁶:

Այդ աշխատությունից ինչ-ինչ պատճառներով դուրս են մնացել մի շարք արժեքավոր կանոնախմբեր, մասնավորապես Դավիթ Ալավկաորդու «Կանոնադրությունը», Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրականը», Սիսի 1243 թվականի Եկեղեցական ժողովի կանոնական որոշումները:

Հովհան Օձնեցի կաթողիկոսի գործունեության մեջ կարևոր տեղ է գրավում Կանոնագիրք Հայոցի կազմումը: Այն, ըստ էության, Հովհան Օձնեցու եկեղեցական բարեփոխումների ամփոփումն էր և հաստատագրումը: Հայ եկեղեցու դավանանքը և արարողակարգը քաղկեդոնականության և տարաբնույթ աղանդների ու հերձվածների ազդեցություններից հեռու պահելու նպատակով է Հովհան Օձնեցին կազմում «Կանոնագիրք Հայոցը», իր իսկ հիմնավորմամբ՝ որպես «լուսաշափղ ճանապարհ առ

Աստուած՝ հնագանդութիւն ընդհանուր հաւատացելոց Քրիստոսի»: Օձնեցին գրում է. «Կազմեցին սուրբ հարքն զկանոնական բանից դիտատրութիւն, զի որք յերկնային հրաւիեալ են ի բնակութիւն մարդկան տարակարծ խոհակաւնութեամբ, նովաւ ընթացեալքին պատակն հասցեն բարեգործութեան, եւ յանդիմանեալ խոշտանկեսցեն ինքնակամութեամբ գնացեալն կամեցալքն: Եւ վասեզի ոմանք առոմ անս և ոչ ամենեքին առամ են եսեան սոքա սերմանեալք, կամեցայ զբովանդակ զառին ոցան էն կանոնական սահմանեալ բանի մի ում տեղոջ գեղեցկագործ մատենիւ ի հայրապետանոցի աստ արմատա ցուցանել», - այսպես է պատճառաբանում կանոնագրքի կազմումը Հովհան Օձնեցին¹⁷:

Հայ իրականության մեջ Կանոնագիրքը իրավաբանական փաստաթղթերի առաջին մեծ ժողովածուն է, հայկական «Corpus juris canonici»-ն: Կանոնագրքի դերը և նշանակությունը հայ եկեղեցու պատմության մեջ դժվար է գերազնահատել: Հետագա դարերում լրացվելով նոր կանոններով և կանոնախմբերով՝ այն իր հիմնական նշանակությամբ առ այսօր ծառայում է Հայ Առաքելական եկեղեցուն:



¹⁵ Տե՛ս Акопян В.А., “Армянская книга канонов и ее редакции”. Автореферат... док. ист. наук. Ереван, 1967.

¹⁶ Տե՛ս «Կանոնագիրք Հայոց», հ. Ա, Երևան, 1964, հ. Բ, 1971:

¹⁷ Տե՛ս «Կանոնագիրք Հայոց», աշխ. Վ. Հակոբյանի, հ\ր. Ա. Եր. 1964, էջեր 535-536:

ՆԱԻՐԱ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

«Վստահական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի ասպիրանտ, ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի քարտուղարության պետ, ՀՀ քաղաքացիական ծառայության առաջին դասի խորհրդական»

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵՎԱՎԱՐՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՅՊԱՇՏՈՆՅԱՆՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ (ՄՈՒՆԻՑԻՊԱԼ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ) ՆՐԱՅՎԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԸՍՏ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Եվրոպական խարտիայի հիմնական սկզբունքը կայանում է նրանում, որ համայնքի բնակչությունն ինքնուրույն, իր պատասխանատվությամբ և ելնելով տեղական բնակչության շահերից լուծում է պետական գործերի մի զգալի մասը, որոնք ունեն տեղական նշանակություն¹: Դրանում է կայանում ժողովրդավարության դրսևորումը տեղական մակարդակում:

Է.Հ. Օրդյանը նկատում է, որ «Տեղական ինքնակառավարման մարմինների առանձնահատուկ գծերից մեկն այն է, որ տեղական ինքնակառավարման մարմինը միաժամանակ և՛ ներկայացուցչական, և՛ գործադիր մարմին է: Մի կողմից ինքնակառավարման կազմակերպումն իրենից ներկայացնում է տարածքային ներկայացուցչության ընտրովի համակարգ, որի արդյունքում բնակչության կողմից ընտրվում է համայնքի ղեկավար և ավագանի, իսկ մյուս կողմից՝ տեղական ինքնակառավարման մարմինը կենտրոնական իշխանությունների գործակալն է, որը պետության անունից որոշակի տարածքում իրականացնում է պարտադիր և պետության կողմից պատվիրակված լիազորություններ²»:

Համայնքի բնակչությունն իր ինքնակառավարումն իրականացնում է ընտրված տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետ՝ ՏԻՄ) միջոցով, որոնք էլ իրենց հերթին հաշվետու և պատասխանատու պետք է լինեն

նախ և առաջ հենց համայնքի բնակչության առջև: ՏԻՄ-երին որոշակի լիազորություններով օժտելը հանգեցնում է դրանց կատարման համար պատասխանատվության առաջացման:

Ինչպես նշում է պրոֆեսոր Օ.Ե.Կուտաֆինը՝ «Տեղական ինքնակառավարման մարմինների և տեղական ինքնակառավարման մարմնի պաշտոնյաների պատասխանատվությունը դա անբարենպաստ իրավական հետևանքներն են, նրանց կողմից հակաօրինական որոշումների ընդունման, իրենց խնդիրների և լիազորությունների ոչ պատշաճ կատարման համար»³:

Մունիցիպալ պատասխանատվությունը կարող է վրա հասնել ոչ միայն դիտավորյալ գործողություններ կատարելու դեպքում, այլ նաև անգործության, անկարողության, ինչպես նաև տեղական նշանակության հարցերի լուծման ընթացքում անփութություն և անուշադրություն ցուցաբերելու հետևանքով:

Ինչպես նշվում է Ա.Ա.Կոչերգինայի ատենախոսության մեջ. «Պատասխանատվության ինստիտուտը մունիցիպալ իրավունքում բարդ կատեգորիա է, քանի որ այն բաղկացած է ինչպես միայն մունիցիպալ հարաբերություններին բնորոշ պատասխանատվության ձևից՝ անվստահության հայտնում, այնպես էլ վարչական և քրեական պատասխանատվությունից⁴»:

Մունիցիպալ-իրավական պատասխանատվությունը կարելի է համարել համալիր իրավա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 91 2016

¹ Տե՛ս «Տեղական ինքնակառավարման մասին» Եվրոպական խարտիա, 1990թ., հոդված 3:
² Տե՛ս «Տեղական ինքնակառավարման հիմունքները», Է.Հ. Օրդյան, Երևան, 2000թ., էջ 298:
³ Տե՛ս Օ.Ե.Кутафин, В.И.Фадеев, “Муниципальное право Российской Федерации”, М. 2006. ст 645.
⁴ Տե՛ս <http://www.dslib.net/konstitucion-pravo/municipalno-pravovaja-otvetstvennost-glav-municipalnyh-obrazovaniy-i-deputatov.html>

կան պատասխանատվություն: Այն ինքնուրույն, համալիր, յուրահատուկ և բարդ իրավական երևույթ է:

Մունիցիպալ պատասխանատվությունը կարելի է բաժանել երեք բաղադրիչի, մասնավորապես.

1) վստահության կորուստը, կամ անվստահություն հայտնելը (մունիցիպալ՝ սահմանադրական պատասխանատվություն),

2) վարչական պատասխանատվություն,

3) քրեական պատասխանատվություն:

Դիտարկենք այդ բաղադրիչներից առաջինը՝ «վստահության կորուստը»:

Համայնքի բնակչության առջև ՏԻՄ-երի և դրանց պաշտոնյաների պատասխանատվության ձևերից կարևորը՝ «վստահության կորուստն» է: Այս իրավական հասկացությունը ոչ միայն տեղական ինքնակառավարման գաղափարախոսության համար է գլխավոր բաղադրիչ հանդիսանում, այլ նաև ընդհանրապես ժողովրդավարության համար:

«Վստահության կորստի» հասկացությունը կարելի է կիրառել միայն ընտրովի պաշտոնների նկատմամբ: Տվյալ դեպքում դա համայնքի ղեկավարն է և ավագանին:

ՏԻՄ-երի և դրանց պաշտոնյաների նկատմամբ պատասխանատվության ցենզի և դրանց գործունեության նկատմամբ համայնքի բնակչության կողմից հսկողության մեխանիզմի առկայությունն ապահովվում է, որպեսզի ՏԻՄ-ի ղեկավարների գործունեությունը բխի համայնքի բնակչության շահերից:

«Վստահության կորստի» եզրույթը կիրառվել է 1995 թվականի «Տեղական ինքնակառավարման կազմակերպման ընդհանուր սկզբունքների մասին» Ռուսաստանի Դաշնության օրենքում, սակայն 2003 թվականի նույնանուն օրենքում այն արդեն բացակայում է⁵:

Նման եզրույթ բացակայում է և՛ 1995 թվականին (չգործող⁶), և՛ 2002 թվականին ընդունված (գործող) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներում⁷:

Դրա փոխարեն ՀՀ Սահմանադրության

109 հոդվածում և գործող «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում (այսուհետ՝ Օրենք) կիրառվում է այլ մոտեցում, մասնավորապես՝ ՏԻՄ-երի ղեկավարներին «պաշտոնանկ անելը»:

Այսպես՝ համաձայն 1995 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 109 հոդվածի՝ մարզպետի ներկայացմամբ կառավարությունն օրենքով նախատեսված դեպքերում կարող է պաշտոնանկ անել համայնքի ղեկավարին⁸:

2005 թվականի նոյեմբերի 27-ի սահմանադրական բարեփոխումների արդյունքում խմբագրվեց նաև ՀՀ Սահմանադրության 7-րդ գլուխը: Ըստ Սահմանադրության 109 հոդվածի նոր շարադրանքի՝ համայնքի ղեկավարը կառավարության կողմից պաշտոնանկ է արվում միայն Սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա: Այդ հոդվածի նախկին տարբերակում սահմանադրական դատարանի եզրակացությունը չէր պահանջվում: Ինչպես տեսնում ենք ՏԻՄ-ի ղեկավարին պաշտոնանկ անելու գործընթացն այսուհետ իրականացվում է ավելի բարդ ընթացակարգով՝ պահանջվում է ո՛չ միայն մարզպետի ներկայացումը, այլ նաև Սահմանադրական դատարանի եզրակացությունը:

2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեի արդյունքում փոփոխված ՀՀ Սահմանադրությունում այս հարցի շուրջ կատարվեցին արմատական փոփոխություններ: Բարեփոխված Սահմանադրությունից ընդհանրապես հանվեց ՏԻՄ-ի ղեկավարի «պաշտոնանկ անելու» գաղափարը: Իսկ հոդված 182-ի 4-րդ մասը սահմանում է, որ համայնքի ղեկավարը պատասխանատու է համայնքի ավագանու առջև⁹: Այս իրավակարգավորումը չի պատասխանում այն հարցին, թե համայնքի բնակչի՝ այդ ղեկավարի բուն ընտրողի առջև ՏԻՄ-ի ղեկավարն արդյոք պատասխանատվություն չի կրում:

ՀՀ Օրենքում «վստահության կորստի» գաղափարը փոխարինված է «պաշտոնանկ անելու» եզրույթով: Պաշտոնանկ անելու առաջարկություն ներկայացնելու իրավասությունը տրված

⁵ Տե՛ս «Об общих принципах организации местного самоуправления в Российской Федерации» закон РФ, 2003.

⁶ Տե՛ս «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, 1995թ.:

⁷ Տե՛ս «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, 2002թ.:

⁸ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, 1995թ., հոդված 109:

⁹ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, 2015թ., հոդված 182:

է մարզպետին: Այդ առաջարկի հիման վրա էլ ՀՀ կառավարությունը որոշում է ընդունում ՏԻՄ-ի ղեկավարին պաշտոնանկ անելու մասին:

Պաշտոնանկ անելու նման մեխանիզմի առկայության դեպքում ՏԻՄ-երը հայտնվում են գործադիր իշխանությունից կախյալ վիճակում: Դրանով կարծում ենք, որ խախտվում է նաև Օրենքի 70-րդ հոդվածի դրույթը, որի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները պետական կառավարման մարմինների մասը չեն¹⁰: Նման իրավակարգավորումից բխում է, որ համայնքի բնակչին՝ ընտրողին, վերապահված չէ իր կողմից ընտրված համայնքի ղեկավարին կամ ավագանու անդամին անվստահություն հայտնելու հնարավորություն, ինչը (անվստահություն հայտնելը) համայնքի բնակչության կողմից «պատժամիջոցի» կիրառման ձև է: Այսինքն ընտրում է համայնքի բնակչությունը, իսկ պատժամիջոց է կիրառում գործադիր իշխանությունը:

Կարծում ենք, որ այս մոտեցման պարագայում խաթարվում է ժողովրդավարության գաղափարախոսությունը, քանի որ ընտրելու իրավունք ունեցող համայնքի բնակչությունը զրկվում է թերացած կամ վատ աշխատող ՏԻՄ-ի ղեկավարի, ավագանու անդամի նկատմամբ պատժամիջոց կիրառելու հնարավորությունից:

«Տեղական ինքնակառավարման կազմակերպման ընդհանուր սկզբունքների մասին» 2003 թվականի ՌԴ օրենքի 70-րդ հոդվածը սահմանում է, թե ում առջև են պատասխանատու տեղական ինքնակառավարման մարմինները և դրանց պաշտոնատար անձինք:

Այսպես՝ դրանք պատասխանատու են.

ա) տեղի բնակչության առջև,

բ) պետության առջև,

գ) ֆիզիկական և իրավաբանական անձանց առջև¹¹:

Ի տարբերություն ՌԴ վերոհիշյալ օրենքի մեր Օրենքում բացակայում է դրույթը, որը կսահմաներ, թե ում առջև են պատասխանատու ՏԻՄ-ի ղեկավարը կամ դրանց պաշտոնյաները: Օրենքի 20-րդ հոդվածը սահմանում է համայնքի ավագանու պարտականությունները,

32-45-րդ հոդվածները վերաբերում են տարբեր բնագավառներում ՏԻՄ-ի ղեկավարի գործունեությանը, սակայն նրանց պատասխանատվությանն Օրենքն ոչ մի դրույթով չի անդրադառնում:

Օրենքի մի շարք հոդվածներ ամրագրել են այն դեպքերը, երբ համայնքի ղեկավարը և ավագանին կարող են պաշտոնանկ արվել: Մասնավորապես՝

1. համայնքի ավագանին կարող է համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու մասին առաջարկություն անել համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը չհաստատելու դեպքում¹²,

2. մարզպետը կարող է համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու մասին առաջարկություն ներկայացնել.

- համայնքի ղեկավարի կողմից համայնքի բյուջե փաստացի ստացված եկամուտների սահմաններում պարտադիր լիազորությունները չկատարվելու կամ պետության պատվիրակած լիազորություններն անբավարար կատարվելու դեպքում,
- երբ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշմամբ անվավեր են ճանաչվել համայնքի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող մի շարք որոշումներ,
- մեկ տարվա ընթացքում համայնքի ղեկավարի կողմից երկու անգամ, սահմանված ժամկետներում, ավագանու նիստ չհրավիրելու դեպքում¹³:

Ինչպես տեսնում ենք շրջակա միջավայրի պահպանության դեմ ուղղված որևէ զանցանք կամ անգամ հանցագործություն հիմք չի կարող հանդիսանալ ՏԻՄ-ի ղեկավարի պաշտոնանկության համար: Սակայն արդի իրավիճակը ցույց է տալիս, որ կարող են լինել դեպքեր, երբ ՏԻՄ-ի ղեկավարի կամ ավագանու որոշումը կարող է համայնքի բնակչության առողջությանը և շրջակա բնական միջավայրին անուղղելի վնաս պատճառել: Հետևաբար արդիական պահանջ է դարձել օրենքի 72-րդ հոդվա-

¹⁰ Տե՛ս «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, 2002թ., հոդված 70:

¹¹ Տե՛ս «Об общих принципах организации местного самоуправления в Российской Федерации» закон РФ, 2003. ст. 70.

¹² Տե՛ս «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, 2002թ., հոդված 69:

¹³ Տե՛ս «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, 2002թ., հոդված 72:

ծի 2-րդ պարբերությունը լրացնել նոր մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «4) երբ համայնքի ղեկավարի կողմից ընդունված որոշման կամ նրա գործողությունների, կամ անգործության հետևանքով, շրջակա բնական միջավայրին և բնակչության առողջությանը պատճառվել է զգալի կամ անուղղելի վնաս»:

Օրենքը համայնքի ղեկավարին և ավագանուն հնարավորություն է ընձեռել դատական կարգով բողոքարկել ՀՀ մարզպետի, ՀՀ կառավարության և մասնագիտական հսկողության բարձրագույն մարմնի կողմից համայնքի ղեկավարին կամ ավագանուն պաշտոնանկ անելու մասին որոշումները¹⁴:

Պաշտոնանկ անելու վերաբերյալ դրույթը, դատական կարգով բողոքարկելը, նախատեսված է նաև 2003 թվականի «Տեղական ինքնակառավարման կազմակերպման ընդհանուր սկզբունքների մասին» ՌԴ օրենքի 24-րդ հոդվածում և եվրոպական շատ երկրների այս ոլորտը կարգավորող օրենքներում:

Մունիցիպալ պատասխանատվության մյուս բաղադրիչներն են վարչական և քրեական պատասխանատվությունները: Քննարկենք ՏԻՄ-երի ղեկավարների և դրանց պաշտոնյաների պատասխանատվության ենթարկելու հիմքերը և հնարավոր ձևերը՝ ըստ վարչական իրավախախտումների վերաբերյալ և քրեական օրենսգրքերի:

Ուսումնասիրելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը՝ պարզում ենք, որ «տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի» կամ «դրանց պաշտոնյաների» նկատմամբ պատժամիջոցների կիրառում նախատեսված է 156.1 (լրացումը կատարվել է 2015 թվականի ապրիլի 29-ի ՀՕ-31-Ն օրենքով), 169.2 (վերջին փոփոխություն՝ 10.09.08թ. ՀՕ-159-Ն օրենքով), 169.3 (28.06.02թ., 20-397-Ն օրենք), 170.6 (վերջին փոփոխությունը 22.12.10թ. ՀՕ-264-Ն օրենք), 189,7 (01.12.03թ. ՀՕ-47-Ն օրենք), 208 (27.11.06թ. ՀՕ-228-Ն օրենք), 210 (27.11.06թ. ՀՕ-228-Ն օրենք), 219.1 (29.04.15թ. ՀՕ-31-Ն օրենք) հոդվածներով:

Սակայն դրանցից և ոչ մեկը ոչ մի առնչու-

թյուն չունի «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածով՝ «Համայնքի ղեկավարի գործունեությունը բնության և շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում» սահմանված լիազորությունների չկատարման կամ թերի կատարման համար ՏԻՄ-ի ղեկավարին կամ դրանց պաշտոնյաներին պատասխանատվության ենթարկելու հարցի հետ:

Ուսումնասիրենք Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի այն հոդվածները, որոնք պատասխանատվություն են նախատեսում բնապահպանական օրենսդրության պահանջները չկատարելու համար:

Այդպիսի դրույթներ են նախատեսված 49-րդ, 50-52-րդ, 54.2-րդ, 54.4-րդ, 61-րդ, 62-րդ, 63.2-րդ, 63.6-րդ, 64-66-րդ, 68-75-րդ, 80-րդ, 80.1-87-րդ, 88-91-րդ, 92-րդ, 93-րդ, 94-րդ, 94.1-րդ, 157-րդ հոդվածի առաջին մասում, 164.4-րդ, 169-ի.19-րդ, 201.1-201.5-րդ հոդվածներում: Սակայն ինչպես տեսնում ենք դրանցից և ոչ մեկում օրենսդիրը չի օգտագործել «տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավար» կամ «դրանց պաշտոնյաները» եզրույթները: Բայց բոլոր այդ հոդվածներում հանդիպում ենք «պաշտոնատար անձանց նկատմամբ» բառակապակցությունը: Ովքեր են այդ «պաշտոնատար անձինք»:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 14-րդ հոդվածը նվիրված է պաշտոնատար անձանց պատասխանատվությանը¹⁵: Ըստ դրա պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները և մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնեական պարտականությունների մեջ:

Այդ հոդվածի բովանդակությունից բնավ չի հետևում, որ ՏԻՄ-ի ղեկավարը կամ դրանց պաշտոնյաները Օրենքի 45-րդ հոդվածի պա-

¹⁴ Տե՛ս «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, 2002թ., հոդված 73:

¹⁵ Տե՛ս «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք, 1985թ., հոդված 14:

հանջները չկատարելու համար կարող են ենթարկվել որևէ պատասխանատվության:

«Քրեական օրենսգիրքը բաղկացած է 398 հոդվածներից, որից ընդամենը 7-ում ենք հանդիպում «տեղական ինքնակառավարման մարմին» հասկացությանը: Դրանք են 52-րդ, 91-րդ, 92-րդ, 200-րդ, 308-րդ, 316-րդ և 353-րդ հոդվածները: Սակայն դրանցից և ոչ մեկով ոչ մի պատժամիջոց նախատեսված չէ ՏԻՄ-ի ղեկավարի կամ դրանց պաշտոնյաների նկատմամբ:

Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ կա-

րելի է փաստել, որ ՏԻՄ-ի ղեկավարների և դրանց պաշտոնյաների նկատմամբ.

- մունիցիպալ պատասխանատվության 2-րդ բաղադրիչով՝ վարչական պատասխանատվություն, ամրագրված է վարչական իրավախախտումների վերաբերյալ «Օրենսգրքի մի քանի հոդվածներով,
- 3-րդ բաղադրիչ հանդիսացող՝ քրեական պատասխանատվություն, «Քրեական օրենսգրքի ոչ մի հոդվածով նախատեսված չէ:



ԱՐԱ ԴԱԼԼԱԲՅԱՆ

ՀՀ ԱՆ «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի Արագածոտնի մարզի բաժնի վարիչ, ԵՊԲՀ-ի դատական բժշկության ամբիոնի դասախոս

ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՏԱԲԺՇԿԱԿԱՆ, ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Սույն հոդվածում հեղինակը ներկայացրել է «ինքնասպանություն» հասկացության, ինքնասպանությունների քանակի, ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ, 111-րդ հոդվածներին համապատասխանող հանցագործության օբյեկտիվ կողմի և ինքնասպանությունների դատաբժշկական ու քրեաիրավական հայեցակետերի մասին իր մոտեցումը:

Բանալի բառեր. ինքնասպանություն, սուիցիդ, դատական բժշկություն, դատաբժշկական, քրեական իրավունք, քրեաիրավական, քրեաբանական:

АРА ДАЛЛАКЯН

Заведующий отделом Арагацотнской области
“Судебно-медицинского научно-практического центра” МЗ РА,
Преподаватель кафедры судебной медицины ЕГМУ

СУДЕБНО-МЕДИЦИНСКАЯ, УГОЛОВНО-ПРАВОВАЯ И КРИМИНОЛОГИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА САМОУБИЙСТВ

В настоящей научной статье автор представляет свою позицию на счет понятие “самоубийство”, количества самоубийств, объективной стороны преступления, соответствующей статьям 110, 111 УК РА, а так же судебно-медицинской и уголовно-правовой характеристики самоубийств.

Ключевые слова: самоубийство, суицид, судебная медицина, судебно-медицинский, уголовное право, уголовно-правовой, криминологическая.

ARA DALLAKYAN

Head of the department of Aragatsotn region
RA MOH “Scientific-practical center of forensic medicine”,
Lecturer at the Department of Forensic Medicine of YSMU

THE FORENSIC MEDICAL, CRIMINAL LEGAL AND CRIMINOLOGICAL CHARACTERISTIC OF SUICIDES

The author presents his position in connection with the concept of “suicide”, the suicide rate, *actus reus* of the crimes prescribed by Articles 110 and 111 of RA Criminal Code, as well as forensic medical and criminal legal characteristics of suicides.

Keywords: suicide; cases of suicide; forensic medicine; forensic medical; criminal law; criminal legal, criminological.

ԼԻԼԻԹ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի
իրավաբանական վարչության նորմատիվ
իրավական ակտերի մշակման և իրավական
փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ,
Խ.Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի զարգացման
և կիրառական հոգեբանության ամբիոնի ասպիրանտ

ՀԱՆՑԱՎՈՐ ՎԱՐՔԻ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Տվյալ հոդվածում հեղինակը մանրամասն բացահայտում է հանցավոր վարքի նախադրյալների զարգացման հիմնական օրինաչափությունները և ցույց է տալիս, որ հանցավոր վարքն անձի սոցիալական հատկանիշների խաթարման, սոցիալական վարքի քրեականացման արդյունք է, որը տեղի է ունենում աստիճանաբար, քանի որ անձի վարքը որոշվում է սոցիալական միջավայրով:

Բանալի բառեր. օտարացում, տագնապ, սոցիալիզացիա, հանցածին դիրքորոշում, արժեքային կողմնորոշում:

ЛИЛИТ ОВСЕПЯН

Главный специалист отдела разработки и правовой экспертизы нормативных правовых актов меририи Еревана, аспирант кафедры психологии развития и прикладной психологии Армянского государственного педагогического университета имени Х.Абовяна

ГЕНЕЗИС ПРЕДПОСЫЛКОВ ПРЕСТУПНОГО ПОВЕДЕНИЯ

В данной статье автор подробно раскрывает основные закономерности развития предпосылок преступного поведение и показывает что преступное поведение является результатом криминализации социального поведения, деформации социальных качеств личности, которое происходит постепенно, так как поведение личности детерминировано социальной средой.

LILIT HOVSEPYAN

Chief specialist of the department of elaboration and legal examination of normative legal acts of the Municipality of Yerevan;
PhD student of the Chair of Development and Applied Psychology of Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan

THE GENESIS OF THE PRECONDITIONS OF CRIMINAL BEHAVIOR

In this article the author reveals in great detail the basic regularities of development of the preconditions of criminal behavior, and shows that criminal behavior is a result of deformation of social characteristics of a person and criminalization of social behavior, which occurs gradually, as the behavior of a person is determined by the social environment.

Keywords: alienation, anxiety, socialization, crime stance, value orientation.

ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

ՔՆԱՐԻԿ ԱՎՈՅԱՆ

Հայաստանում ֆրանսիական համալսարանի ուսանող

ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ՀՐԱԺԱՐՈՒՄԸ ԵՎ ԻՐԱՎԱԶԱՓՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հոդվածում քննարկվում են սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելու հասկացությունը, իրավաչափության պայմանները, պետության կողմից սուբյեկտիվ իրավունքը հարկադիր իրականացնելու դեպքերը և այլն:

Հոդվածում նշվում է, որ անձը սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելիս դրսևորում է որոշակի վարքագիծ՝ գործողություն կամ անգործություն, որից օբյեկտիվորեն տեսանելի է սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելու նրա մտադրությունը:

Իրավունքից հրաժարվելն իրավաչափ է, եթե այն կոնկրետ է, գիտակցված և կամավոր:

Բանալի բառեր. սուբյեկտիվ իրավունք, հրաժարվել, էստոպել, սուբյեկտիվ իրավունքի հարկադիր իրականացում:

АРТУР ГАМБАРЯН

Заместитель Председателя Следственного Комитета РА, Доктор Юридических Наук, Доцент

KNARIK AVOYAN

Студент Французского Университета в Армении

ОТКАЗ ОТ СУБЪЕКТИВНОГО ПРАВА И УСЛОВИЯ ПРАВОМЕРНОСТИ

В статье рассматриваются понятие и формы отказа от субъективного права, условия правомерности, допустимость реализации субъективного права со стороны государства. Отказ от права (абандон), есть правомерное решение правообладателя в конкретной ситуации не пользоваться правовой возможностью или прекращать субъективное право в процессе правомпользования.

При отказе от субъективного права лицо проявляет определённое поведение, действие или бездействие, из чего становится очевидным его намерение отказаться от субъективного права.

Отказ от субъективного права считается правомерным, если оно конкретно, осознанно и добровольно.

Ключевые слова: субъективное право, отказаться, эстопель, принудительное исполнение субъективного права.

ATHUR GHAMBARYAN

The Deputy Chairman of the RA Investigative Committee, Doctor of Laws, Associate Professor

KNARIK AVOYAN

Student at the French University of Armenia

WAIVER OF SUBJECTIVE RIGHT AND PRECONDITIONS OF ITS LAWFULNESS

The article discusses the notion of the waiver of a subjective right, the preconditions of its lawfulness, and the cases of compulsory exercise of a subjective right by the state.

It is noted in the article that while waiving his subjective right, a person has certain behavior, that is an action or an omission, which objectively makes his intention of waiver of his subjective right visible.

The waiver of a subjective right is lawful if it is concrete, conscious and voluntary.

Keywords: subjective right, wavier, estoppel, compulsory exercise of a subjective right.

ԱՐԹՈՒՐ ՆԱԶԱՐԵԹՅԱՆ

Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի
«Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական
դատավարություն» ամբիոնի հայցորդ

ՎՃՈՒՐԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն գիտական հոդվածը նվիրված է վճռաբեկ դատարանի լիազորություններին՝ ըստ իրավաբան գիտնականների նեղ և լայն մոտեցումների, որոնց համաձայն այն դիտարկվում է որպես ստորադաս դատարանի որոշումների օրինականության ու հիմնավորվածության ստուգում, ինչպես նաև որպես ստուգման դատավարական հետևանքների արժևորում՝ դրանցից բխող արդյունքներով: Վերլուծելով իրավաբան գիտնականների մոտեցումները հեղինակն արել է մի շարք առաջարկություններ, որոնք վերաբերում են վճռաբեկ դատարանի կողմից գործի վարույթի կարճմանը և այն առանց քննության թողնելուն, ինչպես նաև նրան մասնավոր որոշումներ կայացնելու իրավունքով օժտելուն: Բացահայտված է նաև «արդարադատության արդյունավետություն» հասկացությունը:

Բանալի բառեր. վճռաբեկ վերանայում, լիազորություններ, լիազորությունների դասակարգում, բեկանում, դատական սխալներ, ածանցյալ լիազորություններ, վերահսկիչ գործառույթներ, վճռաբեկ բողոք, փաստական հանգամանքներ:

АРТУР НАЗАРЕТЯН

Соискатель русско-армянского
(славянского) университета

ПОЛНОМОЧИЯ КАССАЦИОННОГО СУДА

Данная научная статья посвящена полномочиям кассационного суда, что согласно мнению ученых-юристов рассматривается как проверка законности и обоснованности решений нижестоящего суда, а также как оценка проверки процессуальных последствий с истекающими из них результатами. Анализируя подходы ученых-юристов, автор сделал ряд предложений, которые относятся к прекращению производства дела кассационным судом и оставлению его без рассмотрения, а также уполномочиванием его правом принимать частные решения. Выявлено также понятие “эффективность правосудия”.

Ключевые слова: кассационный пересмотр, полномочия, классификация полномочий, отмена, судебные ошибки, производные полномочия, контрольные функции, кассационная жалоба, фактические обстоятельства.

ARTUR NAZARETYAN

Post-graduate student of the Russian-Armenian
(Slavonic) University

THE POWERS OF THE COURT OF CASSATION

This scientific article refers to the jurisdiction of the Court of Cassation due to the narrow and broad approaches of lawyer scientists according to which it is viewed as a test of the validity and legality of the lower court decisions, as well as an appreciation of the inspection of procedural implications with its further results.

By analyzing the approaches of the lawyer scientists the author has proposed a number of recommendations relating to the termination of the criminal proceedings and leaving it without consideration by the Court of Cassation, as well as entitling him to the right to make private decisions. The term efficiency of justice is also disclosed.

Keywords: cassation reviews, powers, classification of the powers, quashing, judicial mistakes, derivative powers, supervisory functions, cassation appeal, factual circumstances.

ԱԻՂԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի
ընդհանուր իրավասության դատարանի դատավորի
օգնական, Եվրոպական կրթական տարածաշրջանային
ակադեմիայի Իրավագիտության ամբիոնի ասպիրանտ

**ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԲԱՑԱՈՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Հոդվածը նվիրված է քրեական վարույթին հանրային մասնակիցների մասնակցությունը բացառող հանգամանքների հետազոտությանը: Սույն հոդվածի շրջանակներում հեղինակը վերլուծության է ենթարկում վարույթին դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի մասնակցությունը բացառող հանգամանքների քրեադատավարական շրջանակը, անդրադարձ է կատարում վարույթին քննչական բաժնի պետի և հետաքննության մարմնի պետի մասնակցությունը բացառող հանգամանքների քրեադատավարական կարգավորման հիմնախնդիրներին: Կներկայացվեն մասնագիտական գրականության շրջանակներում հետազոտվող ինստիտուտների կապակցությամբ առկա գիտական դիրքորոշումները: Հոդվածում ներկայացվում են խնդրո առարկա հարցի կապակցությամբ առկա հեղինակավոր գիտնականների մոտեցումները և արտասահմանյան որոշ երկրների իրավակարգավորումները: Կատարված հետազոտության արդյունքում հեղինակը հանգում է եզրակացության, որ քննչական բաժնի պետը և հետաքննության մարմնի պետը ևս պետք է դասվեն քրեական վարույթի բացարկման ենթակա սուբյեկտների շարքին: Վերոգրյալի կապակցությամբ առաջարկվում է համապատասխան փոփոխություն կատարել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածում:

Բանալի բառեր. բացարկ, քրեական վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքներ, վարույթի հանրային մասնակիցներ, դատախազ, քննիչ, հետաքննության մարմնի աշխատակից, քրեական դատավարություն:

АИДА ТАДЕВОСЯН

Помощник судьи суда общей юрисдикции
административного района Шенгавит города
Еревана, аспирант кафедры Юриспруденции
Европейской региональной образовательной академии

**УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОЕ РЕГУЛИРОВАНИЕ ОБСТОЯТЕЛЬСТВ
ИСКЛЮЧАЮЩИХ УЧАСТИЕ ПУБЛИЧНЫХ УЧАСТНИКОВ УГОЛОВНОГО ПРОИЗВОДСТВА
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

Статья посвящена изучению обстоятельств, исключающих участие публичных участников уголовном производстве. В рамках статьи автор анализирует уголовно-процессуальную систему обстоятельств, исключающих участие прокурора, следователя и сотрудника органа дознания. В статье представлены научные подходы известных ученых, а также правовое регулирование некоторых зарубежных стран касающихся изучаемого института. В статье также представлены предложения, касающиеся устранения из производства по делу начальника следственного отдела и начальника органа дознания. В связи с вышеизложенным, предлагается внести изменения 92-ий статье Уголовно-процессуального кодекса РА.

Ключевые слова: отвод, обстоятельства, исключающие участие в уголовном производстве, публичные участники уголовного производства, прокурор, следователь, сотрудника органа дознания, уголовный процесс.

AIDA TADEVOSYAN

Assistant to Judge at the Court of General Jurisdiction of Shengavit Administrative District of Yerevan,
Post-graduate student of the chair of Jurisprudence of European Regional Educational Academy

THE CRIMINAL PROCEDURAL REGULATION OF THE CIRCUMSTANCES EXCLUDING THE PARTICIPATION OF THE PUBLIC PARTICIPANTS OF CRIMINAL PROCEEDINGS IN THE REPUBLIC OF ARMENIA

The article is dedicated to the research of circumstances excluding the participation of the public participants in criminal proceedings. Within the framework of the article the author analyzes the criminal-procedural scope of the circumstances excluding the participation of the prosecutor, the investigator and the agency for inquest in criminal proceedings, as well as touches the issues on criminal procedural regulations of the circumstances excluding participation of the heads of investigation body and the agency of inquest in criminal proceedings. The article also presents the scientific approaches of famous scientists, as well as the legal regulation of some foreign countries related to the studied institute. Based on the study the author concludes that the head of investigation body and the agency for inquest should be included in the list of the subjects that can be challenged. In connection with the foregoing, it is proposed to amend Article 92 of the Criminal Procedure Code of the Republic of Armenia.

Keywords: challenge, circumstances excluding the participation in criminal proceedings, public participants of criminal proceedings, prosecutor, investigator, officer of the agency for inquest, criminal procedure.

* * *

ԱՐՈՒՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Երևանի պետական համալսարանի
Իրավագիտության ֆակուլտետի «Քաղաքացիական
իրավունք» ամբիոնի դասախոս

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱՑՈՂ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՒՔՅԵԿՏԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդվածում ուսումնասիրվում են առևտրային գաղտնիքի նկատմամբ իրավունքի սուբյեկտների, ինչպես նաև՝ նրանց հասկացության և դասակարգման հետ կապված տեսական խնդիրները, օրենսդրական կարգավորման բացերն ու հակասությունները: Տարբեր եզրույթների վերլուծության արդյունքում համանման նշանակությամբ տարբեր եզրույթներն առաջարկվում է փոխարինել այս կամ այն սուբյեկտի բնույթն առավել լիարժեք արտահայտող եզրույթով: Հետազոտության մեջ օրենսդրական կարգավորման և տարբեր հեղինակների տեսակետերի հաշվառմամբ վեր են լուծվում առևտրային գաղտնիքի սուբյեկտների հասկացությունն ու հատկանիշները: Ինչի արդյունքում բացի համընդհանուր ճանաչում ստացած միջազգային պայմանագրերում և այլ նորմատիվ ակտերում ամրագրված հատկանիշներից վեր են հանվում նաև այլ հատկանիշներ, ինչը պայմանավորված է առաջին հերթին շուկայական հարաբերությունների զարգացմամբ: Առաջարկվում է առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվության իրավատիրոջ ներքո ընկալել այն անձին, ով օրինական հիմունքներով տիրապետում է առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվությանը, սահմանափակել է այդ տեղեկատվության մատչելիությունը և նրա նկատմամբ սահմանել է առևտրային գաղտնիքի ռեժիմ: Հոդվածում վեր է հանվում առևտրային գաղտնիքի սուբյեկտների՝ կիրառման համար առավել հարմար դասակարգում: Այսպիսով, հետազոտության արդյունքում վեր են հանվել առևտրային գաղտնիքի իրավունքի սուբյեկտների հասկացությունները, նրանց դասակարգումը, ինչի հիման վրա առաջարկվում է այդ կարգավորումներին տալ օրենսդրական ամրագրում՝ լրացնելով կամ փոփոխելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան հոդվածները:

Բանալի բառեր. առևտրային գաղտնիք, առևտրային գաղտնիքի սուբյեկտ, տեղեկատվություն, տեղեկություն, դասակարգում, քաղաքացիական օրենսգրք:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 91 2016

АРУС АЙРАПЕТЯН

ЕГУ, Юридический факультет,
Преподаватель кафедры Гражданского права

**ОСОБЕННОСТИ СУБЪЕКТИВНОСТИ СОСТАВА ПРАВООТНОШЕНИЙ ВОЗНИКАЮЩИХ
ВОКРУГ ПРАВА НА КОММЕРЧЕСКУЮ ТАЙНУ**

В статье рассматриваются субъекты права на коммерческую тайну, а также теоретические проблемы, пробелы и коллизии в сфере законодательного регулирования связанные с их понятием и классификацией. В результате анализа различных терминов, разные термины с одинаковым значением рекомендуются заменить наиболее точно отражающим характер того или иного субъекта. В исследовании анализируются понятия и признаки субъектов коммерческой тайны с учетом законодательного регулирования и точек зрения различных авторов. В результате чего, кроме общепринятых признаков, закрепленных в международных договорах и иных нормативных актах, проанализированы проявляющиеся признаки, что обусловлено развитием рыночных отношений. Рекомендуется под обладателем информации, составляющей коммерческую тайну, рассматривать лицо, которое владеет информацией, составляющей коммерческую тайну, на законном основании, ограничило доступ к этой информации и в ее отношении установило режим коммерческой тайны. В статье выявляется более разумная для применения классификация субъектов коммерческой тайны. Таким образом, по результатам исследования выявлены определения субъектов права на коммерческую тайну, их классификация, на основании чего рекомендуется зафиксировать эти регулирования на законодательном уровне, дополняя соответствующие нормы Гражданского кодекса РА.

Ключевые слова: коммерческая тайна, субъект коммерческой тайны, информация, классификация, гражданский кодекс.

ARUS HAYRAPETYAN

YSU, Faculty of Law,
Lecturer at the Civil Law Chair

**FEATURES OF THE SUBJECT STRUCTURE OF THE RELATIONS EMERGING
FROM THE TRADE SECRET**

The article discusses theoretical issues on the subjects of the right to trade secret, and their notion and classification, conflicts and gaps related to the legislative regulation. As a result of analyzing various terms it is recommended to replace different terms with the same meaning with the one the most accurately reflects the character of a particular subject. The study analyzes the notion and features of the subjects of trade secrets, taking into account the legislative regulations and points of different authors. As a result, in addition to common features set out in international treaties and other laws and regulations such signs are analyzed, which have emerged due to the development of market relations. It is recommended to perceive under the owner of the information constituting a trade secret the person who owns lawfully the information constituting a trade secret, has limited the access to this information and has set the regime of trade secret over it. The article reveals classification of subjects of trade secrets, which is more reasonable one for practical use. Thus, the study reveals the definition of subjects of the rights to trade secret, their classification, based on of which it is recommended to fix the regulation in legislative level, complementing or amending the relevant provisions of the Civil Code.

Keywords: trade secret, subjects of trade secrets, information classification, Civil Code.

ՌԱԶՄԻԿ ՄԱՐԻԿՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

ՀԱՅ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՕՐԻՆԱԿԱՐԳՈՒՄԸ (ԿՈԴԻՖԻԿԱՑԻԱՆ)

Հոդվածում հանգամանորեն քննարկվում է հայ կանոնական իրավունքի օրինակարգումը: Հայ կանոնական իրավունքի օրինակարգման հիմքը դրել է Հովհաննես Օձնեցի կաթողիկոսը, ով, կանոնական ցաքուցրիվ բնագրերն ի մի բերելով, ստեղծեց մեկ միասնական օրենսգիրք՝ «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն, որն առ այսօր ծառայում է հայ եկեղեցուն:

Բանալի բառեր. կանոն, կանոնական իրավունք, Հովհաննես Օձնեցի, Կանոնագիրք Հայոց, սովորության իրավունք, ընտանեկան իրավունք

РАЗМИК МАРИКЯН

Аспирант инситута философии,
социологии и права НАН РА

КОДИФИКАЦИЯ АРМЯНСКОГО КАНОНИЧЕСКОГО ПРАВА

В статье подробно рассматривается кодификация армянского канонического права. Начало кодификации армянского канонического права установлен католиком Ованес Одзнеци, который собрал разбросанные тексты и создал единый кодекс - “Армянская книга канонов”, который используется армянской церкви до сих пор.

Ключевые слова: канон, каноническое право, Ованес Одзнеци, “Армянская книга канонов”, обычное право, семейное право.

RAZMIK MARIKYAN

PhD Student of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA

CODIFICATION OF ARMENIAN CANON LAW

The article extensively discusses the codification of Armenian canon law. The foundation of the codification of Armenian canon law is laid by Catholicos Hovhannes Odznetsi, who collected the original and scattered texts and created a unified Code - “Armenian canon book”, which is used by Armenian Church till now.

Keywords: canon, canon law, Hovhannes Odznetsi, “Armenian canon book”, customary law, family law

ՆԱԻՐԱ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի ասպիրանտ, ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի քարտուղարության պետ, ՀՀ քաղաքացիական ծառայության առաջին դասի խորհրդական

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿՎԱՐՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ (ՄՈՒՆԻԻՑԻՊԱԼ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ) ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԸՍՏ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ

Յուրաքանչյուր իրավահարաբերությունում, եթե իրավունքի սուբյեկտն օժտվում է որոշակի իրավունքով, ապա դրան հետևում է պարտականությունների շարքը: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը ՏԻՄ-ի ղեկավարների համար սահմանել է մի շարք լիազորություններ, սակայն հարց է առաջանում այդ լիազորությունները չկատարելու կամ թերի կատարելու համար ՏԻՄ-ի ղեկավարի և դրանց պաշտոնյաների համար ինչ պատասխանատվություն է նախատեսված ՀՀ օրենսդրությամբ:

Բանալի բառեր. տեղական ինքնակառավարման մարմիններ, մունիցիպալ, քրեական, վարչական պատասխանատվություն, վստահության կորուստ, պաշտոնանկություն:

НАИРА АЛАВЕРДЯН

Аспирант кафедры юриспруденции Академии государственного управления Республики Армения, Начальник секретариата аппарата министерства охраны природы Республики Армения, Советник первой категории гражданской службы РА

ОТВЕТСТВЕННОСТЬ (МУНИЦИПАЛЬНАЯ ОТВЕТСТВЕННОСТЬ) ОРГАНОВ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ И ИХ ДОЛЖНОСТНЫХ ЛИЦ В СФЕРЕ ОХРАНЫ ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ В СВЕТЕ ЗАКОНОДАТЕЛЬСТВА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

В любых правовых отношениях, когда субъект права наделяется какими-то полномочиями, то, в соответствии с этим, у него возникает ряд обязанностей. Закон РА “О местном самоуправлении” наделил рядом полномочий руководителя местного самоуправления, но возникает вопрос: какую ответственность несут по законам РА, руководители местного самоуправления или их должностные лица, при неисполнении или ненадлежащем исполнении этих полномочий.

Ключевые слова: местное самоуправление, муниципальная, уголовная, административная ответственность, утрата доверия, отставка.

NAIRA ALAVERDYAN

Head of the Secretariat of the Staff of the Ministry of Nature Protection of RA, Post-graduate Student of the Department of Law at Public Administration Academy of the Republic of Armenia

LIABILITIES OF THE HEADS OF THE LOCAL AUTHORITIES AND THEIR OFFICIALS (MUNICIPAL LIABILITY) IN THE FIELD OF ENVIRONMENT PROTECTION ACCORDING TO THE LAW OF THE REPUBLIC OF ARMENIA

In any kind of legal relationships entitlement of the subject of law with some rights entails a number of responsibilities. The Law on “Local authorities” of the Republic of Armenia sets a number of competences for the heads of local authorities, yet a question arises: what liability is envisaged by the law of the Republic of Armenia for implementing those competences incomplete or not implementing at all.

Keywords: local authorities, municipal, criminal, administrative liabilities, trust loss, dismissal.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱԽԱՆՁՆԵՐ

Փառք քեզ հզոր մայր Հայաստան,
Դու հինավուրց մեր սրբավայր,
Զավակներիդ իրավապահ,
Կյանքն էլ կտան քեզ համար:
Երդումին իրենց հավատարիմ՝
Քո մարտիկներն են ծառայում
Ամուր ու կուռ՝ միասնական
Դատախազության համակարգում:

Կրկներգ

Հայաստանի դատախազներ,
Հայրենիքի նվիրյալներ,
Փշոյր ուղով արդարության
Միշտ ընթացեք դուք աննահանջ՝
Դեպի առաջ, դեպի առաջ:

Հայաստանի դատախազներ,
Օրենքների պահապաններ,
Որոշելով ճակատագրեր՝
Բարձր պահենք կոչումը մեր:
Պայքարում ենք, որ մեր երկրում
Լինի օրենք, կարգ ու կանոն,
Պատվար լինենք արդար մարդուն,
Իսկ հանցանքին էլ՝ անզիջում:

Կրկներգ

Մեր այս գործում բարդ ու դժվար
Եղել ենք միշտ պարզ ու արդար:
Աշխատում ենք օր ու գիշեր
Որ վեհ պահենք պատիվը մեր:
Որ մեր ազատ հայրենիքում
Օրենքը գործի անխափան՝
Կանխենք հանցանք, զանցանք, խախտում,
Կերտենք մեր պայծառ ապագան:

Կրկներգ

*Օրհներգի ստեղծման աշխատանքներին ակտիվ և զգալի մասնակցություն է ունեցել
ՀՀ պաշտպանության նախարարության սպայի փան պետի տեղակալ, մայոր
Ա. Գալստյանը: ՀՀ գլխավոր դատախազի հրամանով Ա. Գալստյանը պարգևատրվել է
«Համագործակցության ամրապնդման համար» մեդալով:*